Վ. Մ. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆ 1949

Վ. Մ. ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ա 25024

ԵՐԵՎԱՆ 1949

В. М. АВАКЯН

ИСТОРИЯ КРАСНОГО КРЕСТА Арм. ССР

(На армянском языке)

Ереван, 1949 г.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Վաղուց էր հասունացել Հայկական ՍՍՌ Կարմիր Խաչի ընկերության գործունեությունը ամփոփող մի հանրամատչելի շարադրանքի անհրաժեշտության միտքը, որի իրագործման առաջին փորձն է այս։

Մեր խնդիրն է եղել արխիվային և այլ սկզբնաղբյուրների օգտագործմամբ, շարադրել Հայաստանի Կ. Խաչի ընկերության գործունեության հիմնական էտապները, սովետական ընթերցողին հնարավորություն տալ ծանոթանալու Կարմիր Խաչի կյանքի պատմական կարևորագույն փաստերին, շարադրել ընկերության նպատակները, ինչպես նաև նրա, իբրև մասսայական—հասարակական կազմակերպության ցույցաբերած օգնությունը սովետական ժողովրդի առողջապահության ծառայությանը, նրա ակտիվ մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանում, սոցիալիստական շինարարության տարիներին։

Գրքույկի հիմնական խնդիրը կայանում է՝ օժանդակ ձեռնարկ հանդիսանալ ռեսպուբլիկայի սանիտարասպասարկողական կադրերի—ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի խմբակների, սան-պոստերի, սանիտարական դրուժինների, քույրական դպրոցների, կարմիրխաչական ակտիվի համար, որոնք ըստ իրենց ուսումնական ծրագրերի, պարտավոր են իրազեկ լինել նաև Կարմիր Խաչի ընկերության նպատակներին և գործունեությանն առհասարակ։ Սույն գրքույկի հրապարակումը, հույս ունենք, կվերացնի այն դժվարությունը, որ զգում են սանպաշտպանական հիշյալ կադրերը կարմիրխաչական աշխատանքներին ծանոթանալու գործում։

Եթե, բացի իր այս հիմնական նպատակներից, մեր այս շարադրանքը հետաքրքրություն ներկայացնի նաև ռեսպուբլիկայի առողջապահական ֆրոնտի աշխատողների համար, ինչպես նաև ռեսպուբլիկայի պատմության մոտակա շրջանով զբաղվողների համար, իբրև Հայաստանի պատմության բնագավառներից մեկի շարադրման փորձ, ապա մենք մեզ ավելի քան վարձատրված կհամարենք։

ՀԵՂԻՆԱԿ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՈՒ ԿԱՐՄԻՐ ԿԻՍԱԼՈՒՍՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Կարմիր խաչի գաղափարը Ռուսաստանում ծագել է շատ ավելի վաղ, քան արտասահմանում։

Բժշկական օգնության կազմակերպման գործով զբաղվում էին, անձնական նախաձեռնության կարգով, առանձին անձինք, համայնքներ, բարեգործական ընկերություններ։

17-րդ դարի երկրորդ կեսին, ոչ միայն ռուս վիրավոր ու հիվանդ մարտիկներին, այլ և դերիներին օգնություն ցույց տալու ուղղությամբ, բարձր-մարդասիրական աշխատանք է ծավալում Մոսկովյան պետության ռուս առաջադիմական գործիչ Ֆեոդոր Մ. Ռտիշչևը։

Նրա բազմակողմանի գործունեությունը ուղղված էր մարդկանց տառապանքները թեթևացնելու, մարդկային տարաբախտությունների դեմ պայքարելու, հասարակ մարդկանց կյանքի ծանրությունը թեթևացնելու վրա։ Նա զբաղվում էր հիվանդներին ու վիրավորներին բժշկական օգնություն ցույց տալով ռուս-լեհական պատերազմի (1654 թ.), Լիվոնյան արշավանքի (1656)թ. ժամանակաշրջանում։

Խաղաղ ժամանակ Ռտիշչևը կազմակերպում էր միջոցների հանգանակություն՝ Ղրիմի թաթարների մոտ գերի ընկած ռուսներին ետ գնելու համար, միջոցներ էր ձեռք առնում ռուսների մոտ գերի ընկածների վիճակը թեթևացնելու համար, իր միջոցներով Մոսկվայում պահում էր երկու տուն՝ մեկը զառամյալների, կույրերի ու հաշմանդամների, մյուսը ժամանակավոր օգնության կարիք զգացողների համար և այլն և այլն։

1812 թ. Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում.

ցարական Ռուսաստանի ցածրաստիճան չինովնիկներից մեկը՝ Պեզորավիուսը, լայն գործունեություն է ծավալում՝ հաշմանդամներին, այրիներին և զոհված մարտիկների որբերին օգնություն ցույց տալու ուղղությամբ։

Ռազմադաշտում բժշկական օգնություն ցույց տալու գործում մեծ դեր էին խաղում ժողովրդից ելած ռուս կանայք։ Նրանք իրենց անձնական նախաձեռնությամբ, աշխատելով անձնվիրորեն, արհամարհելով կյանքի նկատմամբ բոլոր վտանգները, մեծագույն մասամբ անասելի ծանր պայմանների մեջ, անում էին հնարավորին ամեն ինչ՝ վիրավորների և հիվանդների տառապանքները թեթևացնելու համար։

Սևաստոպոլի հերոսական պաշտպանության ժամանակ, 1854—55 թ., մինչև ռուս նշանավոր վիրաբույժ, ռազմադաշտային վիրաբուժության հիմնադիր Ն. Ի. Պիրոգովի ժամանումը, իրենց անձնական նախաձեռնությամբ վիրավորներին ու հիվանդներին օգնություն էին ցույց տալիս նավաստիների ու զինվորների կանայք։ Ժողովրդից ելած ռուս կանանց անձնվեր աշխատանքի օրինակ կարող է ծառայել Կորաբելյան արվարձանից ելած Դաշայի և ուրիշների աշխատանքը, որ պատկերել է դրող Սերգեև-Ցենսկին «Սևաստոպոլյան ծանր օրեր» «(Севастопольская страда») էպոպեում։

Զինվորների ու նավաստիների կանանց աշխատանքին բարձր գնահատական է տվել Ն. Ի. Պիրոգովը. «Նշանակալի է, որ ամենահասարակ և չկրթված քույրերը բոլորից ավելի աչքի են ընկնում իրենց անձնազոհությամբ և համբերատարությամբ, իրենց պարտականությունների կատարման ասպարեզում։ Նրանք զարմանալիորեն կարող են հասարակ ու հուզիչ խոսքերով, տառապողների մահիճների մոտ, մեղմել նրանց տանջալից չարչարանքները։ Ուրիշները օգնում են վիրավորներին բուրդերի վրա՝ հենց հշնամու թնդանոթների կրակի տակ։ Շատերը նրանցից զո՞ դարձան հոսպիտալային տարափոխիկ հիվանդությունների»։

Ն. Ի. Պիրոգովի հետ Պետերբուրգից Սևաստոպոլ եկան 120 քույր, պատրաստված Կրեստովոզդվիժենսկայա համայնքի կողմից, որոնք լիապես արդարացրին իրենց պրակտիկ աշխատանքի մեջ։ Ն. Ի. Պիրոգովը, պրոֆ. Խ. Գյուբենետը և ուրիշները հիանալի կարծիքներ են տալիս դթության քույրերի աշխատանքի մասին

և նպատակահարմար են գտնում կանանց բժշկական աշխատանքի այն կիրառումը պատերազմի ժամանակ։

Ռուսական Կարմիր Խաչը կազմակերպվեց 1867 թ. Ժնևի կոնվենցիայի կնքման տարում՝ «Հիվանդ ու վիրավոր մարտիկների խնամատարության ընկերություն» անվան տակ, որը երկու տարի հետո վերանվանվեց «Ռուսաստանի Կարմիր Խաչի ընկերություն», կրճատ՝ ՌԿԽԸ (РОКК)։ Ընկերությունը ներկայացնում էր մի ներփակ, պետական հիմնարկություն, պալատական արիստոկրատիայի գլխավորությամբ։ Ընկերության անդամները հավաքագրվում էին խոշոր բուրժուազիայի, ազնվականության, վաճառականության, բարձր ու միջին չինովնիկության շարքերից։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի շրջանում ընկերության իշխող վերնախավը կազմում էին ժամանակավոր կառավարության նշանակած մարդիկ, որոնք հիմնականում հանդիսանում էին սև հարյուրակային Պետական 4-րդ դումայի ներկայացուցիչները։ Բավական է ասել, որ Գլխավոր վարչության նախագահ էր ընտրված կոմս Պ. Ն. Իգնատևը և անդամներ՝ կոնտրը-ռևոլյուցիայի իսկական ներկայացուցիչները, որոնք գազանային ատելությամբ էին վերաբերվում Սովետական իշխանությանը։ Զարմանալի չէ, որ Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի առաջին իսկ օրերին ի հայտ եկավ Կարմիր Խաչի ընկերության Գլխավոր վարչության ծայրահեղ թշնամական վերաբերմունքը Սովետական իշխանության հանդեպ։ Այդ արտահայտվեց ինչպես սովետական բժշկության շինարարության գործը սաբոտաժի ենթարկելով, այնպես էլ քաղաքացիական կռիվների ժամանակ Սովետական իշխանության դեմ ակտիվորեն պայքարելով։

Կարմիր Գվարդիայի կազմակերպման հետ միաժամանակ ծագեց և պրոլետարական Կարմիր Խաչը։ Պրոլետարական Կարմիր Խաչի միջուկը սկզբնապես կազմեցին Պետրոգրադի ֆաբրիկաների ու գործարանների բանվորուհիները, որոնք ռևոլյուցիայի առաջին իսկ օրերին ստանձնեցին Կարմիր Գվարդիային սպասարկելու գործը՝ կազմակերպված սանիտարական ջոկատների և առաջին օգնության պունկտերի միջոցով։ Այդպիսի ջոկատներ, վիրաբուժական կետեր ու հիվանդանոցներ կազմակերպվեցին Մոսկվայում, բանվորական հասարակայնության կողմից։ Հետագայում Պրոլետարական Կարմիր Խաչի կազմակերպության մեջ մտան քույրեր,

բուժակներ, բժշկական ֆակուլտետի ուսանողներ և առանձին բժիշկներ։

Ընկերներ Լենինն ու Ստալինը, պարտիան, ռևոլուցիայի հենց առաջին օրերին գործնական քայլեր ձեռնարկեցին սովետական առողջապահության կազմակերպման ուղղությամբ։ Պետրոգրադյան Սովետի ռազմառևոլուցիոն կոմիտեին կից 1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) ստեղծվեց բժշկա-սանիտարական բաժին՝ առողջապահության գործը ղեկավարելու համար։ Ժողովրդական Կոմիսարների խորհրդի 1917 թ. դեկտեմբերի 4-ի դեկրետով Գլխավոր ռազմա-սանիտարական վարչության ղեկավարությունը տրվեց բժիշկներ Մ. Ի. Բարսուկովից, Ա. Ն. Վինոկուրովից, Ի. Ս. Վեգերից, Մ. Վ. Գոլովինսկուց կազմված կոլեգիային։ Այդ ժամանակ Ցարական Ռուսաստանից իբրև ծանր ժառանգություն մնացած հասարակական ու բժշկական կազմակերպությունները հայտնաբերեցին խիստ թշնամական վերաբերմունք սովետական առողջապահության բոլոր ձեռնարկումների հանդեպ։ Պարտիան անցկացրեց քաղաքական դաստիարակչական մեծ աշխատանք բժշկական աշխատողների մեջ։

Լավագույն բժիշկներ՝ Ն. Ա. Սեմաշկոն, Զ. Պ. Սոլովյովը, Ի. Վ. Ռուսակովը, Ա. Ն. Սիսինը և ուրիշներ, ակտիվորեն ձեռնամուխ եղան սովետական առողջապահության շինարարությանը։ Գոյություն ունեցող սաբոտաժը լիկվիդացվեց։ Կազմակերպվեց բժշկական աշխատողների Համառուսական Միություն, որը ակտիվորեն ներգրավվեց առողջապահության ռևոլուցիոն վերակառուցման գործին։

Պրոլետարական Կարմիր Խաչը Հոկտեմբերյան օրերին միակ կազմակերպությունն էր բոլոր գոյություն ունեցող բժշկական հասարակական կազմակերպություններից, որ խիստ եռանդագինորեն օգնություն ցույց տվեց Կարմիր Գվարդիային, իսկ հետագայում՝ Ռազմա-սանիտարական Գլխավոր Վարչությանը։ Պրոլետարական Կարմիր Խաչի առաջին ջոկատները գործեցին Ձմեռային պալատը գրոհելու օրը՝ 1917 թ. հոկտեմբերի 25-ին։ Այնուհետև, քաղաքացիական կռիվների ծավալմամբ, Պրոլետարական Կարմիր Խաչի ջոկատները, կետերը և բժշկա-սանիտարական հիմնարկությունները գործեցին ոչ միայն Պետրոգրադում ու Մոսկվայում, այլև քաղա-

քացիական կռիվների բազմաթիվ կարևորագույն տեղամասերում ու ճակատներում։

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1918 թ. դեկրետով Կարմիր Խաչի Ռուսաստանյան ընկերության գլխավոր վարչությունը լիկվիդացվեց և սահմանվեցին Սովետական Կարմիր Խաչի հիմունքները։ Կարմիր Խաչը սովետական նոր հիմքերի վրա վերակազմավորվեց իբրև մասսայական հասարակական կազմակերպություն՝ նրանում բանվորների, գյուղացիների և սովետական ինտելիգենցիայի լայն մասսաների ներգրավմամբ։ Ժողկոմխորհի որոշման մեջ ասված է. «Ընկերությունը օգտվում է լիակատար ինքնավարությամբ և ինքնուրույնությամբ այն հարցերում, որոնք վերաբերում են նրա կազմակերպություններին ու մասնակցությանը կառավարական ու հասարակական միջոցառումներին, և իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով աջակցություն է ցուցաբերում կառավարական բժշկա-սանիտարական օրգաններին՝ հիվանդներին, վիրավորներին ու ռազմագերիներին, ինչպես նաև աղետներից տուժած բնակչությանը օգնելու գործում»։

Հետագայում Սովետական Կարմիր Խաչը Սովետական պետության գոյության ու զարգացման բոլոր փուլերում իր բոլոր ուժերը ուղղել է հարազատ պետությանը օգնելուն։

Սովետական Միության յուրաքանչյուր ռեսպուբլիկա ունի Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի իր ռեսպուբլիկական ընկերությունը, որոնք միավորվում են ՍՍՌՄ Կարմիր Խաչի ու Կարմիր Կիսալուսնի ընկերությունների Միության մեջ (կրճատ՝ ՍՍՌՄ ԿԽ և ԿԿԸՄ)։

19-րդ դարի երկրորդ կեսին, կապիտալիզմի զարգացման և կապիտալիստական երկրների միջև հակասությունների սրման ժամանակաշրջանում, Եվրոպայում առաջանում էին անընդմեջ պատերազմներ։ Տեխնիկայի զարգացման հետ միաժամանակ անսահմանորեն աճում էին պատերազմող երկրների բանակների մարտական կորուստները։

Այդ հաճախակի պատերազմներն էլ ստիպում են պատերազմող երկրների կառավարություններին մեծ ուշադրություն դարձնել զորքերի բժշկական սպասարկմանը։ Բայց, որպեսզի պետական գանձարանը ծախսերով շատ չծանրաբեռնվի, նրանք որոշեցին

զինվորներին օգնություն ցույց տալու գործում ներգրավել մասնավոր և հասարակական բարեգործական ընկերություններին։

1863 թ. հոկտեմբերին Ժնևում կայացավ աշխարհի 16 երկրների բարեգործական կամավոր ընկերությունների առաջին ոչ պաշտոնական խորհրդակցությունը։ Այդ ընկերությունները հանձն առան խաղաղ ժամանակ իրենց երկրներում բժշկական քույրեր, բժշկական պիտույքներ, հիմնականում վիրակապական նյութերի պաշարներ պատրաստելու պարտականությունը՝ դրանք պատերազմի ժամանակ օգտագործելու համար։

Այդ 16 երկրների կառավարությունները պետք է համաձայնվեին ամեն տեսակ աջակցություն ցույց տալու իրենց կամավորական ընկերություններին՝ պատերազմի ժամանակ վիրավորներին ու հիվանդներին օգնություն ցուցաբերելու նրանց պրակտիկ աշխատանքի մեջ։

1864 թ. օգոստոսին Ժնևում կայացավ կոնֆերանս՝ բազմաթիվ երկրների դիպլոմատների և բարեգործական ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։

Այդ կոնֆերանսում, 1864 թ. օգոստոսի 22-ին, կազմվեց և պետությունների պաշտոնական ներկայացուցիչների կողմից ստորագրվեց այսպես կոչված 1864 թ. Ժնևյան կոնվենցիան, որ գործում է ցայսօր, որոշ փոփոխություններով ու լրացումներով։

Համաձայն այդ կոնվենցիայի, այն երկրները, որոնք ստորագրել են այդ կոնվենցիան, պատերազմի ժամանակ ճանաչում են ռազմա- սանիտարական հիմնարկությունների ու նրանց անձնակազմի չեզոքությունն ու անձեռնմխելիությունը։ Ռազմա-սանիտարական հիմնարկությունները պարտավոր են օգնություն ցույց տալ ոչ միայն իրենց, այլև հակառակորդ բանակի վիրավորներին ու հիվանդներին, եթե նրանք գտնվում են տվյալ երկրի տերիտորիայում։

Ժնևի 1864 թ. կոնվենցիան վավերացվեց 10 երկրների՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Իսպանիայի, Շվեյցարիայի և Բադենի Մեծ հերցոգության կողմից։

Մի քանի երկրների ռազմական և միլիտարիստական շրջաններ ի հայտ բերեցին թշնամական վերաբերմունք դեպի «պատե-

բազմի իրավունքների» սահմանափակումը։ Այդ տեսակետից առանձնապես աչքի ընկան գերմանական պետության ռազմական շրջանները։

1867 թ. Ժնևի կոնվենցիան ընդունվեց Ռուսաստանի և բոլոր մնացած պետությունների կողմից, բացառյալ ԱՄՆը, որը միացավ կոնվենցիային միայն 1882 թվականին։

Կոնվենցիայի ստորագրումից հետո բազմաթիվ երկրներում կազմակերպվեցին Կարմիր Խաչի ընկերություններ։ Գործող Կոմիտեն, որ կազմված էր շվեյցարական քաղաքացիներից, վերափոխարկվեց Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի և իրեն նախագահ ընտրեց Գուստավ Մուանյեին, որը և մինչև իր մահը, 1910 թ., մնաց այդ պաշտոնում։ Որոշված էր նույնպես, որ Կոմիտեի մշտական նստավայրը լինելու է Ժնևը։ Կոմիտեի անդամների հեռանալու դեպքում նրանց տեղը ընտրվում էին շվեյցարական քաղաքացիներից։

Կոնվենցիայի համաձայն սանիտարական ծառայության համար էմբլեմ և տարբերակիչ նշաններ ընտրվեց Շվեյցարիայի ազգային դրոշակը՝ դույների հակառակ դասավորությամբ, այսինքն՝ կարմիր խաչը ճերմակ ֆոնի վրա։

Այդ նշանից էլ Թուրքատրեցին օգտվել այն կամավորական ընկերություններին, որոնք ունեին վիրավորներին ու հիվանդներին օգնություն ցույց տալու նպատակ։

Թյուրքիան և Իրանը հրաժարվեցին օգտագործել այդ նշանը, քանի որ նա համընկնում էր քրիստոնեական կրոնական էմբլեմին։ Միջազգային Կոմիտեի համաձայնությամբ, Թյուրքիան, իբրև բանակի սանիտարական ծառայության և կամավորական ընկերությունների տարբերակիչ նշան, ընտրեց կարմիր կիսալուսինը, իսկ Իրանը՝ առյուծի ու արևի էմբլեմը։

ԴԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԴՐՇՆԱԿՑԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

«Ցարական Ռուսաստանը ամեն տեսակ ճնշման օջախ էր—և՛ կապիտալիստական, և՛ գաղութային, և՛ զինվորական ճնշման— իր ամենավայրագ և բարբարոսական ձևով վեր առած»[1])

Ցարական Ռուսաստանին տված ընկեր Ստալինի այս բնութագրումը ամբողջապես վերաբերում է նաև մինչռևոլուցիոն Հայաստանին, որը այն ժամանակ մտնում էր նախկին Երևանյան նահանգի մեջ։

Հայտնի է, որ ցարական Ռուսաստանը շահագրգռված չէր ծայրամասերի տնտեսական ու քաղաքական զարգացմամբ։

Ժողտնտհաշվարկության տվյալների համաձայն («Հայկ. ՍՍՌ սոցիալիստական շինարարությունը», հրատ. Ժ-ՏՀվ, 1940 թ.) 1913 թվին Երևանյան նահանգի արդյունաբերության և գյուղատնտեսության ամբողջ համախառն արտադրանքը գնահատվում էր 86,5 միլ. ռուբլի (1926—27 թթ. անփոփոխ գներով), որից արդյունաբերական արտադրանքը՝ կազմում էր 20,7 միլ. ռուբլի, իսկ գյուղատնտեսական արտադրանքը՝ 65,8 միլ. ռուբլի։

Այս թվերը հանդիսանում են ցարական ժամանակներում Հայաստանի տնտեսության չափազանց ցածր մակարդակի ակնառու ցուցադրությունը։

1913 թ. Հայաստանի քաղաքներում ու գյուղերում կային 41 բժիշկ, բժշկական միջին անձնակազմ՝ բաղկացած 91 մարդուց, 20 ստացիոնար հիմնարկություն՝ 160 մահճակալների ընդհանուր թվով, ներառյալ և մասնավոր սեփականատիրական 2 հիվանդանոցների մահճակալները, որտեղ հիվանդներն էին ընդունվում մի-

---

[1]) *Ստալին. «Լենինիզմի հարցերը». էջ 13, 1935 թ.*

միայն վարձով, և այդքանով էլ աշխատավորության համար մեծ էին սակավ մատչելի։

Զեմստվոյական ինքնավարություն, ինչպես և զեմստվոյական բժշկություն գոյություն չուներ Հայաստանում և ողջ Անդրկովկասում։

Զարմանալի չէ, որ ցարական ժամանակներում երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքի այսպիսի հետամնացության, և ոչ միայն գյուղերի, այլև քաղաքների անբարեկարգության պայմաններում, կեղտի մեջ, ամենատարրական սանիտարա-հիգիենիկ միջոցների (արտաքնոցներ, բաղնիսներ, դիզինֆեկցիոն սարքեր) և ջրամատակարարման բացակայության պայմաններում, այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են ժանտախտը, խոլերան, ծաղիկը, դեզինտերիան, տիֆերը, հազվադեպ «հյուրեր» չէին և տանում էին չափազանց մեծ զոհեր։

Բժիշկների և բժշկական միջին անձնակազմի, ինչպես և բուժշկական հիմնարկությունների չնչին քանակը չէին կարող կանխել համաճարակները։

Հայաստանում դաշնակների տիրապետության շրջանում դրությունը ավելի վատթարացավ։

Գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը, որոնք թեք մակարդակով անկում էին ապրում, դաշնակցական իշխանության շրջանում վերջնականապես հասցվեցին լիակատար քայքայման ու կազմալուծման. 1919 թ., 1913 թ. համեմատությամբ, գյուղատնտեսության համախառն արտադրանքը նվազեց 5,8 անգամ, արդյունաբերության համախառն արտադրանքը՝ ավելի քան 12 անգամ։

Հայաստանը գտնվում էր կործանման եզրին։ Քայքայված գյուղատնտեսություն ու արդյունաբերություն, անընդմեջ «պատերազմներ», փախստականների մեծաքանակ խուռն բազմություններ Տաճկահայաստանից, սով ու թշվառություն, որ տիրում էր ինչպես փախստականների, այնպես էլ տեղական բնակչության մեջ,— ահա այն պայմանները, որոնք բարենպաստում էին համաճարակների ծավալմանը։ Քաղաքներում — Երևանում, Լենինականում (նախկին՝ Ալեքսանդրապոլ), Էջմիածինում, Դիլիջանում, Նոր-Բայազետում և բազմաթիվ գյուղերում-բծավոր, որո-

վայնային, վերադարձ տիֆերից, խոլերայից, մալարիայից, դիզենտերիայից ամեն օր մեռնում էին տասնյակ և հարյուրավոր մարդիկ։

Ահա թե ինչ է գրում այդ առթիվ դեպքերին ժամանակակից բժիշկը[1])։

«1919 թ. Հայաստանը, փախստականներով լեփ լեցուն այս երկիրը (ավելի քան 200 հազար), ապրեց ամենասարսափելի աղետներ՝ համաճարակային հիվանդությունների տարածման իմաստով։ Բծավոր, վերադարձ ու մասամբ որովայնային տիֆերը տարան ոչ սակավ զոհեր, իսկ խոլերան, որը թեպետ առանձին զարգացում ու ծավալում չունեցավ, բայց դրա փոխարեն աչքի ընկավ իր ծանրությամբ (շոր ձևը) և մահացության բարձր (ավելի քան 50) տոկոսով։

«Մալարիան, որը մշտապես բուն է դնում հարթավայրերում և բնակչության կողմից հաշվվում է անմեղ հիվանդության, 1919 թ. ամառաաշնանային շրջանում ծավալվեց այնպիսի տարափոխիկ աստիճանով և մահացության այնպիսի վիթխարի տոկոսով, որ բնակչության մեջ խուճապ ընկավ, և, իսկապես, այդ ժամանակաշրջանում բնակչության մեջ, որ մնացել էր առանց խինինի, ինչը բավականաչափ քանակությամբ չէր ճարվում և Անդրկովկասյան շուկաներում, ի հայտ եկավ Սևծովյան եզերքներից և մասամբ Հնդկաստանից եկած տրոպիկական տենդի նոր ձև։ 1919 թ. ընթացքում վերոհիշյալ հիվանդությունների վիճակագրական լիակատար տվյալները ներկայացնել առ այժմ, մինչև լրիվ հաշվետվությունների ստացվելը, անհնարին է, միայն կարելի է ցույց տալ մի քանի տվյալներ, որոնք բնորոշում են բծավոր տիֆի համաճարակի աճը, ըստ ամիսների։ Այսպես, Երևան քաղաքում, գերծանրաբեռնված 90 հազար բնակչությամբ, փոխանակ խաղաղ ժամանակաշրջանի 30 հազարի, հունվարի 13-ին բծավոր տիֆը արտահայտվել է 473 դեպքով, հունվարի 21-ին՝ 1394, հունվարի 25-ին՝ 1612, հունվարի 30-ին՝ 2003, փետրվարի 1-ին՝ 2103,

---

1) Հայկ. ՍՍՌ Առողջապահության մինիստրության բժշկական և սանիտարական վիճակագրության բաժնի արխիվ, գործ № 10-02. հնգամյա 8, № 2. էջ 2—3.

փետրվարի 5-ին՝ 2203 փետրվարի 10-ին՝ 2220։ Վերադարձ տիֆը սկսեց ուժեղ թափով ծավալվել փետրվար ամսի վերջերին։ 1919 թ. մայիսի 1-ից մինչև 1920 թ. ընկած ժամանակաշրջանում Երևան քաղաքում գրանցված է 584 դեպք, մահացության ոչ ավել քան 2%-ով։

«Խոլերան երևաց հուլիս ամսին և տևեց մինչև նոյեմբեր. ունեցավ թույլ տարածում։ Քաղաքում գրանցված է խոլերայի լոկ 40 դեպք՝ մահացության 20 դեպքով (50%)։ Ոչ վարակիչ հիվանդություններից հարկավոր է նշել ստամոքսա-աղիքային հիվանդությունները՝ անհորմալ և ոչ բավականաչափ սննդի շնորհիվ, հատկապես փախստականների մեջ, որոնք տվին մահացության վիթխարի տոկոս, որի մասին կարելի է դատել դիակների այն քանակով, որ հավաքվում էր քաղաքի փողոցներից, հրապարակներից և դուրս էր բերվում բուժական ձեռնարկություններից։ Այսպես. հունվարին հավաքված և թաղված է 650 դիակ, փետրվարին՝ 751, մարտին՝ 779, ապրիլին՝ 768, մայիսին՝ 714, հունիսին՝ 924, հուլիսին՝ 808, օգոստոսին՝ 821, սեպտեմբերին՝ 876, հոկտեմբերին՝ 822, նոյեմբերին՝ 490 և դեկտեմբերին՝ 941, իսկ ընդամենը՝ 9055 դիակ»։

Դաշնակների տիրապետության հետագա շրջանում Հայաստանի բնակչության առողջապահական դրության համար խիստ բնորոշ է այն նկարագիրը, որ գտնում ենք Էջմիածնի դատա-սանիտարական բժշկի 1920 թ. փետրվարի 29-ի զեկուցագրի մեջ։1)

«Ամբողջ գավառի սանիտարական դրությունը գտնվում էր ծայրահեղ անբարենպաստ պայմաններում։ Քարուքանդ եղած, ավերակների վերածված գյուղերը լցված էին սատկած կենդանիների նեխող մնացուկներով, ամեն տեսակի կեղտոտություններով ու թափթփուկներով։ Այսպիսի դրությունը, բնակչության սովահարության հետ միասին, չէր կարող չազդել վարակիչ հիվանդությունների զարգացման վրա։ Տները, բակերը, հրապարակները, ջրհորներն ու ոռոգիչ ջրանցքները ոչ անհրաժեշտ մաքրության մեջ էին, մի բան, որին աջակցում էր աշխատավոր ձեռքերի պակասը և արտասովոր թանկությունը։ Գավառում բաղնիքներ համարյա չկան, ընդհանուր

1) Հայկ. ՍՍՌ Առողջապահության մինիստրության բժշկական և սանիտարական վիճակագրության բաժնի արխիվ, գործ № 10-03, Երևան-ապրիլին 8, № 3, էջ 2—4։

օգտագործման համար եղած բաղնիքն էլ Վաղարշապատում իրենից ներկայացնում է մռայլ, հեղձուկ օդով, կեղտոտ պահվող մի շենք։ Ոռոգիչ ջրանցքի ջուրը, որ օգտագործվում է բաղնիքում, նույնպես աչքի չի ընկնում իր մաքրությամբ։ Բնակչությունը հատկապես տառապում է ոչ միայն բարորակ ջրի բացակայությունից, այլև ընդհանրապես ջրի պակասից, քանի որ ամռանը շատ գյուղեր բոլորովին զրկվում են դրանից։ Առվի ջրին ամենուրեք փոխարինում է ջրհորի ջուրը, բայց ջրհորները պարզունակ կառուցվածքի են և պահվում են կեղտոտ։

«Այնտեղ, որտեղ կան ոռոգիչ ջրանցքներ, օգտվում են այդ ջրից, սակայն նա ծայրահեղորեն կեղտոտ է, աղտոտված սպիտակեղենը լվանալուց և անասուններին լողացնելուց. այդ ջուրն էլ հենց հաճախ պատճառ է հանդիսանում վարակիչ հիվանդությունների տարածման։ Խմելու լավ ջրի բացակայությունը հանդիսանում է բնակչության ամենամեծ չարիքը, ըստ որում գավառում մի լայնածավալ հարթություն աչքի է ընկնում ստորերկրյա լավ ջրի հարստությամբ, որը և հարկ էր օգտագործել։ Սուր-վարակիչ հիվանդությունների տարածման դեմ ոչ մի արտակարգ միջոց չի ձեռնարկվել, բացառյալ Վաղարշապատ քաղաքի և վանքի ջրմուղային ջրանցքի մաքրումը, որ կատարվել է հատուկ հանձնաժողովի կողմից։ Բոլոր գյուղերը պահվել են, ինչպես նշվեց վերևում, ծայրահեղ կեղտի մեջ և սանիտարական հոգաբարձուների բացակայությամբ, մի բան, որ կարող էր մեծ օգուտ բերել միայն վերջիններիս աշխատանքը վարձատրելու պայմանով։ Դոպրոցները չեն ունեցել սանիտարական անհրաժեշտ հսկողություն և միայն այժմ է այն կազմակերպվում։ Ծաղկի կանխման համար պատվաստի գործի կազմակերպում չի եղել և պատվաստներ չեն կատարվել նույնիսկ փոքրիկ մասշտաբով՝ ծաղկի ղետրիտ չունենալու հետևանքով։ Սուր-վարակիչ այլ հիվանդությունների դեմ ևս պատվաստ չի կատարվել միևնույն պատճառով։ Խինինային պրոֆիլակտիկա չի կատարվել։ 1920 թ. այդ պրոֆիլակտիկայի համար դժվար է ճշտորեն սահմանել պահանջված խինինի քանակը, սակայն մոտավորապես անհրաժեշտ պետք է եղած լինի 15—20 կգ.։ Բնակավայրերի առողջացման համար, ինչպես բխում է վերև շարադրածից, անհրաժեշտ է ճահիճների չորացում, ջրամատակարարման գործի բարելավում և բնակավայ-

ների պարբերական մամլում՝ կազմակերպված սանիտարական վերահսկողության ներքո»,

Ուրիշ գավառներից և բնակավայրերից եկած զեկուցագրերը տալիս են գաշնակների տիրապետության ժամանակաշրջանում բնակչության զարհուրելի դրության միևնույն բնութագրումը։

ՍՍՌՄ Բժշկական Գ. Ակադեմիայի իսկական անդամ Լ. Ա. Հովհաննիսյանը «Բժշկության պատմությունը Հայաստանում» գրքի 4-րդ մասում տալիս է ցարական և գաշնակցական ժամանակաշրջանի Հայաստանում բժշկական գործի դրվածքի հետևյալ բնութագիրը.

«Վեներական հիվանդությունների, տուբերկուլյոզի դեմ պայքարող որևիցե կազմակերպության լիակատար բացակայություն. բացակայություն նույնիսկ մեծ քաղաքներում առաջին օգնություն ցուցաբերող կայանների, սանիտարա-հիգիենիկ և պրոֆիլակտիկ կազմակերպությունների, թեկուզ և ամենատարրական ձևերով. բացառությամբ միայն ծայրահեղորեն անբավարար կազմակերպված ծաղկապատվաստի. լիակատար բացակայություն մայրության և մանկության պահպանման միջոցառումների և այս ամենը սանիտարա-հիգիենիկ ծայրահեղ անբարենպաստության ֆոնի վրա, բնորոշում է այն արտասովոր ողբերգական կացությունը, որի մեջ էր ընկել հայ ժողովուրդը մի շրջանում, որ նախորդում էր այն ժամանակամիջոցին, երբ անվերադարձ կերպով նրա առաջ փակվեց անցյալի մռայլ էջը և Հայաստանը դարձավ սովետական ռեսպուբլիկա։

Հայաստանի ապրած ողբերգությունը գաշնակների օրոք զարհուրելի էր։ Համաճարակները մոլեգնում էին անհավատալի ուժով «Ռեսպուբլիկայի» մայրաքաղաքում, Երևանում, դիակները շաղված էին փողոցներում, ըստ որում միայն Երևան քաղաքում 1919 թ. փողոցներից ու բուժական հիմնարկներից դուրս էին բերվել 9052 դիակ, այլ կերպ ասած, քաղաքի ամբողջ բնակչության մոտ 10%-ը։ Միայն բծավոր տիֆով այդ նույն թվին Երևանում հիվանդացել է քաղաքի բնակչության 20 %-ը (Պապոյան)։ Նույն վիճակումն էր նաև մյուս ինֆեկցիաների գործը»[1])

Սով, թշվառություն, վիշտ, տառապանք, թալան, գաշնակցական բանդաների կամայականություն, վարակիչ հիվանդությունների լայնորեն ծավալված համաճարակ, մասսայական հիվանդա-

1) Оганесян Л. А. «История медицины в Армении, ч. IV, стр. 45—64. Ереван, 1947 г.

129—3

ցում և վիթխարի մահացություն, թյուրքական զորքերի կողմից բնաջնջվելու հնարավորության մշտական վախ,—ահա Հայաստանի բնակչության կյանքի պայմանները դաշնակցականների տիրապետության ժամանակաշրջանում:

1920 թ. սկզբին, (դաշնակների համարյա երկամյա տիրապետությունից հետո), մի խումբ հասարակական գործիչների անձնական նախաձեռնությամբ, կազմակերպվում է Կարմիր Խաչի Հայկական ընկերություն: Ընկերությունը բաղկացած էր անձնավորություններից նեղ շրջանակից և անդամների աննշան թվից: Ընկերությունը չուներ լայն կապեր ժողովրդի հետ, մասսաների հետ, այդ պատճառով էլ նա, բնականաբար, չէր վայելում բավականաչափ հարգանք ու հեղինակություն:

Ընկերության կանոնադրության համար հիմք է հանդիսացել Կարմիր Խաչի Ռուսաստանյան ընկերության կանոնադրությունը:

Ընկերության կանոնադրությունը հաստատվում է դաշնակցական պառլամենտի կողմից 1920 թ. մարտի 19-ին:

1920 թ. մարտի 28-ին ընկերության ընդհանուր ժողովում ընդունվում է կանոնադրությունը և ընկերությունը վերջնականապես ձևավորվում է «Հայաստանի Կարմիր Խաչի ընկերություն» անվան տակ:

Ընկերությունը որոշ նյութական օգնություն է ստանում Կոստանդնուպոլսի Հայկական Կարմիր Խաչի ընկերությունից, միջոցներ է հավաքում նաև տեղում (անդամավճարներ, նվերներ): Սույն միջոցներով ընկերությունը կազմակերպում է մեկ հիվանդանոց Քեշիշքենդում (Դարալագյազի գավառ, այժմ՝ Միկոյան) և մեկ բուժական ու մթերային կետ Նորաշենում:

Սույն կազմակերպությունները դեռ չէին հասցրել ինչպես հարկն է աշխատանք ծավալել, երբ հարկ եղավ շտապեցնել, որովհետև լինելով բժշկական շտապ ջոկատներ, այդ կազմակերպությունները 1920 թ. աշնանը ուղարկվեցին ռազմաճակատ՝ դաշնակցական և թյուրքական բանակների մեջ մղվող պատերազմական գործողություններին մասնակցելու համար:

Ընկերության միջոցները այնքան սահմանափակ ու չնչին էին, որ շատ շուտով բոլորովին հալվեցին և Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու օրերին ընկերությունը փաստորեն գտնվում էր լիակատար անգործունյա դրության մեջ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ ՀԱՍՏԱՏՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

«Տանջված ու բազմաչարչար, Անտանտի ու դաշնակների ոտքոտածությամբ սովի, քայքայման ու գաղթի մատնված Հայաստանը,—բոլոր «բարեկամների» կողմից խաբված այդ Հայաստանը, այժմ իր փրկությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովետական երկիր»[1]։

Ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, 1920 թ. նոյեմբերի 29-ին դաշնակցական ավանտյուրիստներին երկրից վռնդելուց հետո, հայ ժողովուրդը լծվեց խաղաղ, ստեղծագործ աշխատանքի։

Անհրաժեշտ էր արագորեն վերականգնել ծայր աստիճան քայքայման հասած գյուղատնտեսությունը. անհրաժեշտ էր անհապաղ լիկվիդացնել սովն ու թշվառությունը, հաղթահարել պարենամթերային դժվարությունները, ապաստան ու ապահովություն ստեղծել Տաճկահայաստանից փախած բազմահազար գաղթականության ու որբերին. լիկվիդացնել վարակիչ հիվանդությունների համաճարակները. կազմակերպել և պլանավորած պայքար ծավալել մալարիայի դեմ, որը հասել էր սպառնագին չափերի և ահռելի մահացություն էր պատճառում մի շարք շրջանների բնակչությանը. անհրաժեշտ էր վերականգնել և ստեղծել նոր դպրոցներ, հիվանդանոցներ և այլ կուլտ-լուսավորական հիմնարկներ։

---

[1] Ի. Ստալին, Երկեր, հ. 4-րդ, էջ 458.

Այդ դժվար պահին Սովետական Հայաստանին օգնության հասան եղբայրական ժողովուրդները, և առաջին հերթին, ռուս մեծ ժողովուրդը։ Վ. Ի. Լենինի կարգադրությամբ, հայ ժողովրդին ցույց տրվեց նյութական ու բարոյական վիթխարի օգնություն։ Լենինյան-Ստալինյան ազգային իմաստուն քաղաքականությունը, որ կյանքում մարմնավորվել ու մարմնավորվում է Լենինի-Ստալինի մեծ պարտիայի գլխավորությամբ, Հայաստանի սովետական իշխանությանը հնարավորություն տվեց արագորեն և լիապես լիկվիդացնել սովն ու թշվառությունը, բարձրացնել երկրի արտադրողական ուժերը, վերականգնել ռեսպուբլիկայի տնտեսությունը։

Ռեսպուբլիկայի Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատը լծվեց ժողովրդի առողջական գործի կազմակերպման աշխատանքին, ծավալելով գործունյա լայն աշխատանք։

Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատին օգնության եկավ սովետական հասարակությունը, առաջին հերթին ի դեմս ռեսպուբլիկայի նորակազմ Կարմիր Խաչի ընկերության։

Ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը իր 1921 թ. հոկտեմբերի 12-ի որոշմամբ կյանքի կոչեց Կարմիր Խաչի ընկերությանը, նրան առաջադրելով հետևյալ խնդիրները.

1. Պատերազմի ժամանակ վիրավորներին ու հիվանդներին օգնություն ցուցաբերել.

2. Խաղաղ ժամանակ օգնություն ցուցաբերել հաշմանդամներին և տարերային աղետներից տուժած բնակչությանը։

3. Պայքար ծավալել վարակիչ հիվանդությունների համաճարակների և մասնավորապես մալարիայի դեմ։

4. Համաձայն այդ որոշման, Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը իր աշխատանքները պետք է վարեր 1864 թ. Ժնևի կոնվենցիայի հիմամբ, մտներ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի կազմի մեջ և կապեր հաստատեր ուրիշ երկրների Կարմիր Խաչի համապատասխան կազմակերպությունների հետ։

1921 թ. նոյեմբերի 20-ին հրավիրվում է ընկերության ընդհանուր ժողով, որտեղ ընտրվում է Գլխավոր վարչությունը և նախագահության կազմը։

1922 թ. մայիսին Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հաստատում է Կարմիր Խաչի ընկերության կանոնադրությունը,

որը հիմնված էր Ժողկոմխորհի 1921 թ. հոկտեմբերի 12-ի որոշման վրա։

Կարմիր խաչի ընկերությունը այս անգամ արդեն զերծ էր ներփակությունից, ինչ որ հատկանշական էր այդ ընկերությանը դաշնակցականների օրոք։ Նա այժմ իսկական սովետական հասարակական կազմակերպություն էր, ժողովրդի, լայն մասսաների հետ կապված, կառավարության և սովետական հիմնարկությունների աջակցությունը վայելող կազմակերպություն։

Ռեսպուբլիկայի Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը 1922 թ. հունիսի 21-ի իր որոշմամբ ընկերության համար ստեղծեց նյութական բազա, որը տալիս էր նրան լայնորեն աշխատանք ծավալելու, սովետական պետությանը և մասնավորապես Առողջապահության ժողովրդական կոմիսարիատին հարկ եղած օգնություն ցուցաբերելու հնարավորություն։

Համաձայն այդ որոշման, Կարմիր խաչի ընկերությանն էր փոխանցվում.

1) Ընդհանուր հարկերի 5%։

2) Արտասահմանյան անձնագրերի ձևակերպումից ստացված գումարի 15%։

3) Զվարճական հիմնարկների եկամտի 2%։

4) Արտասահմանից ստացված նվերները։

Կարմիր խաչի Գլխավոր վարչությունը իր բաժանմունքներն է կազմակերպում Լենինականում (Ն. Ալեքսանդրապոլ), Զանգեզուրում, Լոռի-Փամբակում, Դիլիջանում, Էջմիածնում, Մեղրիում, Դարալագյազում և Նոր-Բայազետում։

Գլխավոր վարչությունը կապեր է հաստատում նաև Կարմիր խաչի Ռուսաստանյան ընկերության հետ և միջոցներ է ձեռք առնում արտասահմանյան հայկական գաղութների կարմիրխաչական կազմակերպությունների հետ կապի մեջ մտնելու ուղղությամբ։

Կարմիր խաչի ընկերությունը, օգտվելով կառավարության օգնությունից և հասարակական ու պրոֆմիությունական կազմակերպությունների աջակցությունից, եռանդագին աշխատանք է ծավալում առաջին հերթին փախստականներին ու որբերին նյութական օգնություն կազմակերպելու գործում։ Այդ ժամանակ ծայրահեղորեն ծանր կացության մեջ էին հատկապես Միջագետքից եկած

փախստականները։ Նրանք տեղավորված էին Վեդի-Բասարի շրջանում, սովահար, հյուծված, մերկ, չապահովված անգամ զգեցիկ հագուստով։ Նրանց մեջ մահացությունը հասնում էր վիթխարի չափերի, հատկապես խիստ տարածում գտած մալարիայի հետևանքով։

Կարմիր Խաչի ընկերությունը 1922 թ. հունիսի 23-ին Վեդիում բաց է անում բժշկական պունկտ, որը սպասարկում է բացի շրջանային կենտրոնից նաև շրջակա 18—20 գյուղերի։ Իր տասնմեկ ամսվա աշխատանքի ընթացքում պունկտը բժշկական օգնություն է ցույց տալիս 5054 հիվանդի, որոնց 95%-ը կազմում էին մալարիայով տառապողները։ Ընկերությունը փախստականներին օգնություն է ցույց տալիս նաև հագուստով և կոշկեղենով։

Հայաստանի լեռնային շրջաններից մեկի, Զանգեզուրի բնակչությունը, կենտրոնից հեռու ընկած լինելով, քաղաքացիական կռիվներից հետո հատկապես ուժեղ չափով թշվառության մեջ է ընկնում։ Դաշնակցական ավանտյուրայի ժամանակ այնտեղ առաջ է գալիս կատարյալ սով, ծայրահեղորեն զգացվում է ամենատարրական և ամենաանհրաժեշտ իրերի ու մթերքների պակասը, կարելի է ասել բացակայությունը։ Նկատվում է մասսայական հիվանդացում քոսով և մալարիայով։ Վերջինս ստանում է լայն տարածում մասնավորապես մարդկային մասսաների մեծ տեղափոխությունների պատճառով։

Կարմիր Խաչի ընկերությունը, հաշվի առնելով այս ամենը, Զանգեզուրում կազմակերպում է իր բաժանմունքը և 1922 թ. օգոստոսին Ղարաքիլիսա գյուղում բաց է անում բժշկական պունկտ, իսկ Թեղ գյուղում բուժակային պունկտ, որը հետագայում (1925 թ.) փոխարկվում է բժշկական պունկտի։ Հիշյալ պունկտերը, բժ. Ն. Բ. Հակոբյանի ղեկավարությամբ, խուշոր աշխատանք են կատարում գավառի առողջացման գործը բարելավելու ուղղությամբ. բացի հարկ եղած բժշկական օգնությունից, մի շարք գյուղերում (Տաթև, Մուղանջուխ, Բայանդուր և այլն) լաց են արվում մթերային կետեր և ճաշարաններ։ Մի քանի գյուղերում ստեղծում են պարզունակ բաղնիքներ՝ քոսի դեմ պայքարելու համար, ծավալում սանիտարա-լուսավորական լայն աշխատանք։ Ըստ հիշյալ բժշկական պունկտերի հաշվետվության, նրանք 1923 թ. օգնություն

են ցույց տվել 10762 հիվանդի, որոնց 40%-ը մալարիայով տառապողներ են եղել և 20% քոսով. 1924 թ. նրանք ընդունել են 14624 հիվանդ, 1925 թ. 9132 հիվանդ:

Կարմիր Խաչի տեղական բաժանմունքի օգնությամբ, 1922 թ. սեպտեմբերին Կարմիր Խաչի ընկերության Գլխավոր վարչությունը Լոռի-Փամբակի գավառի Գյուլագարակ գյուղում բաց է անում բժշկական պունկտ, որը գործում է մինչև 1923 թ. մայիս ամիսը: Այդ ժամանակամիջոցում Առողջապահության ժողովրդական Կոմիսարիատը ստանձնաբար լայնացնելով իր ցանցը, ստանձնում է ամբողջ շրջանի բժշկական սպասարկումը: Իր աշխատանքի կարճատև ընթացքում Գյուլագարակի բժշկական պունկտը օգնություն է ցույց տալիս 4125 հիվանդի:

Փամբակի շրջանի բժշկական հետաքննությունը բացահայտում է տարածումը սիֆիլիս հիվանդության, որը կրելիս է եղել կենցաղային ընույթ: Տեղական բնակչության ակտիվ մասնակցությամբ, ընկերության կողմից հնարավորություններ են ստեղծվում ինչպես բուժման, այնպես էլ տեղում սիֆիլիսի դեմ պայքարելու համար:

Բժշկական օգնություն ստանալու կարիքն այնքան մեծ էր, որ ընկերության Գլխավոր վարչությունը կազմակերպում է մի քանի բժշկա-բուժակային ջոկատներ, որոնք ուղարկվում են գավառներ, շրջաններ ու գյուղեր, այնտեղ ստեղծում բժշկական ու բուժակային ժամանակավոր կետեր, անհրաժեշտությունից մղված աշխատում այնքան ժամանակ, մինչև որ Առողջապահության ժողովրդական Կոմիսարիատը ծավալում է բժշկական հիմնարկների մշտական ցանց: Բժշկա-բուժակային ջոկատների կողմից բժշկական ու բուժակային ժամանակավոր պունկտեր էին բացված Դիլիջանի, Էջմիածնի, Զանգիբասարի, Կոտայքի, Դարալագյազի գավառներում: Իրենց աշխատանքի ընթացքում այդ պունկտերից Դիլիջանի շրջանի Ջարխեջ գյուղինը ընդունել է 1684 հիվանդ, Քանաքեռինը՝ 4373, Էջմիածնի գավառի Սամալարի շրջանինը, 1923 թ. հունիսից մինչև հոկտեմբեր՝ 152556 հիվանդ, որից 52,2% կազմում էին մալարիայով տառապողները: Այդ նույն գավառի երկրորդ բժշկական ջոկատը աշխատում էր Զանգիբասարի շրջանի Ղարաղշլաղ, Սարվանլար և Խաթունարխ գյուղերում, նույն այդ

ժամանակամիջոցում ընդունելով 171173 հիվանդ, որից 56,7% մալարիայով տառապողներ։

Մալարիան դեռևս հեռավոր անցյալում եղել է հայ ժողովրդի համար պատուհաս։ Պետական Ձեռագրատանը (Մատենադարանում) պահպանվող հնագույն ձեռագրերի տվյալների համաձայն, մալարիան խստորեն տարածված է եղել Հայաստանում դեռևս 2-րդ դարում մեր թվարկությունից առաջ։

Գ. Հ. Ղևոնդյանը իր «Հայկական ՍՍՌ առողջապահությունը 25 տարում» աշխատության մեջ գրում է.

«Մալարիան ներկայիս Սովետական Հայաստանի տերիտորիայի հարթավայրային շրջանների աշխատավորության հնագույն խարազանն է։ Միշևոլուցիոն ժամանակներում մալարիայի տարածման մասին կան առանձին տվյալներ «Памятные книжки Эриванской губернии»-ի տարբեր տարիների հրատարակություններում։

Ըստ «Памятные книжки Эриванской губернии»-ի նյութերի, 1906 թ. Երևանի 29000 բնակչությունից 18000-ը, այսինքն՝ համարյա երկու երրորդը, տառապել են մալարիայով։ Երևանի գավառում 1920 թ. մալարիան կազմել է բոլոր հիվանդացումների 20%-ը Էջմիածնի գավառում՝ 35 %-ը, իսկ ամբողջ նահանգի համար այդ տոկոսը հասնում է 33,5-ի։

Դաշնակների տիրապետության շրջանում մալարիան հասնում է իր զարգացման ամենաբարձր աստիճանին։ Մարդկանց հյուծված օրգանիզմը—այդ ժամանակ տարածված սովի ու զրկանքների հողի վրա, կապված ինչպես պատերազմի, այնպես էլ Տաճկահայաստանից հարյուր հազարավոր փախստականների գաղթի հետ. էլ ավելի է ակտիվացնում մալարիան։ Ջրոռոգիչ ցանցը, որ ժամանակին չէր մաքրվում ու սարքին չէր պահվում բանվորական ձեռքի բացակայության պատճառով, շատ տեղերում հասավ քայքայման, մի բան, որ գյուղացիական դաշտերի խոշոր տարածությունները ճահճացման ենթարկեց։

Դրա հետևանքով խստորեն մեծացավ արհեստական ճահիճների հրապարակը այն շրջաններում, որոնք իրենց կլիմայական պայմաններով չափազանց նպաստավոր են ինչպես մալարիայի մոծակների ինտենսիվ աճի, այնպես էլ նրանց մարմնի մեջ մալա-

ռիայի պարազիտի զարգացման համար։ Ըստ այդմ մալարիայի ուժեղ համաճարակը բռնեց ոչ միայն մալարիայի համաճարակային մշտական օջախները, այլ և այն շրջանները, որտեղ մալարիան անցյալում կամ բոլորովին չէր նկատվել, կամ տարածված էր չափավոր և թույլ աստիճանով։

Եվ իսկապես. դաշնակների օրոք մալարիան ավելց անհավատալի աճ։ Մի ամբողջ շարք գյուղեր չէին գրանցվում բնակչության աճ, իսկ հարթավայրային շրջաններում գյուղերից շատերը վարակված էին մալարիայով 100%-ով, հանգամանք, որ հասցնում էր բնակչության մեծ մահացության։ Այդ գյուղերից մի քանիսի բնակչությունը կառավարության առաջ հարց հարուցեց ամբողջ շրջաններ տեղափոխվելու մասին։ Գ. Հ. Դևոնդյանի վերոհիշյալ տվյալների համար ակնառու իլյուստրացիա է ծառայում Վիթխարի տոկոսը մալարիայով տառապող այն հիվանդների, որոնք ընդունվել են կարմիրխաչական բժշկա-բուժական ջոկատների ու պունկտների կողմից սովետական իշխանության առաջին տարիներում։ Էջմիածնի գավառում աշխատող բժշկական ջոկատների կողմից կատարված գիտա-հետազոտական աշխատանքը (բնակչության հիվանդ խավերի տարյան հետազոտություն, կլինիկական քննում) բացահայտեց մալարիայի տրոպիկական ձևի հիվանդացման տոկոսի գերակշռություն։ Պարզվեց, որ այդ գավառի գյուղերի գերակշիռ մասի բնակչության մեծամասնությունը, անկախ տարիքից, ունի մալարիային կախեքսիա, մալարիային այտուցներ և փայծաղի ու լերդի խիստ մեծացման հետևանքով՝ ուռած, չափազանց մեծ փոր։ Նույն պատկերն ունեին նաև ռեսպուբլիկայի մյուս դաշտավայրային և մասամբ նաև լեռնային շրջանների բազմաթիվ գյուղեր։ Կառավարության, Առողջապահության ժողովրդական կոմիսարիատի և Կարմիր Խաչի ընկերության Գլխավոր վարչության համար ստիպողական անհրաժեշտություն դարձավ հիմնովին և առավել պլանաչափ միջոցառումների ձեռնարկումը՝ ռեսպուբլիկայի բնակչության ապաքինման և առողջացման ուղղությամբ։ Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը 1923 թ. մայիսի 21-ին հրապարակեց «Մալարիայի դեմ պայքարելու միջոցառումների մասին» դեկրետը։

1924 թ. հունիսի 8-ին կայացավ Կարմիր-Խաչի Ընկերության ընդհանուր ժողովը, որտեղ 1920—24 թ.թ. ժամանակամիջոցում՝

ընկերության գործունեության քննարկումից հետո, ընդունվեց հետևյալ որոշումը.

1) Առավել հիմնովին կազմակերպել ու վարել պայքարը մալարիայի դեմ, որի համար և ստեղծել տրոպիկական կայաններ։ Ամեն տեսակ աջակցություն ցույց տալ կառավարությանը՝ ճահիճների չորացման և մալարիայի դեմ պայքարելու այլ կարգի աշխատանքների ուղղությամբ նրա ձեռնարկած միջոցառումների մեջ։

2) Կազմակերպված ուժերով պայքար մղել վենեռական և կենցաղային այլ հիվանդությունների դեմ, որոնք մեծ վնաս են հասցնում գյուղական բնակչությանը։

3) Օգնություն կազմակերպել որբերի համար, հաշվի առնելով Ամերիկական կոմիտեի փակումը։

4) Օգնություն կազմակերպել պատերազմի և աշխատանքային հաշմանդամների համար։

5) Կազմակերպել քույրական դասընթացներ։

6) Ստեղծել ռեզերվային հիմնական ֆոնդեր։

Կարմիր Խաչի Գլխավոր վարչությունը, Հայկական ՍՍՌ Առողջապահության ժողովրդական Կոմիսարիատի Տրոպիկական նորակազմ ինստիտուտի հետ միասին, ձեռնամուխ է լինում տրոպիկական կայանների կազմակերպմանը, առաջին հերթին մալարիայով ամենից ավելի վարակված շրջաններում։

Կարմիր Խաչի ընկերության ջանքերի շնորհիվ հիանալի կահավորված ու սարքավորված հիվանդանոցներով, կլինիկական դիագնոստիկ լաբորատորիաներով, բժշկական ավագ, միջին ու կրտսեր անձնակազմով ապահովված այդ կայանները զբաղվեցին մալարիայով տառապողների բուժմամբ, կատարելով այդ հիվանդության դեմ պայքարելու բոլոր միջոցառումները։

Իրենց աշխատանքի համար հիմք ընդունելով ամբողջ սովետական բժշկագիտության համար միասնական պրոֆիլակտիկ ուղղությունը, այդ կայանները, Տրոպիկական Ինստիտուտի գլխավորությամբ, անց կացրին դիտա-հետազոտական խոշոր աշխատանք՝ մալարիայի ուսումնասիրության և նրա դեմ պայքարելու տեսակետից։ Պարտիական օրգանների ղեկավարությամբ, տեղական և սովետական պրոֆմիութենական կազմակերպությունների անմիջական և շափազանց ակտիվ օգնության առկայությամբ, տրոպիկական կայանները ձեռնամուխ եղան մալարիայի դեմ

պլանավորված պայքարի՝ ճահիճների ու ճահճուտների չորացման, ջրառատիչ ցանցի մաքրման ու նրանից ճիշտ օգտվելու կանոնների պահպանման վրա հսկելու, բրնձի ցանքսերի կարգավորման, բուժական ու պրոֆիլակտիկ խնիզայիայի, բնակչությանը վրանառագաստներով ապահովելու և առհասարակ հակամալարիային միջոցառումների ամբողջ կոմպլեքսը կիրառելու ճանապարհով։

Միայն այսպիսի աշխատանքը, որ կատարվում է ոչ թե կոմպանիայի ձևով, այլ պլանաչափ, երկարատև ժամանակամիջոցում կարող էր տալ մալարիայով վարակված շրջանների բնակչության առողջացման ուղղությամբ շոշափելի արդյունքներ, կարող էր աջակցել ռեսպուբլիկայի գյուղատնտեսության ու արդյունաբերության վերականգնման ու զարգացմանը։ Կարմիր Խաչին, իբրև հասարակական՝ ժողովրդական լայն մասսաների հետ կապված կազմակերպության, անհրաժեշտ էր հրահրել հենց այդ մասսաների ինքնագործունեությունը, աշխատավորության մեջ շահագրգռություն արթնացնել Կարմիր Խաչի կողմից անցկացվող միջոցառումների նկատմամբ և ներգրավել նրանց այդ խնդիրների կատարման գործում։

Կարմիր Խաչի ընկերությունը 1924 թ. արդեն ուներ մի քանի հազար անդամ։ Ընկերությունը իր նախկինում կազմակերպած բաժիններին ի լրացում ստեղծում է նոր բաժանմունքներ Մեղրիում, Սև քարում, Լոռի-Փամբակում, Քեշիշբենդում և Ստեփանավանում։ Համապատասխան պրոպագանդայի ճանապարհով, ընկերությունը նաև միջոցներ է ձեռք առնում իր կազմակերպություններում մասսաներ ներգրավելու ուղղությամբ։

Կարմիր Խաչի ընկերության կողմից Տրոպիկական առաջին կայանը կազմակերպվում է էջմիածնում։ Այն սկսում է գործել 1924 թ. հունիսի 1-ից։ Քննության հետևանքով կայանը պարզում է, որ մի շարք գյուղերում (Զեյվա, Ղարխուն, Խաթոնարիս, Փարաքար և այլն) մալարիայի վարակը հասնում է 100%-ի։ Այդ պատճառով էլ կայանին առընթեր ստեղծվում են 4 հակամալարիական շարժական բժշկական խմբեր, որոնք պարբերաբար մեկնում են զանազան գյուղեր և, էջմիածնի կայանի ղեկավարությամբ, այնտեղ անց են կացնում բժշկական քննություն, բուժական և պրոֆիլակտիկ միջոցառումներ։

Բժշկական խմբերին դեղորայքով և այլ անհրաժեշտ միջոց-

ներով մատակարարում էր տրոպիկական կայանը։ 1924 թ. հունիսի 1-ից մինչև 1925 թ. հունվարի 1-ը ընկած ժամանակամիջոցում կայանը, իր շարժական խմբերի հետ միասին, սպասարկելով 30000 բնակչություն ունեցող շրջանին, ընդունում է 13852 սկզբնական հիվանդ, 26483 երկրորդվող հիվանդ, ընդամենը՝ 43335 հիվանդ, այդ թվում՝ մալարիայով տառապող սկզբնական 7931 հիվանդ, երկրորդվող 23678 հիվանդ, ընդամենը՝ 31609 հիվանդ։ Տրոպիկական կայանի ստացիոնարը ընդունում է մալարիայով տառապող 77 հոգու, որոնք կայանում տնց են կացնում 1384 մահճակալ—օր։

Շրջանի բնակչությունը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ճահիճների ու ճահճուտների չորացման գործում։ Կայանը ղեկավարում և հսկում է կատարվող աշխատանքները, կազմակերպում է զրույցներ, դասախոսություններ, տարածում է պլակատներ և այլն։

1925 թ. կայանը իր աշխատանքներին նոր ծավալ է հաղորդում։ Կազմակերպվում են ևս երկու շարժական խմբեր, որոնք աշխատում են Սարվանլար և Ղարաղշլաղ գյուղերում. 1927 թ. Կարմիր Խաչի Գլխավոր վարչությունը Ներքին Խաթունարխ, Թուրքմանլու, Նոր-Եվդոկիա և Ջեյվա գյուղերում բաց է անում բուժական մշտական պունկտեր, որոնք աշխատում են Էջմիածնի տրոպիկական կայանի ղեկավարության և հսկողության տակ։

Կարմիր Խաչի Գլխավոր վարչության կողմից տրոպիկական երկրորդ կայանը բաց է արվում Մեղրիում 1925 թ. մայիսին։ 1924 թ. հունվարի մեկին Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը Մեղրիում բաց էր արել բուժական պունկտ, որը հետագայում վերակազմավորվեց իբրև տրոպիկական կայան՝ ստացիոնարով և կայանին առընթեր պահվող ծննդաբերական բաժանմունքով։ Կայանը ուներ երկու շարժական հակամալարիական խումբ, որոնք աշխատում էին Լեյվազ և Շվանիձոր գյուղերում։ Տրոպիկական կայանը սպասարկում էր 8000 բնակչության։

Տրոպիկական երրորդ կայանը Կարմիր Խաչի Գլխավոր վարչությունը բաց է անում 1925 թ. սեպտեմբերի 1-ին Դարալագյազի շրջանի Արփա գյուղում, այնտեղ 1924 թվականին կազմակերպված կարմիրխաչական բուժական պունկտի բազայի վրա։ Կայանը ուներ մեկ շարժական հակամալարիային խմբակ և սպասարկում

էր շրջանի և Նախիջևանի երկրամասի մոտակա գյուղերի 8000 բնակչության։

1925 թ. ապրիլին Իջևանի շրջանի Սև-քար գյուղում Կարմիր խաչի Գլխավոր վարչությունը, տեղական բնակչության և ընկերության անդամների ակտիվ մասնակցությամբ, կազմակերպում է բժշկական պունկտ, որը սպասարկում էր հայկական և ադրբեջանական 9 գյուղերի 18114 բնակչությանը։ Հաշվի առնելով հիշյալ շրջանում մալարիայի նկատելի տարածվածությունը, 1927 թ. այդ պունկտը վերակառուցվում է տրոպիկական կայանի, որին կից կազմակերպվում է նաև ծննդաբերական բաժանմունք։

Բացի թվարկված տրոպիկական չորս կայաններից, Կարմիր խաչը բաց է անում նաև բժշկական այլ հիմնարկություններ.

1) 1925 թ. Սարդարաբադ (այժմ Հոկտեմբերյան) կայարանում բացվում է բժշկական պունկտ՝ շրջանի դյուղացիությանը, նորաբաց բամբակաղտիչ գործարանի բանվորությանը և մանկական դաղութներին սպասարկելու համար։

2) 1925 թ. բժշկական պունկտեր են բացվում Սիսիանի շրջանի Ղարաքիլիսա և Ղափանի շրջանի Բեղ գյուղերում։

3) 1925 թ. բժշկական պունկտ է բացվում Դավալուում՝ փախստականներին սպասարկելու համար։ Բժշկական պունկտը առընթեր ուներ ամբուլատորիա և ծննդաբերական բաժանմունք։

4) 1926 թ.՝ հիվանդանոց և ժամանակավոր մթերային կետ Արազդայանում, փախստականներին սպասարկելու համար։

5) 1925 թ. կազմակերպվում է բժշկական ջոկատ՝ տրախոմային և աչքի այլ հիվանդությունների դեմ պայքարելու համար։ Ջոկատը խոշոր աշխատանք է տանում 1925, 1926, 1927 թ. թ. Նոր-Բայազետի, Բասարգեչարի, Սևանի շրջաններում։

6) 1927 թ. բժշկական ջոկատ՝ Լենինականում—աչքի հիվանդությունների դեմ պայքարելու համար։ Ջոկատը աշխատանքներ է տանում Լենինականից հեռու ընկած գյուղերում։

7) 1926 թվականին, վենեռոլոգիական դիսպանսեր՝ Մեծ Պառնի գյուղում (Լոռի-Փամբակի դավառ), որ սպասարկում էր 9 գյուղի, հիմնականում պայքար մղելով սիֆիլիսի դեմ։ Դիսպանսերը գործում էր նաև 1927 թվականին։

8) 1927 թվականին, բժշկական ջոկատ Աղբաբայում՝ վենեռական հիվանդությունների դեմ պայքարելու համար։

Կարմիր Խաչի բուժական բոլոր հիմնարկություններն ու բժշկական ջոկատները, որոնք աշխատում էին բնակչության հոծ կենտրոնավայրերում, բացի բուժական միջոցառումներից (այդ թվում նաև հարկ եղած դեպքերում վիրաբուժական օպերացիաներ), կատարում էին նաև սանիտարա-լուսավորական և պրոֆիլակտիկ խոշոր աշխատանք:

1922—1923 թ. թ. Հայաստանում գոյություն ուներ «Անապատատան երեխաներին օգնող Ընկերություն»: Կարմիր Խաչը այդ ընկերությանը ցույց է տալիս նյութական օգնություն և 1923 թ. կազմակերպում է իր կարմիրխաչական որբանոցը, 8—14-ամյա 100 երեխաների համար: Որբանոցի պահման և որբերի դաստիարակման գործը կատարվում է Կարմիր Խաչի ընկերության կողմից:

Բժշկական անձնակազմի, այդ թվում և բժշկական միջին անձնակազմի պակասը, արգելք էր հանդիսանում բժշկա-սանիտարական ցանցի ծավալմանը: Հաշվի առնելով այս հանգամանքը, Կարմիր Խաչի Գլխավոր վարչությունը 1923 թ. կազմակերպում է բույրերի երկամյա դասընթացներ, իբրև բաղա ընդունելով Երևանի հիվանդանոցները: 1925 թ. սկզբներին 23 հոգի ավարտում են դասընթացները և աշխատանքի են անցնում կարմիրխաչական ու պետական բժշկական հիմնարկություններում: Կարմիր Խաչի ընկերության ամբողջ աշխատանքը կադրերի պատրաստման ուղղությամբ, մինչև 1928 թ. սահմանափակվում է միայն այսքանով:

1925 թ. Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը եղբայրական ռեսպուբլիկաների Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունների հետ արդեն ուներ սերտ կապեր: 1925 թվականին ստեղծվում է այդ ընկերությունների Միությունը: Միության մեջ մտնում են այն ժամանակ գոյություն ունեցող Ռուսաստանյան Կարմիր Խաչի, Ուկրաինական, Հայկական, Վրացական ռեսպուբլիկաների Կարմիր Խաչի ընկերությունները և Ադրբեջանական ու Ուզբեկական ռեսպուբլիկաների Կարմիր Կիսալուսնի ընկերությունները: Հետագայում միութենական ռեսպուբլիկաներում նոր կազմակերպված Կարմիր Խաչի ու Կարմիր Կիսալուսնի բոլոր ընկերությունները նույնպես մտնում են ՍՍՌՄ Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունների Միության մեջ:

ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից 1925 թ. սեպտեմբերի 1-ին հաստատված «ՍՍՌՄ Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի Ընկերությունների Միության կանոնադրության» առաջին հոդվածում ասված է. «Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի Ընկերությունների Միությունը կազմվում է՝ Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ռեսպուբլիկական ազգային ընկերությունների շահերը ՍՍՌ Միության կառավարության առաջ ներկայացնելու համար, այդ կազմակերպությունների արտասահմանյան գործունեությունը համաձայնեցնելու համար, Միության բոլոր մասնակիցների համար նշանակություն ունեցող հարցերը մշակելու և սրանց աշխատանքում փոխօգնություն հասցնելու համար»:

ՍՍՌՄ Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունների Միության կազմակերպումը և Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության մուտքը նրա կազմում, վերջինիս համար մեծագույն նշանակություն ունեցավ, ինչպես բարոյական-իրավական, այնպես էլ նյութական տեսակետից: Այդ նշանակալիորեն ամրապնդեց ընկերությունը, հնարավորություն տվեց նրան զարգացնելու ու լայնացնելու իր աշխատանքները և կատարելու ընկերության առաջ դրված բոլոր խնդիրները: Այդ ակտի արդյունքները դրսևորվում են մոտակա տարիներում:

Լենինականում, որը և՛ բնակչության թվով, և՛ տնտեսական նշանակությամբ ռեսպուբլիկայի երկրորդ քաղաքն է, 1926 թ. հոկտեմբերի 22-ին տեղի է ունենում տարերային աղետ՝ երկրաշարժ: Անհապաղ օգնության են շտապում ինչպես միութենական, այնպես էլ եղբայրական ռեսպուբլիկաների կառավարությունները: Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը անմիջապես բրիգադներ է կազմակերպում և ուղարկում տուժած վայրերը, ինչպես բժշկական օգնություն ցուցաբերելու, այնպես էլ պարենային կետեր կազմակերպելու համար: Բրիգադներ և բժշկական ջոկատներ են ժամանում նաև եղբայրական ռեսպուբլիկաներից՝ Վրաստանի Կարմիր Խաչի ընկերությունից և Ադրբեջանի Կարմիր Կիսալուսնի ընկերությունից: Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի բժշկական ջոկատների հետ համերաշխ, և վերջինիս դլխավորությամբ, նրանք կատարում են խոշոր աշխատանք:

1926 թ. սեպտեմբերի 25-ին Հայաստանի Կարմիր Խաչի բրիգադը Թուրքի-Ղարաքիլիսա գյուղում բացում է բժշկական պունկտ։ Բրիգադը սպասարկում է տուժած Արալլուղ, Ալեքսանդրովկա, Բայանդուր, Դհարլու գյուղերին։ Բացի բժշկական օգնությունից, որ ցույց է տվել 3875 տուժածի, բրիգադը, Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի բաց թողած միջոցներով, կազմակերպում է Թուրքի-Ղարաքիլիսա և Դավշան-Ղըշլաղ գյուղերում երկու սննդամթերային կետ, որոնք ապահովում են շրջակա ութ գյուղերի սննդի դործը։ Այդ կետերը աշխատում են 1926 թ. հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 26-ը և այդ ընթացքում բաց են թողնում 148450 ճաշ։ Լենինական քաղաքում կազմակերպվում է օրական 3000 մարդու սնունդ ապահովելու կարողությամբ օժտված սննդամթերային կետ և կաթի խոհանոց՝ օրական 500 երեխայի համար։ 1926 թ. դեկտեմբերի 2-ից մինչև 1927 թ. մայիսի 1-ը քաղաքի և շրջակա գյուղերի բնակչության համար բաց է թողնվում 295303 ճաշ։ Կաթի խոհանոցը դեկտեմբերի 14-ից մինչև մայիսի 1-ը ամեն օր համապատասխան սննունդով ապահովում է ծծկեր և մինչև 2 տարեկան հասակ ունեցող 620 երեխայի։

Հայաստանի Կարմիր Խաչը Լենինականում բաց է անում նաև երկու ձրի թեյարան, որոնք դործում էին 1927 թ. փետրվար ու մարտ ամիսներին, և մանկական կոնսուլտացիա, որը աշխատեց 1927 թվի մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը։ Մանկական կոնսուլտացիան երեխաներին ցույց էր տալիս բժշկական օգնություն, կատարում հակածաղկային դիտրիտի պատվաստ և բաժանում սննդամթերք։

1928 թ. օգոստոսի 28-ին Դիլիջան քաղաքի բնակչությունը տուժում է ջրհեղեղից։ Հայաստանի Կարմիր Խաչը լայն օգնություն է ցույց տալիս տուժած բնակչությանը։

Միայն մեր՝ Սովետական երկրին բնորոշ ժողովրդների եղբայրությունը առանձին ջերմությամբ է դրսևորվում նաև հասարակական կազմակերպությունների, տվյալ դեպքում Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունների աշխատանքներում։ Հայաստանում կատարված տարերային աղետների ժամանակ եղբայրական ռեսպուբլիկաների Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունները, իրենց սեփական ձեռներեցությամբ, Հայաստանին օգնության են ուղարկել իրենց ուժերն ու միջոցները։ Ադրբեջա-

նում, Վրաստանում, Ուզբեկիստանում, Բելոռուսիայում և Ղրիմում կատարված տարերային աղետների ժամանակ, Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունն իր հերթին, իր ուժերի ներածին չափ, անհապաղ շտապել է օգնության։

Բոլոր այս տարիներին Հայաստանի Կարմիր Խաչին իրենց օգնությունն են շարունակել նաև Կարմիր Խաչի հայկական արտասահմանյան կազմակերպությունները և նրանց միջոցով՝ հայկական զանազան բարեգործական և հայրենակցական ընկերություններ։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ԵՎ ՍՍՌՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման ժամանակաշրջանում Հայաստանի Կարմիր Խաչը, ինչպես տեսանք, կարողացավ կազմակերպել ու ծավալել բուժական-պրոֆիլակտիկ ցանց, հատկապես կենտրոնից հեռու ընկած շրջաններում, ի օգնություն Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի։ Օգտվելով իր ցանցից ու կազմակերպություններից, ընկերությունը որոշակի աշխատանք կատարեց սոցիալ-կենցաղային հիվանդությունների դեմ, և նշանակալիորեն՝ մալարիայի դեմ պայքարելու ուղղությամբ։

Կառավարության ու հասարակական կազմակերպությունների ակտիվ աջակցությամբ և եղբայրակից ռեսպուբլիկաների կարմիր-խաչական կազմակերպությունների օգնությամբ, ընկերությունը հաջողությամբ կատարեց Հայաստանի տարերային աղետներից տուժած շրջանների բնակչության բժշկական օգնություն ցույց տալու գործը։ Այդ ժամանակաշրջանում ընկերությունը ամրապնդեց իր կապերը ՍՍՌՄ Կարմիր Խաչի ու Կարմիր Կիսալուսնի ընկերությունների հետ և մտնելով այդ ընկերությունների Միության մեջ, իրավականորեն ձևակերպեց իր իրավունքն ու ֆունկցիաները։

Ընկերության անընդհատ մասսայականությունը, անդամների փոքր քանակությունը, թույլ կապը հասարակական կազմակերպությունների ու հիմնարկությունների հետ, արդելակ հանդիսացան նրա աշխատանքների հետագա ծավալմանը։ Թույլ էր նաև սանիտարական կադրերի նախապատրաստման գործը, մինչդեռ միջազգային լարված իրադրությունը պահանջում էր այդ ուղղությամբ աշխատանքի զգալի ուժեղացում։

Սովետական Հայաստանը, վերջնականապես բուժելով իր վերքերը, որոնք հանդիսանում էին դաշնակցական իշխանության ծանր ժառանգությունը, անցավ ժողովրդական տնտեսության և կուլտուրայի լայն շինարարության, որը վիթխարի չափեր էր ընդունել Ստալինյան հնգամյակի տարիներին: Վերականգնվեցին գոնաավոր մետաղների աղբյուրները՝ Զանգեզուրի և Ալավերդու պղնձահանքերը: Պարտիայի և կառավարության որոշումներով՝ ստեղծվեցին արդյունաբերության նոր ճյուղեր, դրվեցին արդյունաբերության անշեղ զարգացման համար հիմքեր՝ Սևանա լճի ջրային պահեստի օգտագործման բազայի վրա մեծ կարողության հիդրոէլեկտրակայանների շինարարության սկսմամբ, ստեղծվեց գյուղատնտեսության տեխնիկական բազա, կազմակերպվեց մեքենա-տրակտորային կայանների լայն ցանց, կարգի բերվեց և միաժամանակ զգալիորեն լրացվեց ոռոգիչ ջրանցքների ցանցը, յուրացվեցին գյուղատնտեսական կուլտուրաների՝ բամբակի, խաղողի, ծխախոտի, պտղատու այգիների նոր հրապարակներ և այլն:

Արդյունաբերության ու գյուղատնտեսության բոլոր ճյուղերի, կուլտուրայի, գիտության և արվեստի վիթխարի աճը, բնականաբար, առաջադրում է նոր խնդիրներ:

Երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման պատմական ժամանակաշրջանից բխող այդ խնդիրները թելադրում էին նաև անհրաժեշտ սանիտարական կուլտուրայի, սանիտարա-հիգիենիկ գիտելիքների տարածման, բնակչության սանիտարական դրության, բանվորին և կոլխոզնիկին շրջապատող պայմանների բարելավման և ֆաբրիկաներում, գործարաններում ու կոլխոզներում բժշկական օգնության դրվածքը անհրաժեշտ բարձրության հասցնելու անհրաժեշտությունը:

Հիշյալ խնդիրները իրենց արտացոլումը գտան պարտիայի և կառավարության, ինչպես նաև Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության պլենումների և համագումարի որոշումների մեջ:

Համագումարը տեղի ունեցավ 1928 թ. դեկտեմբերի 16-18-ը: Արձանագրելով ընկերության ձեռք բերած նվաճումները տարված աշխատանքների զանազան բնագավառներում, համագումարը միաժամանակ մատնանշեց դոյություն ունեցող թերությունները և առաջարկեց.[1])

1) Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության բյուլետեն, 1928-29 թ թ.:

1. Հատուկ ուշադրություն դարձնել կազմակերպչական աշխատանքներին, միջոցներ ձեռք առնել ընկերության անդամների և ըշիշների թիվը բազմապատկելու վրա՝ կարմիրխաչական աշխատանքների մեջ ներգրավելով բնակչության լայն խավերին։

2. Աշխատանքները վարել առավել պլանչափ ձևով։

3. Միջոցներ ձեռք առնել կայուն ֆինանսական բազա ստեղծելու համար։

4. Միջոցներ ձեռք առնել բժշկա-պրոֆիլակտիկ ցանցը էլ ավելի լայնացնելու, բժշկական օգնության որակը բարձրացնելու և այդ ցանցի կահավորման գործը բարելավելու ուղղությամբ։

5. Միջոցներ ձեռք առնել հասարակական, սովետական և բոլոր պրոֆմիութենական կազմակերպություններին Կարմիր Խաչի աշխատանքներում մասնակից դարձնելու համար։

Համագումարը ընտրեց Գլխավոր վարչություն 25 անդամներով և 7 թեկնածուներով։ Առաջին պլենար նիստում ընտրվեց 7 հոգուց բաղկացած նախագահություն։ Առաջին համագումարի վերոհիշյալ որոշումները կենսագործելու համար, Գլխավոր վարչության 2-րդ պլենումը, որ տեղի ունեցավ 1929 թ. մարտի 29-30-ը, որոշում ընդունեց.[1])

1. Ուժեղացնել ընկերության մեջ անդամների ներգրավումը, մասնավորապես բանվորների, կարմիր բանակայինների ու գյուղացիության չքավորական խավերից և այդ նպատակով ընկերության կանոնադրության մեջ անդամավճարի տարբերակում մտցնել՝ 25 կոպեկից մինչև մեկ ռուբլի։

2. Շարունակել առաջին օգնության խմբակների ծավալումը բանվորների և գյուղացիների մեջ։

3. Բոլոր եղանակներով, գավառական գործկոմների և պրոֆմիությունների օգնությամբ, ձգտել տեղերում աշխատող բժիշկներին կապել հիշյալ խմբակների աշխատանքներին։

4. Միջոցներ ձեռք առնել առաջիկա տարում հիմնարկությունների մի մասը տեղական գործկոմներին փոխանցելու և ազատված միջոցներով նոր հիմնարկություններ բաց անելու համար։

3-րդ պլենումը, որ տեղի ունեցավ 1929 թ. դեկտեմբերի 6-8-ը, որոշեց.[2])

1. Բաժանմունքներ կազմակերպել այն գավառներում ու շրջ-

---

1) Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության բյուլետեն. 1928-29 թ. թ.։
2) Նույն տեղը։

ջաններում, որտեղ այդպիսիք դեռ չեն կազմակերպված և ուղղակի կապ ստեղծել այն շրջանային բաժանմունքների հետ, որոնք բավարար չափով չեն ղեկավարվում գավառական բաժանմունքների կողմից։

2. Ուժեղացնել Կարմիր Խաչի բջիջների կազմակերպման գործը, աշխուժացնել անդամագրումը և անդամների թիվը 1930 թ. վերջին հասցնել ոչ պակաս քան 30000-ի։

Ուժեղացնել առաջին օգնության խմբակների աշխատանքների ղեկավարությունը, այնքանով, որպեսզի 50 խմբակների նկատմամբ նախատեսված ծրագիրը լրիվ ի կատար ածվի։

4. 1930 թվականին կազմակերպել երկու դրուժին, առանձին ուշադրություն դարձնելով բանվորական շրջանների վրա։

5. Սոցիալական հիվանդությունների դեմ պայքարելու գործում էլ ավելի ուժեղացնել պրոֆիլակտիկ աշխատանքները։

6. Մի շարք սովխոզներում ու կոլխոզներում բաց անել մանկական հրապարակներ, մանկական մսուրներ և կոնսուլտացիաներ։

7. Լայնացնել պիոներների համար տարվող աշխատանքները, ըստ հնարավորին պիոներների առողջության սպասարկումը տարածելով նաև մյուս գավառների վրա։

Հայաստանի ԿԳԿ-ի Փոքր Նախագահությունը 1930 թ. հունվարի 9-ին, լսելով Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության Գլխավոր վարչության նախագահի զեկուցումը, ընդունեց հետևյալ որոշումը[1]։)

Ա) Հավանություն տալ Հայաստանի Կարմիր Խաչի աշխատանքին։

Բ) Արձանագրել Կարմիր Խաչի զգալի պրակտիկ նվաճումները սոցիալական հիվանդությունների, մանկական, կանացի և առհասարակ չափահաս բնակչության հիվանդացումների դեմ պայքարելու գործում, ինչպես տարերային աղետներից տուժած բնակչությանը, այնպես էլ, մասնավորապես, ազգային փոքրամասնություններին ցույց տված օգնության գործում, սանիտարական անգրագիտության վերացման և սպասարկող անձնակազմի համար կադրեր պատրաստելու գործում։

Գ) Արձանագրել լայն կազմակերպչական աշխատանքների թուլությունը, մասնավորապես թուրքական բնակչության մեջ, և ընդ-

1) Հայաստանի ԿԳԿ-ի Փոքր Նախագահության 1930 թ. հունվարի 9-ի № 27 արձանագրությունից (Գործ № 741-3)։

կերության գործունեությունում բանվորագյուղացիական մասսաների ակտիվության բացակայությունը։

Դ. Ղեկավարությունն ուժեղացնելու և աշխատավորական լայն մասսաների ներգրավման համար, Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությանը առաջարկել.

ա. Բաժանմունքներ կազմակերպել այն մարզերում ու շրջաններում, որտեղ այդպիսիք մինչև այժմ չեն կազմակերպված։

բ. Ուժեղացնել ղեկավարությունը և կենդանի կապը իր բաժանմունքների նկատմամբ։

գ. Միջոցներ ձեռք առնել բջիջների կազմակերպման և նրանց բազմացման գործը ուժեղացնելու համար, հատկապես բանվորական շրջաններում, կոլխոզներում և կարմիր բանակայինների մեջ։

դ. Միջոցներ ձեռք առնել բաժանմունքների ինքնագործունեությունն աշխուժացնելու և լայն մասսաներին Կարմիր Խաչի խնդիրների ու գործունեության հետ ծանոթացնելու ուղղությամբ, ինչպես նաև պարտավորեցնել Կարմիր Խաչի բուժական պրոֆիլակտիկ հիմնարկություններին՝ հաշվետու լինել տեղական սովետական, պարտիական, հասարակական կազմակերպությունների և առհասարակ աշխատավորության առաջ։

ե. 1930 թ. ընթացքում կազմակերպել երկու դրուժիններ բանվորական շրջաններում, մատակարարելով նրաց բոլոր անհրաժեշտ պարագաներով։

Ե. Նյութական բազան ուժեղացնելու համար անհրաժեշտ համարել.

ա. Ստեղծել մի քանի եկամտավոր հիմնարկներ (դեղատուն, հիգիենիկ և սանիտարական խանութ)։

բ. Թույլատրել Կարմիր Խաչին անցկացնելու Կարմիր Խաչի եռօրյակ և իրավական անդամագրություն բոլոր հիմնարկություններում 50 ռուբլուց ոչ պակաս անդամավճարով։

Դիրեկտիվ օրգանների և Գլխավոր վարչության հիշյալ որոշումները իրականացնելու համար, ընկերությունը առաջին հերթին ուժեղացնում է կազմակերպչական-մասսայական աշխատանքները։ Ընկերության նպատակների ու խնդիրների լայնորեն մեկնաբանում, ընկերության գործունեության մասին զեկուցումներ հիմնարկություններում, ձեռնարկություններում, կոլխոզներում, ուսումնական ձեռնարկություններում,—այս ամենը հարուցում են աշխատավորության հետաքրքրությունը Կարմիր Խաչի կողմից կատարվող

աշխատանքների նկատմամբ։ Կազմակերպվում են Կարմիր Խաչի նոր բաժանմունքներ ու բջիջներ հիմնարկությունների կոլեկտիվներին կից, կոլխոզներում, երկաթուղիներում, ուսումնական ձեռնարկություններում։

Լայն մասսաների ինքնագործունեությունն ու միջոցները ուղղվում են առողջապահության օրգաններին օգնելու վրա՝ առողջապահական աշխատանքներ ծավալելու համար։ Դրան զգալիորեն օգնում է նաև կարմիրխաչական կազմակերպությունների կապի ամրապնդումը սովետական, պրոֆմիութենական և այլ հասարակական կազմակերպությունների հետ։

1927 թ. ընկերությունը Հայաստանում ուներ ընդամենը 9 բաժանմունք՝ Էջմիածնում, Լենինականում, Նոր-Բայազետում, Մեղրիում, Սև-քարում, Զանգեզուրում, Լոռի-Փամբակում, Քեշիշքենդում և Ստեփանավանում։ Ընկերության անդամների թիվը հասնում էր մի քանի հազարի։ 1928-1929 թթ. կազմակերպվում են նոր բաժանմունքներ՝ Սարդարաբատում, Արազդայանում, Նալբանդում, Դիլիջանում, Իջևանում, Ղամարլուում, Սևանում։ Այսպիսով, 1929թ. վերջին բաժանմունքների թիվը հասնում է 19-ի։ Ընկերության անդամների թիվը 1928 թ. վերջին հասնում է արդեն 12999-ի, որից 2200-ը Երևանում։ 1929 թ. ընկերությունը առաջին անգամ ձեռնամուխ է լինում Կարմիր Խաչի բջիջների կազմակերպմանը։ Կազմակերպվում է 122 բջիջ, որից 52-ը Երևանում, 62-ը գավառական ու շրջանային կենտրոններում և 4-ը երկաթուղում։ Բջիջների անդամները, հանդիսանալով ընկերության ակտիվը, իրենց հերթին նորանոր անդամներ են ներգրավում կարմիրխաչական կազմակերպությունների մեջ։

Հետագայում ընկերության կազմակերպությունների և անդամների թիվը տարեցտարի դնալով աճում է։ Այդ պարզ երևում է հետևյալ տվյալներից.

Տարիներ	1929	1930	1931	1932	1933	1934
Շրջանային կոմիտեների բաժանմունքների քանակը . .	19	19	22	25	28	28
Սկզբնական կազմակերպությունների քանակը	122	200	270	709	899	721
Ընկերության անդամների քանակը	17000	18000	32000	57000	59390	41800

Այդ ժամանակաշրջանում կատարված ագիտացիոն պրոպագանդիստական և սանիտարա-պրոֆիլակտիկ աշխատանքները նկատելի ազդեցություն են գործում Կարմիր Խաչի ընկերության կազմակերպությունների և անդամների թվի վրա։

Ամեն տարի, դարնանացանի կամպանիայի ժամանակ, բժշկական անձնակազմից կազմակերպվում են հատուկ բրիգադներ, որոնք կոլխոզնիկներին ցույց տրվող բժշկական օգնությունից բացի կոլխոզներում պարտադիր կարգով անց են կացնում դասախոսություն-զրույցներ, կոլխոզային մասսային բացատրելով Կարմիր Խաչի Ընկերության դերն ու նշանակությունը պատերազմի և խաղաղության ժամանակ։

1928 թ. մինչև 1935 թ. ընկած ժամանակամիջոցում տեղի են ունեցել 3704 զրույց-դասախոսություն։ Նույն այդ ժամանակամիջոցում կազմակերպվել է Կարմիր Խաչի 311 անկյուն։

1932 թ. կազմակերպվել է 2 շարժական ցուցահանդես, որոնք ներկայացրել են Կարմիր Խաչի ընկերության նպատակները, խնդիրները և գործունեությունը։

Հրատարակվել են հայերեն լեզվով 5 բրոշյուր, յուրաքանչյուրը 5000 տիրաժով, և 8 տեսակ տարբեր պլակատներ։

Մյուս միութենական ռեսպուբլիկաների համեմատությամբ մի փոքր ուշացումով է Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը ձեռնամուխ եղել սանպաշտպանական կադրերի պատրաստմանը։

Հայաստանում առաջին անգամ 1927 թ. կազմակերպվում է առաջին օգնության 18 խմբակ, 510 մասնակիցներով։ Նույն թվին խմբակներն ավարտում են 334 հոգի։ 1928 թ. կազմակերպվում է 28 խմբակ, որտեղ ավարտում են 350 հոգի, 1929 թ. 50 խմբակ, որտեղ ավարտում են 650 հոգի, 1930 թ՝. 50 խմբակ, որոնցից մեկը աղրբեջանական, որտեղ ավարտում են 650 հոգի, 1931՝ թ.200 խմբակ, 4591 շրջանավարտներով, 1932 թվին 175 խմբակ, 4566 շրջանավարտներով։

Խմբակների կազմի 85-%-ը կազմում էին 16 տարեկանից բարձր կանայք։ Խմբակներում ընդգրկվել են, ըստ ազգային պատկանելիության, հայեր՝ 90%, ռուսներ և ադրբեջանացիներ՝ 10%, ըստ սոցիալական կազմի՝ 25-30%-ը բանվորներ, նույնքան գյուղացիներ և մնացածը՝ ծառայողներ և այլն։ Այդ խմբակներում պարապմունքները վարում էին ընկերության անդամ-բժիշկները, հա-

սարակական պարտավորության կարգով, համաձայն՝ սահմանված ծրագրերի։ Պարապմունքների ավարտումից հետո խմբակը քննություն էր տալիս և ավարտում։

Առաջին օգնության խմբակ ավարտողները խաղաղ ժամանակ հանդիսանում էին բժշկական անձնակազմի օգնականը՝ աշխատանքի և աշխատավորների կենցաղի բարելավման գործում, ինչպես գյուղատնտեսական ու արդյունաբերական օբեկտներում, այնպես էլ առօրյա կենցաղում։ Նրանք գյուղերում ու քաղաքներում սանիտարական կուլտուրայի տարածման ստորին օղակներն էին, որոնցից քիչ բան չէր կախված և որոնք ջանք չէին խնայում այդ ամենը կյանքում իրագործելու համար։ Պատերազմի ժամանակ նրանք կարող էին ծառայել իբրև պատրաստի կադրեր՝ վիրավորներին ու հիվանդներին բժշկական առաջին օգնություն ցույց տալու և խնամելու գործում։

1929 թ. առաջին օգնության խմբակներն ավարտողներից Երևանում և Լենինականում կազմակերպվում է սանիտարական երկու դրուժին, յուրաքանչյուրը 39 հոգուց բաղկացած, 1930 թ. ձևավորվում են ևս 2 դրուժին բանվորական-արդյունաբերական կենտրոններում՝ Ղափանում և Ալավերդում։ 1929 թ. կազմակերպված 2 սանդրուժինները մասնակցում են Կովկասյան Կարմրադրոշ Բանակի զինվորական մանյովրներին, բժիշկների ղեկավարությամբ։

1934 թվականից, ՍՍՌՄ ԿԳԿ-ի 1934 թ. սեպտեմբերի 20-ի որոշմամբ, առաջին օգնության խմբակները փոխարինվում են ՊՍՊ-ի («Պատրաստ սանիտարական պաշտպանության») կոմպլեքսով պարապողների կոնտինգենտով։

ՊՍՊ-ի կոմպլեքսի ուսումնական պլանն ու ծրագիրը կազմված էին բնակչության լայն խավերին՝ բանվորներին, բանվորուհիներին, կոլխոզնիկներին ու կոլխոզնիկուհիներին և ողջ աշխատավորությանը մեկ ամսվա ընթացքում (40-22 ժամ) սանիտարական ու առաջնասանիտարական հարցերի մեջ նախապատրաստելու հաշվով։ ՊՍՊ-ի նորմաները հանձնողները ստանում էին ՍՍՌՄ ԿԽ և ԿԿԸՄ-յան Գործկոմից սահմանված հատուկ վկայականներ։

1929 թ. աշնանը Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը Երևանում կազմակերպում է քույրական դպրոց, ուսման երկամյա տևողությամբ։ 43 հոգի ընդունվում են առաջին կուրս, 21 հոգի՝ Լե-

նինականեր քույրական դպրոցի սաներից՝ 2-րդ կուրս։ Ընդունվողներից 52 հոգի ռեսպուբլիկայի գավառներից էին, 12-ը՝ Երևան քաղաքից։

Դպրոցը շրջանավարտներ տվեց 1930-1931 թթ.։

Հետագայում, հետևյալ 3 տարիների ընթացքում, քույրերի փոխարեն պատրաստվում են բժշկական կրտսեր տեխնիկներ, 1931 թ. 61 հոգի, 1932 թ.՝ 171 հոգի, 1933 թ.՝ 203 հոգի։ 1934 թ. պատրաստվում է բուժքույրերի կոնտիգենտ։

Բացի վերոհիշյալներից, պատրաստվել են նաև հետևյալ կադրերը.

№		1931	1932	1933	1934
1	Բժիշկներ	18	32	61	62
2	Դեզինֆեկտորներ	40	35	20	45
3	Սանիտարներ	33	87	92	52
4	Բաղնիքների ու լվացքատների աշխատողներ . .	—	8	15	—
5	Սանիտարական դրուժիններ	2 դր.	16 դր.	13 դր.	12 դր.
6	Սանդրուժիններին հրամ-կազմ	—	—	—	17
7	ՊՍԳ կոմպլեքսի կոնտինգենտ	—	—	—	1266
8	Կարմիր խաչի զեկավար աշխատողներ (շրջկոմների քարտուղարներ)	—	—	26	—
9	ՀՕԳ-ի աշ՝ ատողներ . . .	—	—	44	243

1932 թ. Բժշկական ինստիտուտին առընթեր կազմակերպվում է սանիտարական կորպուս, որը ընդգրկում է ուսանողների 97 %-ը՝ 417 հոգի։ Ինստիտուտին կից կազմակերպվում է նաև լավ սարքավորված ռազմա-սանիտարական կաբինետ։

Սանիտարական կորպուսի ուսանողների հետ անց են կացնում պարապմունքներ որոշակի ծրագրով՝ նրանց ռազմա-սանիտարական գիտելիքները լայնացնելու և խորացնելու համար։ Սանկորպուսի ուսանողները կատարում են և կարմիրխաչական պրակտիկ աշխատանք-պարապմունք՝ սանիտարական պոստերի պետեր պատ-

բաստելու ուղղությամբ, պարապմունք առաջին օգնության խմբակներում. ֆաբրիկաների, գործարանների, բանվորական բարակների, հանրակացարանների, ճաշարանների, պարենամթերային պահեստների և այլ օբեկտների սանիտարական դրության քննություն, ինչպես և ակտիվ մասնակցություն են ցուցաբերում սանիտարահիգիենիկ թերությունների վերացման գործին։ Բավականանք նշելով, որ միայն 1932 թվին, մասնակցելով հիշյալ թերությունների վերացման համար կազմակերպված շաբաթօրյակներին, ուսանողները ծախսել են 2000 բանվորական օր։

1932—1933թ.թ. Ընկերությունը հանձն է առնում նաև ռեսպուբլիկայի երեք խոշոր շրջանների զորակոչիկների մեջ առողջական աշխատանքների կատարման գործը, անց է կացնում ծաղկի ու տիֆերի դեմ կանխիչ պատվաստում և պատրաստում է նրանց ռազմա-սանիտարական դիտելիքների՝ առաջին օգնություն ու փոխօգնություն ցույց տալու կոմպլեքսով։

Արդյունաբերական և գյուղատնտեսական օբեկտներում կազմակերպվում են՝ 1933 թվին 605, իսկ 1934 թվին՝ 977 սանիտարական պոստ։ Ռեսպուբլիկայի համարյա բոլոր խոշոր գործարաններն ու ֆաբրիկաները, կոլխոզներն ու սովխոզները ընդգրկվում են սանիտարական պոստերի ցանցով։

1932 թ. հոկտեմբերին կայանում է ՍՍՌՄ Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի Ընկերությունների 1-ին համագումարը և Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության 2-րդ համագումարը։ Երկու համագումարն էլ նշում են սանիտարական-պաշտպանական աշխատանքների ուժեղացման, աշխատավորական լայն մասսաներին առաջին օգնության խմբակներում, դրուժիններում, քույրական, դեզինֆեկտորական, սանիտարական դասընթացներում ներգրավելու անհրաժեշտությունը։ Այդ թվին էլ Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը լրջորեն ձեռնամուխ է լինում սանպաշտպանական կադրերի մասսայական պատրաստմանը, աշխատանքի այդ ճյուղը դարձնելով իր գործունեության հիմնական ճյուղերից մեկը։

Մանուկների առողջության պահպանման բնագավառում Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը, հետևելով սովետական Կարմիր Խաչի հիմնադիրներից մեկի և Ռուսաստանյան Կարմիր Խաչի Ընկերության Կենտրոնական Կոմիտեի անվավոր նախագահի

(1919 թ. հուլիսից մինչև 1928 թ. փետրվարի 6-ը) Զ. Պ. Սոլովյովի կոչին, 1927 թվականից հանձն է առնում ռեսպուբլիկայի պիոներական կազմակերպությունների շեֆությունը և կազմակերպում է «Պատանի պիոներների առողջության ծառայությունը»։

1927, 1928, 1929 թ.թ. Մալկաձորի (Դարաչիչաղի) պիոներական ճամբարները, բաղկացած 800 պատանի պիոներներից, Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության կողմից կատարելապես ապահովվում են բժշկական օգնությամբ։ 1928 թ. օգոստոսի 15-ից Կարմիր Խաչը Պիոներական Տանը կից կազմակերպում է առանձին բժշկական կաբինետ, որը բժշկի գլխավորությամբ աշխատանք է տանում ինչպես մանուկների առողջության պահպանման, այնպես էլ պիոներների սանիտարա-հիգիենիկ գիտելիքները բարձրացնելու ուղղությամբ։ Պիոներներից կազմակերպվում է սանիտարական 7 խմբակ (առաջին օգնության), տարվում են տեսական և պրակտիկ պարապմունքներ սանիտարական թեմաների շուրջ, պատրաստվում են պիոներ-սանիտարներ և այլն։ Բժշկական կաբինետը պարբերաբար անց է կացնում պիոներների, նրանց կայարանների և կենցաղային պայմանների բժշկական քննություն։ Ռեսպուբլիկայում 6000 երեխաներ ընդգրկում են պիոներների առողջության Կարմիր Խաչի ծառայության մեջ։ Պիոներ Տանը կից բժշկական կաբինետը, նրան առընթեր կազմակերպված մարդաչափական կաբինետի հետ միասին, գործում է մինչև 1934 թ. ներառյալ։ Պիոներական բրիգադները Կարմիր Խաչի կողմից ապահովվում են բժշկական դեղարկղներով։ Նյութական և բժշկական օգնություն է ցույց տրվում նաև Ստեփանավանում գտնվող պիոներական ճամբարին։

Մայրության և մանկության պահպանման համար ընկերությունը համապատասխան աշխատանք է տանում իր բուժական ցանցի ծննդաբերական բաժանմունքների միջոցով և մանկամսուրներ, մանկական հրապարակներ, կոնսուլտացիաներ կազմակերպելով։

1928 թ. մանկամսուրներ են կազմակերպվում Լենինականում, Գորիսում և Ղամարլուում, 1929 թ. մանկական հրապարակներ Դիլիջանում, Ղարաքիլիսայում, Թուրքմանչուում և Երևանում։ 1931 թ. երկրաշարժից տուժած Զանգեզուրում, Մեղրիում բացվում են 17 մանկամսուր և 5 մանկական հրապարակ։ Մայրերին և մինչև եռ-

ամյա հասակի երեխաներին, նույն այդ շրջաններում, բաց է թողնվում սպիտակեղեն, վերնահագուստ և կոշիկ։

Ռեսպուբլիկայի զանազան շրջաններում 1932 թ. կազմակերպվում են 13 մանկական հրապարակ, 400 մանուկների տարողությամբ, սեզոնային 29 մսուր, 816 մահճակալներով, և մեկ մշտական մսուր աղքեջանական երեխաների համար՝ 20 մահճակալով։

1931-32 թթ. կազմակերպվում է 2 կոնսուլտացիա և մեկ մանկական սանատորիա, 50 երեխայի համար, 1933 թ.՝ 11 մշտական և 15 սեզոնային մսուր, մեկ մանկապարտեզ և մեկ մանկահրապարակ։

Մանուկների առողջացման համար նյութական օգնություն է ցույց տրվում Լենինականի Տեքստիլ ֆաբրիկայի մանկական ճամբարին և Երևանի Առժողկոմատի մանկական սանատորիայի պիոներներին։

1933 թ. ամռանը Արտեկ սանատորիան են ուղարկվում 12 երեխա, Դիլիջան կուրորտում բացվում է սանատորիա Կարմիր Բանակի հրամկազմի 50 երեխայի համար։

1934 թ. բացվում է 6 սեզոնային մսուր 150 մահճակալով, որից 3-ը Լենինականում, և մնացածը Ղուրդուղուլիում, Ղամարլուում և Աղբաբայում, յուրաքանչյուրը 25 մահճակալով։

1934 թ. 150 մահճակալով պիոներական ճամբարներ են կազմակերպվում Ալիքուչակում (Աբարանի շրջան) և Թայչարոխում։ Ամռանը այդ ճամբարներում հանգստանում է 593 պիոներ։ Առաջին օգնության խմբակներում ընդգրկվում է 100 պիոներ։ Բացի բժշկական սպասարկումից, Կարմիր Խաչի ընկերությունը ստանձնում է նաև ճամբարների սննդի և կահավորման ծախսերը։ Նույն այդ տարում, թույլ առողջության տեր 292 երեխաների համար, ընկերությունը խոտորջրում կազմակերպում ու պահում է ճամբար-սանատորիա։

Բազմաթիվ դպրոցներում կազմակերպվում են ռազմա-սանիտարական դիտելիքների խմբակներ, սանիտարական շաբաթօրյակներ երեխաների և Կարմիր Խաչի ակտիվի մասնակցությամբ, ինչպես նաև զրույցներ երեխաների հետ՝ սանիտարական-լուսավորական թեմաներով։

1934 թ. առաջին անգամ 6 դպրոցում կազմակերպվում են սանիտարական պոստեր, որոնք աշխատում են դպրոցական բժիշկների ղեկավարությամբ։ Սանիտարական բոլոր պոստերը ապահովվում են դեղարկղներով, առաջին օգնության պայուսակներով և սպիտակեղենով։

Անցյալում կազմակերպված բուժպրոֆիլակտիկ ցանցը շարունակում է իր աշխատանքը։ Ունենալով բավականաչափ փորձ, ցանցի բժշկական անձնակազմը աշխատանքը վարում է այս անգամ ավելի կազմակերպված, ավելի պլանավորված, այն հաշվով, որպեսզի սպասարկվող շրջաններում ըստ հնարավորին կատարվեն առողջապահական բոլոր միջոցառումները։ 1929 թ. սեպտեմբերին Վեներական դիսպանսերը Պառնիից տեղափոխվում է Նալբանդ, որտեղ նույնպես նկատվում է մաշկա-վեներական հիվանդությունների տարածում։

Բուժական-պրոֆիլակտիկ ցանցի տարածման, սանիտարական դրուժինների, առաջին օգնության խմբակների, սանիտարական պոստերի, ռազմա-սանիտարական խմբակների կազմակերպման, ՊՍՊ-ի կոմպլեքսով բնակչության պատրաստման, մանկամսուրների, մանկահրապարակների, մանկական սանատորիաների, «Պիոներների առողջության ծառայություն» կազմակեպության ստեղծման հետևանքով նշանակալիորեն բարելավվում են ընկերության մասսայական առողջացման և բուժական պրոֆիլակտիկ աշխատանքները։ Բոլոր սանիտարական պոստերը արդյունաբերական ձեռնարկություններում, կոլխոզներում և սովխոզներում ապահովվում են դեղարկղներով և առաջին օգնության սանիտարական պայուսակներով։ Սանիտարական պոստերի պետերն ու շարքային անդամները համապատասխան պատրաստություն ստանալուց հետո, անհրաժեշտության դեպքում առաջին օգնություն են ցույց տալիս ցեխերում, կոլխոզներում, սովխոզներում, դաշտավարական բրիգադներում։ Նրանք և սանիտարական դրուժինները հանդիսանում էին արդյունաբերական և գյուղատնտեսական օբեկտներում սանիտարա-առողջական միջոցառումների տարածողները։ Սանիտարական դրուժինների և Կարմիր Խաչի ակտիվի ուժերով ամեն տարի անց էին կացվում սանիտարական ռեյդեր՝ բանվորական հանրակացարաններում, ճաշարաններում, խոհանոցներում, երկա-

թուղային բուֆետներում ու գնացքներում, կոլխոզներում, սովխոզներում, դպրոցներում և այլուրեք սանիտարական բացերը բացահայտելու և վերացնելու նպատակով։ Բժշկական Ինստիտուտի դրուժինիկները իրենց հրամկազմի՝ բժիշկների հետ համատեղ, 1933 թ.—1934 թ. գարնանացանի կամպանիայի ժամանակ սպասարկում են բազմաթիվ գյուղերի։ Նույն այդ թվականներին կազմակերպվում և կոլխոզներն ու սովխոզներն են ուղարկվում շարժական ամբուլատորիաներ (4), բժշկական բրիգադներ(4) և ատամնաբուժներ։ Կոլխոզներում ու սովխոզներում նրանք բժշկական ու ատամնաբուժական օգնություն են ցույց տալիս կոլխոզնիկներին, ՄՏՏ կայանների աշխատողներին, բժշկական քննության են ենթարկում զինակոչիկներին, դպրոցական երեխաներին, կոլխոզնիկներին, կատարում են զանազան կանխիչ պատվաստումներ, կարդում են դասախոսություններ և այլն։

1933 թ. գարնանացանի կամպանիայի ժամանակ Զափան. Ղամարլու և Ղուրդուղուլի ուղարկված բժշկական բրիգադները կատարում են հետևյալ աշխատանքները. պրոֆիլակտիկ և բուժական խինիզացիայի են ենթարկում 1999 հոգու, պատվաստի՝ 337 հոգու, բժշկական առաջին օգնություն են տալիս 6056 հիվանդի, բժշկական սպասարկում՝ 214 զինակոչիկի, մանկամսուրներ կազմակերպում և այլն։

Կոմերիտական և Պաջը Ավիաքիմի մանյուվրների ժամանակ Կարմիր Խաչի դրուժիններն էին վարում մանյուվրների ամբողջ սանսպասարկումը. նրանց վրա էր ընկնում նաև տոնախմբություններին (սպարտակիադաներ և այլն) մասնակցող բնակչության սանսպասարկումը։ 1934 թվին Երևանում, Լենինականում և Սևանում դտնվող սննդամթերային արդյունաբերության օբեկտների սանիտարական սպասարկումը ստանձում է Հայաստանի Կարմիր Խաչը, ըստ որում միայն սննդամթերային հիշյալ օբեկտներում 1934 թ. անց է կացվում 1614 պարապմունք, պատրաստվում է սանպոստերի 50 պետ, 10 դեզինֆեկտոր, ըստ ՊՍՊ-ի կոմպլեքսի՝ 316 հոգի, կազմակերպվում է 50 սանիտարական պոստ, 1 սանդրուժին, 15 գրադարան ՝ եղածներին ի լրացում՝ Կարմիր Խաչի 16 նոր բջիջ։ Սանիտարական բժշկի գլխավորությամբ սանպոստերը պարբերաբար ստուգում են

սննդամթերային արդյունաբերության հումքի և կիսաֆաբրիկատների փոխադրման ու պահպանման պայմանները։

1934 թվին Կիրովի անվան գործարանին առընթեր Կարմիր Խաչը կազմակերպում է դեզինֆեկցիոն բյուրո՝ ցնցուղային, մեքենայացված լվացքատան, երեք վարսավիրանոցների և երեք սանիտարական պոստերի բաժանմունքներով։ Մեկ տարվա ընթացքում հիշյալ բյուրոն կատարել է հետևյալ աշխատանքները. 31272 մետր մակերեսով շենքերի, 89100 կգ. հագուստի դեզինֆեկցիա. ցնցուղի տակով անցել է 24530 մարդ, լվացարանով անցել է 3300 կգ. սպիտակեղեն, սափրվել է 37215 մարդ և այլն։

1931 թ. ապրիլի 28-ին Զանգեզուրում և Մեղրիում տեղի է ունենում տարերային աղետ՝ երկրաշարժ, որը լուրջ ավերածություններ է պատճառում հիշյալ շրջանների բնակչությանը։ Կառավարությունը անհապաղ միջոցներ է ձեռք առնում օգնություն ցույց տալու և երկրաշարժի հետևանքները վերացնելու համար։ Օգնության են գալիս նաև ՍՍՌՄ Կարմիր Խաչի և կարմիր Կիսալուսնի ընկերությունների Միությունը և միութենական ռեսպուբլիկաների կարմիրխաչական կազմակերպությունները։

Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը անհապաղ կազմակերպում և տուժած վայրերն է ուղարկում բժշկական 12 ջոկատ, նրանց ապահովելով մեծ քանակությամբ բժշկական և այլ դույքով։ Սկզբնական շրջանում բժշկական բոլոր ջոկատները, բացի բժշկական օգնություն ցույց տալուց, իրենց սպասարկած տեղամասերում բաց են անում նաև սննդամթերային կետեր (12 կետ)։ Մայիսի 15-ից Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը պլանային կարգով կատարում է հետևյալ աշխատանքները։

1. Կազմակերպում և երկու ամսով Գորիսի շրջանն է ուղարկում հինգ բժշկական ջոկատ, որից մեկը աչքի հիվանդությունների դծով։

2. Մեկ ուկես ամսով Սիսիանի և Ղափանի շրջաններն է ուղարկում 4 բժշկական ջոկատ։

3. Ղափանում 7 ամսով բաց է անում բժշկական և մալարիկ կետեր։

4. Սիսիանում 7 ամսով բաց է անում մեկ բժշկական և մեկ ակնաբուժական կաբինետ։

5. Կարմիր Խաչի Սիսիանի հիվանդանոցում ավելացնում է ևս 20 մահճակալ։

6. Տուժած շրջաններում բաց է անում 17 մսուր և 4 մանկա-հրապարակ, որոնք գործում են չորս ամիս։

Բացված 12 սննդամթերային կետերը գործում են մինչև հուլիսի 1-ը, մթերքով մատակարարելով ամեն օր 2500 մարդու։ Հղի կանանց և մինչև 3 տարեկան երեխաներին բաց է թողնվում օճառ, սպիտակեղեն, հագուստ և կոշկեղեն։

Կարմիր Խաչը երկրաշարժից տուժած հիշյալ շրջաններում իր օբեկտների համար կատարում է նաև շինարարություն՝ 400000 ռուբլու արժողությամբ։

Իր առաջնահերթ պարտականությունը համարելով Կարմիր Բանակին աջակցելը, Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը, բացի բժշկական կադրերի պատրաստումից և զինակոչիկների առողջական վիճակը հոգալուց, օգնություն է ցույց տալիս նաև զինվորական զորամասերին՝ հրամկազմի և նրանց ընտանիքների կենցաղային պայմանները բարելավելու և առողջական դրությունը ամրացնելու ուղղությամբ։ Այդ նպատակով 1933 և 1934 թթ. զորամասերի հրամանատարական կազմերի համար կազմակերպվում են դիշերային սանատորիաներ։ 1934 թվին Դիլիջանում կազմակերպվում է ճամբար՝ սահմանապահ զորամասերի հրամկազմի երեխաների համար և ամբուլատորիա՝ նրանց ընտանիքներին սպասարկելու համար։

ՍՍՌՄ Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունների Միության առաջին համագումարը և Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության 2-րդ համագումարը որոշում ընդունեց՝ կազմակերպել սոցկենցաղային հիմնարկություններ-բաղնիքներ, լվացքատներ, վարսավիրանոցներ և այլ սանիտարական տնտեսական օբեկտներ. իսկ բուժական-պրոֆիլակտիկ գծով՝ ծավալել հիվանդանոցների, ամբուլատորիաների, սանատորիաների, հանգստյան տների և արտադրական այլ հիմնարկների նոր ցանց։

1931 թ. Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը կազմակերպում և բաց է անում մեկ ծննդյան տուն Երևանում, 40 մահճակալով, որը նույն տարում ընդունում է 497 ծննդկան։ Երկրորդ ծննդատունը, 25 մահճակալով, բացվում է 1932 թ. Լենինականում։ Երկու ծննդատները 1932 թ. ընդունում են 4238 ծննդկան, իսկ 1933 թվին՝ 3430 ծննդկան։ 1931 թ. նույն քաղաքներում կազմա-

կերպվում է երկու գինեկոլոգիական կիսաստացիոնար, որոնք ընդունում են 14947 հոգի։

Բացվում են նաև սոցկենցաղային տնտեսաշինարարական հիմնարկություններ։ 1932 թ. գործում են 6 նոր վարսավիրանոց, մեկ ստերիլիզացիոն բյուրո, 2 լվացքատուն, 1933 թվին ևս 26 վարսավիրանոց, 2 լվացքատուն, 1 ստերիլիզացիոն բյուրո, 1 բաղնիք, 1934 թվին՝ 51 վարսավիրանոց, 2 լվացքատուն, 1 ստերիլիզացիոն բյուրո, 1 բաղնիք, 1 դեղբյուրո, 1 դեղատուն, 1 սանհիգիենիկ խանութ, 1 պրոտեզային արհեստանոց, 1 դերձակարան, 1 կաթի ֆերմա, 1 այգեգործական տնտեսություն, 1 հյուրանոց, 1 արվարձանային տնտեսություն։

ՍՍՌՄ ԿԿ և ԿԿԸՄ Գործկոմի դատապարտությամբ ընկերությունը ձեռնամուխ է լինում ռեսպուբլիկայի մայրաքաղաքում՝ Երևանում, խոշոր օրինակելի պոլիկլինիկայի շինարարության։ Քառահարկ, 20025 խորանարդ մետր ծավալով և 1651229 ռ. արժողությամբ շենքը ավարտվում է 1937 թվականին։

1928 -1931 թթ. ընթացքում ռեսպուբլիկայի շրջաններում իր աշխատանքն է շարունակում Կարմիր Խաչի ընկերության անցյալ տարիներում կազմակերպված բուժական մշտական ցանցը։

Արտիայի տրոպիկական կայանը 1928 թ. սեպտեմբերի 1-ից վերակառուցվում է բժշկական պունկտի։ 1928 թ. ամռանը Նոր-Բայազետի գավառում աշխատում է բժշկական ջոկատ աշքի հիվանդությունների դեմ։ 1929 թ. նույնպիսի մի ջոկատ աշխատում է Ղազախի շրջանում։ 1929 թ. հիվանդանոց է բացվում Սևանում։ 1930 թ. Սև-քարում և Սիսիանում կազմակերպվում են հիվանդանոցներ, որոնք Կարմիր Խաչի բուժական ցանցի սիստեմում գործում են մինչև 1933 թ. հունիսը, որից հետո բոլոր երեք հիվանդանոցներն էլ անցնում են Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի տնօրինությանը։ 1930 թ. վերջին առողջապահության օրգաններին են հանձնում նաև Քեշիշքենդի և Մեղրու տրոպիկական կայանները, իսկ 1933 թ. հունվարի 1-ից՝ Էջմիածնի տրոպիկական կայանը։

Ռեսպուբլիկայի առողջապահության օրգանները, սկսած Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատից, առողջապահության շրջանային բաժիններից, մինչև շրջանային շարքային բժիշկները, քաջ հասկանալով Կարմիր Խաչի ընկերության նպատակները

ու խնդիրները, օգնություն են ցույց տալիս նրան ինչպես կադրերի պատրաստման գործում, այնպես էլ նրա բուժա-պրոֆիլակտիկ ցանցում անմիջական աշխատանք կատարելով։ Կարմիր Խաչի ընկերության համերաշխ աշխատանքը առողջապահական օրգանների հետ, առաջին հերթին արտացոլվում է սոցիալ-կենցաղային հիվանդությունների և մեր բնաբույս պաթոլոգիայի՝ մալարիայի խիստ նվազեցման մեջ։

Նշանակալիորեն ամրանում է նաև ընկերության բուժական-պրոֆիլակտիկ ցանցը։

Սանիտարա-պաշտպանական աշխատանքների ուժեղացման անհրաժեշտության կապակցությամբ, 1933 թվականին Կարմիր Խաչի ընկերությունից Առողջապահության ժողովրդական Կոմիսարիատին է փոխանցվում զուտ բուժական ցանցը, առանձին բացառություններով։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՍՌՄ-ՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԱՎԱՐՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ստեղծված միջազգային դրությունը անհրաժեշտություն առաջ բերեց՝ վերակառուցել Կարմիր Խաչի ընկերության աշխատանքները, պաշտպանական աշխատանքները խստորեն ուժեղացնելու ուղղությամբ։

Ճապոնիայի հարձակումը Չինաստանի վրա 1932 թվին, ֆաշիստների իշխանության գլուխ անցնելը Գերմանիայում 1933 թվին և սանձարձակորեն պատերազմի նախապատրաստվելը, ֆաշիստական Իտալիայի հարձակումը Հաբեշստանի վրա և այն զավթելը 1935 թվին, քաղաքացիական կռիվները Իսպանիայում, այնտեղ դեներալ Ֆրանկոյի՝ ֆաշիստական Գերմանիայի և Իտալիայի այդ խրտվիլակի իշխանության գլուխ անցնելը, Ճապոնիայի զավթողական մեծ ախորժակները, նրա ներխուժումը կենտրոնական Չինաստան,— այս ամենը պարզ էին դարձնում կապիտալիստական երկրների միջև սրվող հակասությունները, որոնք հղի էին նոր պատերազմի բռնկման հնարավորությամբ։ Մեր երկիրը, սոցիալիստական հասարակության իր բնույթի շնորհիվ, զերծ կապիտալիստական հասարակությանը հատուկ պարբերաբար առաջ եկող տնտեսական ճգնաժամերից, հաջողությամբ վերականգնած ժողովրդական տնտեսությունը, և անվայրէջք ընթանալով դեպի առաջ, ավարտում էր ՍՍՌՄ-ում սոցիալիստական հասարակության կառուցումը։ Կապիտալիստական շրջապատման պայմաններում, պատերազմի վտանգը մեր երկրի համար գոյություն ուներ ինչպես արևելքում, այնպես էլ արևմուտքում, այդ պատճառով էլ երկրի պաշտպանունակության հարցերը ձեռք են բերում առաջնահերթ

նշանակություն։ Միջազգային կացության նման բարդացումը, անշուշտ, անմիջապես վերաբերում էր նաև Կարմիր Խաչի ընկերության գործունեությանը, որի գլխավոր խնդիրը եղել է և մնում է սանիտարա-պաշտպանական աշխատանքը։

1934թ. փետրվարի 17-ին ՍՍՌՄ ԿԳԿ Նախագահությունը հաստատում է Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունների Միության նոր կանոնադրությունը։ Համաձայն նոր կանոնադրության, որոշ չափով փոխվում է Կարմիր Խաչի ու Կարմիր Կիսալուսնի ընտրությունների Միության կազմակերպչական կառուցվածքը, այսինքն՝ Կարմիր Խաչի ու Կարմիր Կիսալուսնի ընկերությունների բարձրագույն ղեկավար օրգանը, ըստ նոր կանոնադրության, հանդիսանում է ԿԽ-ի և ԿԿ-ի ընկերությունների Միության Գործկոմը, որը ընտրվում է ընկերությունների համամիութենական համագումարում, որտեղ նաև ընտրվում է վերստուգիչ հանձնաժողովը։ Կանոնադրությունը նախատեսնում է Կարմիր Խաչի ընտրականությունը ներքևից վերև։

Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության ձեռք բերած հաջողությունները, որոնք արտահայտվում էին սկզբնական կազմակերպությունների և շրջանային կոմիտեների անդամների թվի աճով, ինչպես նաև մասսայական-առողջական աշխատանքով,— դեռ ևս ամրապնդված չէին։ Նախկին առաջընթաց շարժման փոխարեն 1934 թ. և առանձնապես 1935 թ. նկատվում էր սանիտարա-պաշտպանական, մասսայական-առողջական և ագիտացիոն-մասսայական աշխատանքների տեմպերի խիստ անկում, որովհետև ընկերությունը հիմնական ուշադրությունը նվիրել էր տնտեսական-տնտեսական գործունեությունը։

Կարմիր Խաչի սկզբնական կազմակերպությունների շրջանային կոմիտեների և ընկերության անդամների թիվը 1934 թվին և առանձնապես 1935 թվին խստորեն նվազում է, մի բան, որ չէր կարող չներգործել սանիտարա-պաշտպանական աշխատանքների ընդգրկման և որակի վրա։

Այդ ցուցանիշների համեմատական տվյալները հետևյալներն են.

№ №		1933 թ.	1934 թ.	1935 թ.
1	Շրջանային կոմիտեների թիվը	28	28	21
2	Սկզբնական կազմակերպություն. թիվը	890	721	599
3	Ընկերության անդամների թիվը	59390	41800	34958

Այդ իսկ պատճառով նույնպիսի աննախանձելի դրություն էր նկատվում այդ տարիներին նաև եղբայրական մի քանի այլ ռեսպուբլիկաների Կարմիր Խաչի ու Կարմիր Կիսալուսնի ընկերությունների աշխատանքներում։ Ստանալով կառավարության համաձայնությունը՝ բժշկա-սանիտարական տնտեսական հիմնարկությունների կազմակերպման և բացման մասին, ֆինանսական բազան ամրապնդելու նպատակով, Կարմիր Խաչի ընկերությունը, այդ թվում և Հայաստանի կարմիրխաչական կազմակերպությունը, խիստ տարվեց տնտեսական-առևտրական գործունեությամբ և տեսադաշտից դուրս թողեց իր գլխավոր խնդիրը՝ սանիտարական աշխատանքը։ Կարմիր Խաչի այս մեծ սխալը ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը երկիցս նշեց իր որոշումներով — առաջին անգամ 1935 թ. սեպտեմբերի 5-ի № 17—05 և երկրորդ անգամ՝ 1938 թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ։ Վերջին որոշման մեջ ասված էր.

«Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունների Միությունը, փոխանակ կատարելու իր հիմնական խնդիրը՝ Սովետական Միության աշխատավորության լայն մասսաներին երկրի սանիտարական պաշտպանության ամրապնդման գործում ներգրավելը, զբաղվում է իրեն բոլորովին ոչ հատուկ տնտեսական-առևտրական գործունեությամբ։ Մասսայական պաշտպանական աշխատանքի համար պետությունից ստանալով արտոնություն և հարկերից դանձումներ, որոնք կազմում են ավելի քան 90 %-ը նրա բոլոր մուտքերի, Կարմիր Խաչի ու Կարմիր Կիսալուսնի ընկերությունների Միության գործկոմը և նրա տեղական կազմակերպությունները առանց վերահսկողության ծախսել են այդ միջոցները այնպիսի նպատակների վրա, որոնք կապ չունեն սանիտարապաշտպանական աշխատանքի հետ»։

ՍՍՌՄ ԺԿԽ-ի նույն այդ որոշման մեջ, այնուհետև, ասված է.

«Հանձնարարել Կարմիր Խաչի ու Կարմիր Կիսալուսնի ընկերությունների միությանը.

ա) Հիմնարկություններում, կոլխոզներում, սովխոզներում, ձեռնարկություններում և շենքերում ստեղծել Կարմիր Խաչի ու Կարմիր Կիսալուսնի կազմակերպությունների սանիտարական պոստերի ու դրուժիններին լայն ցանց։

բ) Պատրաստել սանիտարական պաշտպանության մասնագիտական կադրեր (քույրեր, սանիտարներ, դեզինֆեկտորներ)։

գ) Երկրի քաղաքացիական բնակչության մեջ կատարել լուսավորական ու դաստիարակչական և սանիտարա-պաշտպանական աշխատանքներ։

Մինչև ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների խորհրդի 1935 թ. սեպտեմբերի 5-ի № 17—05 որոշումը քաղաքային և շրջանային բոլոր կոմիտեները հիմնական ուշադրությունը բևեռում էին իրենց տերիտորիայում գտնվող տնտեսական-առևտրական հիմնարկությունների վրա։ ՍՍՌՄ ԺԿԽ-ի 1935 թ. սեպտեմբերի 5-ի № 17—05 որոշման, ինչպես նաև ՍՍՌՄ Կարմիր Խաչի ու Կարմիր Կիսալուսնի ընկերությունների միության որոշման հիմամբ, Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության նախագահությունը 1936 թ. հոկտեմբերի 28-ին արձանագրում է հետևյալ թերությունները իր ընկերության աշխատանքներում և հանում է հետևյալ որոշումը.

«Ելնելով ՍՍՌՄ ԺԿԽ-ի 1935 թ. օգոստոսի 5-ի № 17—05 որոշումից և ՍՍՌՄ Կարմիր Խաչի ու Կարմիր Կիսալուսնի ընկերությունների միության նախագահության 1935 թ. սեպտեմբերի 10-ի որոշումից, տնտեսական ցանցի գործունեությունը ղեկավարելու համար Կենտրոնական Կոմիտեին կից կազմակերպել բժշկա-սանիտարական վարչություն և բժշկա-սանիտարական վարչության մի քանի շրջանային օղակներ, որոնց տնօրինությանը հանձնել տնտեսական հիմնարկությունները։ Բժշկա-սանիտարական շրջանային օղակները ենթակա են Կարմիր Խաչի ԿԿ-ի բժշկա-սանիտարական Վարչությանը։

Կարմիր Խաչի քաղաքային և շրջանային կոմիտեները իրավունք չունեն խառնվել տնտեսական հիմնարկների ֆունկցիաների և կառավարման մեջ»։

Այս որոշմամբ Նախագահությունը, քաղաքային և շրջանային կոմիտեների տնօրինությունից հանելով տնտեսական հիմնարկու-

թյունները, նրանց գործունեությունը բացառապես ուղղում էր կազմակերպությունների հիմնական խնդրի՝ սանիտարական-պաշտպանական և սանիտարաառողջական աշխատանքի կատարման վրա։

1936 թ. սեպտեմբերի 15—17-ը կայանում է Հայաստանի Կարմիր Խաչի ռեսպուբլիկական 3-րդ համագումարը։ Ընկերության գործունեության ուժեղացման համար, հատկապես սանիտարարա-պաշտպանական և սանիտարա-առողջական աշխատանքների բնագավառում, համագումարը սկզբնական կազմակերպություններին առաջադրեց հետևյալ խնդիրները.

կ. 2. «Համագումարը Կարմիր Խաչի Կենտրոնական և շրջանային կոմիտեների ուշադրությունը հրավիրում է ընկերության անդամների հոսունությունը վերացնելու անհրաժեշտության, ընկերության անդամի ակտիվության բարձրացման վրա։ Համագումարը առաջարկում է՝ պրակտիկ աշխատանքի հիմքի վրա մինչև 1937 թ. սեպտեմբերը Կարմիր Խաչի ընկերության անդամների թիվը Հայաստանում հասցնել մինչև 50000-ի։

կ. 4. «Համագումարը նշում է ագիտացիոն-մասսայական աշխատանքի ուժեղացման անհրաժեշտությունը։ Այդ նպատակով անհրաժեշտ է ավելացնել Կարմիր Խաչի անկյունների, դասախոսությունների ու զրույցների քանակությունը, հայերեն լեզվով հրատարակել գրականություն և պլակատներ։

պ. 6. «Համագումարը Կարմիր Խաչի Կենտրոնական և շրջանային կոմիտեների ուշադրությունը դարձնում է սանիտարական արշավների, սանիտարական միջոցառումների կազմակերպման աշխատանքների ուժեղացման անհրաժեշտության վրա։ Առաջին հերթին այդ աշխատանքները կատարել կոլխոզներում և սովխոզներում։

կ. 8. «Համագումարը նշում է, որ կանանց աննշան քանակություն է ընդգրկված ՊՍՊ-ի կրծքանշանակիրների պատրաստման գործում։ Անհրաժեշտ է ուժեղացնել այդ աշխատանքը, ընդգրկելով կոլխոզնիկուհիների և բանվորուհիների մեծ քանակություն։

կ. 14. «Համագումարը անհրաժեշտ է համարում առավել սերտ կոնտակտի ստեղծումը ինչպես կենտրոնում Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի հետ, այնպես էլ շրջաններում առողջապահության շրջանային բաժինների հետ։

կ. 15. «Աշխատավորության մեջ սանիտարական գիտելիքների տարածման և սանիտարական կուլտուրան բարձրացնելու համար մշակել համապատասխան միջոցառումներ, Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի և Բուժսանաշխ Միության հետ համատեղ»։

Հետագայում, առանձնապես 1938 թ., ընկերության գործունեության մեջ նկատվում է որոշ տեղաշարժ աշխատանքի այն բնագավառների բարելավման և ուժեղացման ուղղությամբ, որոնք ունեն պաշտպանական նշանակություն։

Կազմակերպչական-մասսայական և ագիտացիոն-մասսայական աշխատանքները այդ շրջանում ունեն հետևյալ ցուցանիշները։

№	Աշխատանքի անվանումը	1935	1936	1937	1938	1939	1940
1	Կարմիր Խաչի շրջանային կոմիտեների քանակությունը	21	30	28	38	40	40
2	Կարմիր Խաչի ակզբնական կազմակերպությունների քանակությունը	599	799	885	1000	1563	1846
3	Կարմիր Խաչի ընկերության անդամների թիվը	34958	36631	44608	53586	85165	99424
4	Դասախոսությունների քանակությունը	241	297	476	684	455	1134
5	Կարմիր Խաչի սանանկյունների քանակությունը	51	97	135	174	99	137
6	ա) Բրոշյուրների հրատարակ. քանակ.	—	—	—	2	2	1
	բ) Պլակատների և լոզունգ. հր. քանակ.	13	—	1	—	—	—
7	Ռադիո ելույթների քանակությունը	—	—	4	10	25	13
8	Սանիտարական թեմաների քանակությունը	—	—	—	21	25	44
9	Սանիտարական արշավների քանակությունը	—	—	148	87	96	102
10	Սանիտարական ցուցահանդեսների քանակությունը	—	—	—	134	78	100
11	Սանիտարական երեկոների քանակությունը . . .	—	—	—	25	32	60
12	Բժշկական-ագիտացիոն բրիգադների քանակությունը	—	—	—	—	1	21

Շրջանային կոմիտեների քանակությունը 1938—1940 թ.թ. թեև բացարձակ թվերով ավելանում է, սակայն մոտ մի տասնյակ կոմիտեներ, առանձնապես նորաստեղծներից, բավականաչափ ամրապնդված չէին և թույլ էին աշխատում։ 1939—1940 թթ. որոշ չափով թուլանում է ագիտացիոն-մասսայական աշխատանքը։

Սանիտարա-պաշտպանական կադրերի պատրաստման ցուցանիշները հետևյալն է.

№	Աշխատանքի անվանումը	1935	1936	1937	1938	1939	1940
1	Բժիշկների պատրաստում	148	17	—	—	—	—
2	Դեղինֆեկտորների պատրաստում	42	37	—	—	51	—
3	Սանիտարների պատրաստում	30	—	—	40	492	397
4	Սանդրուժիններ պատրաստում	11	8	8	9	11	16
5	Սանդրուժիններ հրամկազմի պատրաստում	35	18	—	—	—	—
6	Սանիտարական ուսուցիչների պատրաստում	—	105	94	46	19	—
7	Սանիտարական հսկիչների պատրաստում	—	31	—	—	—	—
8	Կարմիր Խաչի սկզբնական կազմակերպությունների նախագահների պատրաստում	—	32	45	—	349	350
9	ՊՍՊ-ի 1-ին ասոցիացիայի պատրաստում	3171	3434	6554	7401	20292	34238
10	ՊՍՊ-ի 2-րդ ասոցիացիայի պատրաստում	—	286	352	431	2379	3726
11	ԵՊՍՊ-ի պատրաստում . . .	—	952	2013	4778	16067	16332
12	Սան պոստերի պիտերի պատրաստում	—	—	—	442	450	511
13	Դոնորական կայանների պատրաստում	—	—	—	—	—	1404
14	Կարմիր Խաչի շրջկոմի նախագահների պատրաստում	—	—	—	—	—	30

Կադրերի պատրաստումը ընթանում էր ոչ միայն դպրոցական դասարանային պարապմունքների ձևով, այլև որոշ կադրեր մարզվում էին դաշտային, երթային և մանյովրային ուսումնառությամբ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-րդ տարեդարձին, 1935 թ., կազմակերպվեց Արագած լեռան կատարը բարձրանալու (ծովի մակերևույթից 4095 մետր բարձրությամբ) մասսայական երթ։ Այդ երթին հաջողությամբ մասնակցեցին նաև Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության 2 դրուժին— մեկը Երևանից, մյուսը Լենինականից։

Նույն թվականի սեպտեմբերին մեկ այլ դրուժին բարձրանում է Էլբրուսի գագաթը։ Այդ էքսպեդիցիայի խնդիրների հաջող կատարումը նշվում է ընկերության նախագահության 1935 թ. սեպտեմբերի 28-ի որոշման մեջ։ Դրուժինիկուհիների գիտելիքները ստուգելու և ամրապնդելու նպատակով 1935 թ. մայիսի 1—3-ը կազմակերպվում է սանիտարական դրուժինների համառուսաստանյան օլիմպիադա, մասնակցությամբ 10 դրուժինների Երևանից և Լենինականից։ Նոյեմբերին Երևանում կազմակերպվում է ՊՍՊ-ի կրծքանշանակիրների համաքաղաքային օլիմպիադա։

Մասսայական կարգերի պատրաստումը բարձրացնելու նպատակով, 1935 թ. մտցվում է ՊՍՊ-ի 2-րդ աստիճանի պատրաստման ծրագիր չափահասների համար և ԵՊՍՊ («Եղիր\ պատրաստ սանիտարական պաշտպանության»)-ի նորմաներ դպրոցական հրեխաների համար։

1936 թ. Կարմիր Խաչի ընկերությունը կազմակերպում է հոսավոր քայլային երթ՝ Երևան-Բասարգեչար-Կիրովաբաղ-Բաքու մարշրուտով։ Սանիտարական դրուժինիկուհիները քայլային երթը սկսեցին ապրիլի 8-ին և ավարտեցին ապրիլի 28-ին, 20 երթային օրում անցնելով 630 կիլոմետր ճանապարհ։ Ճանապարհին սանիտարական դրուժինիկուհիները դաշտային և լեռնային պայմաններում լուծում էին սանիտարա-տակտիկական խնդիրներ, ծանոթանում կոլխոզնիկների սանիտարական ու կենցաղային պայմաններին, կոլխոզներում անցկացնում պրոֆիլակտիկ և կարմիրխաչական աշխատանք, ինչպես նաև աշխատանքային փորձի փոխանակում կատարում եղբայրական Ադրբեջանական ռեսպուբլիկայի Կարմիր Կիսալուսնի հետ, որտեղ նրանք գտնում են ջերմ ընդունելություն։ Բաքվի բոլոր թերթերը իրենց էջերում լուսաբանում են դրուժինիկուհիների կատարած աշխատանքները։

Դրուժինիկուհիների պատրաստման գործը մարտական պայ-

մանուերին մերձեցնելու համար 1936 թվին Սպիտակի շրջանի Ջիշխանա կիրճում կազմակերպվում է ճամբար, որտեղ ամռանը ուսումնառություն են ստանում 70 դրուժինիկուհի։ Բացի ռազմական պատրաստությունից, դրուժինիկուհիները շրջակա գյուղերի կոլխոզնիկների մեջ կատարում են Կարմիր խաչի գծով աշխատանքներ։

1937 թ. սեպտեմբերին Երևանի սանիտարական դրուժինիկուհիները մասնակցում են Անդրկովկասյան Կարմրաղրոշ բանակի աշնանային մանյովրներին։ 1938 թ. Կարմիր խաչի ակտիվիստ 20 տնային տնտեսուհիներից կազմակերպվում է նոր երթ հակագազերով, Երևան-Կոտայք-Ախտա-Սևան և հետադարձ մարշրուտով։ Երթը տևեց 8 օր, երթի մասնակիցները ճանապարհին 17 գյուղերում կատարեցին ագիտացիոն-մասսայական աշխատանք։ Մասնակցողների ամբողջ խումբը պարգևատրվեց Հայկական ՍՍՌ ԿԳԿ-ի կողմից։

Պարտիայի 18-րդ Համագումարի բացման օրը կազմակերպվում է միօրյա քայլային երթ, որին մասնակցում են Երևանի սանիտարական պոստերի 800 ադամ։ Նույն թվին սանիտարական պոստերի և սանիտարական դրուժինների 3000 անդամ կատարում են սանիտարական 3 արշավ դեպի հիմնարկությունները, կոլխոզները ու սովխոզները և քիչ աշխատանք չեն կատարում օբեկտների սանիտարական դրության բարելավման գործում։

1939 թ. Լենինական քաղաքի սանիտարական դրուժինիկուհիները կատարում են քայլային երթ Լենինականից Երևան՝ Արագած լեռան կատարի վրայով։ Երթի մասնակիցները ընդունվում են Գերագույն Սովետի Նախագահության կողմից և պարգևատրվում։

Հիշյալ տարիներում ոչ միայն նշանակալի չափով բարձրանում է սանիտարական կազմակերպությունների և Կարմիր խաչի սեփական բժշկական կադրերի պատրաստման. որակը, այլև ընկերության կողմից ընդունվում են գործարար միջոցներ՝ ռեսպուբլիկայի շրջանների նշանակալի մասի զինակոչիկների սանիտարական պաշտպանության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ։ 1935 թվից սկսած ավելի և ավելի մեծ քանակությամբ զինակոչիկներ են ընդգրկվում ընկերության մեջ։

Կարմիր խաչի ընկերության կողմից շրջաններում կազմա-

կերպվում են զինակոչիկների խմբակներ, որոնց հետ պարապմունքներ են տարվում ըստ ՊՍՊ-ի նորմաների։

Պլանային կարգով զինակոչիկների համար կարգացվում է դասախոսությունների մի ամբողջ շարք սանիտարա-պաշտպանական թեմաների շուրջ, հավաքակայաններին առընթեր կազմակերպվում են Կարմիր Խաչի անկյուններ, որտեղ անց են կացվում զրույցներ, կոնֆերանսներ, ցուցադրվում են կինոֆիլմեր, ցույց է տրվում բժշկական օգնություն և ապահովվում է զինակոչային կոնտինգենտի կուլտուրական պահանջները, ընդհուպ մինչև նրանց համար բժշկական պունկտերի, վարսավիրանոցների, ռադիո-ունկընկրման, ինքնագործ երեկոների, էքսկուրսիաների, տակտիկական պարապմունքների և այլնի կազմակերպումը։

1935 թ. Կարմիր Խաչի ընկերությունը ստանձնում է Ղամարլուի, Արթիկի և Դիլիջանի շրջանների զինակոչիկների սանիտարական և բուժա-պրոֆիլակտիկ սպասարկումը։

Կարմիրխաչական կազմակերպությունների լավ աշխատանքը նշում է Հայկական Հրաձգային դիվիզիայի Հրամանատարությունը իր հրամանով։ Նույն թվականին միայն վերոհիշյալ շրջաններում զինակոչային կոնտինգենտից պատրաստվում է ՊՍՊ-ի 1707 կրծքանշանակիր, իսկ բոլոր զինակոչիկները բաղմիցս ենթարկվում են սանիտարական լիակատար մշակման, որի համար կարմիրխաչական կազմակերպություններից այդ շրջաններն էին ուղարկվել և այնտեղ օգտագործվել երթային-ցնցուղային սարքավորումներ։

Զինակոչիկների բժշկական ստուգատեսի ժամանակ հաշվառվում են բուժման կարիք ունեցողները, որոնք և բուժման են ենթարկվում կարմիր խաչի բժշկական հիմնարկությունների կամ ընդհանուր բուժական ցանցի կողմից։

- 1938 թ. Կարմիր Խաչի կողմից զինակոչիկների հավաքակայաններում կազմակերպվում են 11 բժշկական պունկտ, 6 վարսավիրանոց։ Բժշկական հիշյալ պունկտերը անց են կացնում 116 զրույց ու դասախոսություն։ Շրջաններում ըստ ՊՍՊ-ի նորմաների պատրաստվում է 1714 զինակոչիկ։

1939 թվին զինակոչիկներին սպասարկելու գործը ծավալվում է այնքան բարեհաջող, որ բազմաթիվ շրջաններում ՊՍՊ-ի նորմաները հանձնում է զինակոչիկների կոնտիգենտի 60—100%-ը

1940 թ. ռեսպուբլիկայի բոլոր զինակոչիկների 76,4%-ը դառնում է ՊՍՊ-ի կրծքանշանակիր,

Ռեսպուբլիկայի մայրաքաղաքի 4 ռայոններում, ինչպես նաև Լենինականում, Կիրովականում, Ստեփանավանում, Ղամարլուում և Շամշադինում, Կարմիր Խաչը կազմակերպում է զինակոչիկների կոնֆերանսներ և սպասարկում է նրանց կուլտուրական պահանջները։ Բացի այդ, ռեսպուբլիկայի 28 շրջաններում միայն 1940 թ. զինակոչիկների մեջ կատարվում են հետևյալ աշխատանքները.

Դասախոսություն-զրույցներ՝ 354.

Կինոֆիլմերի ցուցադրում՝ 22.

Կոնֆերանսներ՝ 22.

Կարմիր Խաչի անկյունների կազմակերպում՝ 37.

Հավաքակայաններում սանպոստերի հերթապահության կազմակերպում՝ 50.

Էքսկուրսիաների կազմակերպում՝ 4.

Ռադիոելույթներ՝ 4.

Տակտիկական պարապմունքներ՝ 3.

Սանիտարական երեկոներ զինակոչիկների ընտանիքների հետ միասին՝ 4.

Հրատարակվել և զինակոչիկների մեջ տարածվել են 6000 օրինակով պլակատ-լոզունգներ։

1935 թվին Լենինականում կազմակերպվում է 20 մահճակալանի գիշերային սանատորիա։

Հաշվի առնելով արյան փոխներարկման մեծ նշանակությունը վիրավորների կյանքի փրկության գործում, Կարմիր Խաչի ընկերությունը 1940 թվականին նաև աշխատանք է ծավալում դոնորական կադրեր պատրաստելու, ինչպես և բժշկական անձնակազմին արյան փոխներարկման տեխնիկան յուրացնել տալու ուղղությամբ։ Արդեն 1940 թ. 104 դոնոր էր գրանցված Կարմիր Խաչի կողմից։ Հետագա տարիներում Կարմիր Խաչի ակտիվից հետզհետե լրացվում են դոնորական կադրերը, որը տվեց իր չափազանց մեծ օգուտը Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանում ռեսպուբլիկայում գտնվող հոսպիտալներին կոնսերվացած արյամբ մատակարարելու գործում։

Կարմիր Խաչի ընկերությունը 1933—1936 թթ. ժամանակա-

միջոցում ձեռնարկում է հակաօդային պաշտպանության բժշկա-սանիտարական ծառայության համար կադրեր պատրաստելու գործը։ Բժշկա-սանիտարական ծառայության կադրերի պատրաստման աշխատանքը և որակապես, և քանակապես տարեց-տարի բարելավվում և աճում է։ Այդ գծով 1935 թվին արդեն կար 325 սանիտարական պոստ, 1936 թ. 350, 1937 թ. 377, 1938 թ. 442։ ՀՕՊ-ի կետերում աշխատանքներ է ծավալում 12 սանիտարական դրուժին, որոնց միջոցով անց է կացվում 553 դաշտային պարապմունք։ Քաղաքներում, քաղաքային սանիտարական բոլոր դրուժինների մասնակցությամբ, անց է կացվում 18 երթ-պարապմունք։ 1939 թ. ըստ ՊՍՊ-ի 1-ին աստիճանի նորմաների պատրաստվում է 10176 մարդ, ըստ 2-րդ աստիճանի նորմաների՝ 1576 մարդ։ Նույն թվին կազմակերպվում է սանիտարական 758 պոստ, պատրաստվում է սանիտարական պոստերի 304 պետ, 33 անգամ անց է կացվում սանիտարական պոստերի և սանիտարական դրուժինների գիտելիքների մասսայական ստուգում, 54 անգամ՝ մասսայական հավաք. կազմակերպվում են նաև մրցություն, երթեր և ուսուցման ու վարժման այլ մեթոդներ։ 1940 թ. կազմակերպվում է սանիտարական 908 պոստ, պատրաստվում ըստ ՊՍՊ-ի 1-ի աստիճանի նորմաների 13162 մարդ, ըստ ՊՍՊ-ի 2-րդ աստիճանի՝ 2230 մարդ, մասսայական հավաք է անցկացվում 25 անգամ, մասսայական պարապմունք՝ 93 անգամ, սանիտարական դրուժինների հավաք՝ 28 անգամ, որոնց հետ կատարվում է 2882 վարժական պարապմունք։

Պիոներների և դպրոցականների մեջ այդ տարիներին ընկերությունը աշխատանքներ է ծավալում հիմնականում հետևյալ ուղղություններով. դպրոցներում սանիտարական պոստերի կազմակերպում ու պատրաստում, կազմակերպչական աշխատանքներ պիոներական ճամբարներում, պիոներների և դպրոցականների պատրաստում ըստ ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի նորմաների, սանիտարա-լուսավորական աշխատանքներ, սանիտարա-պաշտպանական թեմաների շուրջ եղած կինոնկարների ցուցադրում, ռազմա-սանիտարական խաղերի, էքսկուրսիաների կազմակերպում և այլն։

«Եղիր պատրաստ ՍՍՌՄ սանիտարական պաշտպանության» (ԵՊՍՊ) կրծքանշանները ՍՍՌՄ ԿԴԿ-ի կողմից հաստատվելուց

Հետո (1935 թ.) կարմիրխաչական կազմակերպությունները ձեռնամուխ են լինում պիոներներին պատրաստելու համապատասխան աշխատանքներին։ Ըստ ԵՊՍՊ-ի կոմպլեկսի պիոներներից ու դպրոցականներից պատրաստվում է 1935 թ.՝ 1320 հ., 1936 թ.՝ 9524., 1937 թ.՝ 2013 հ. 1938 թ.՝ 4778 հ., 1939 թ.՝ 16067 հ., 1940 թ.՝ 16332 հոգի։ Պիոներների և դպրոցականների սանիտարական տեսական և պրակտիկ գիտելիքները ամրապնդելու համար կազմակերպվում են պիոներների և դպրոցականների հավաքներ։ 1939 թ. ՀամԼԿԵՄ ԿԿ-ի որոշմամբ, հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ անց է կացվում պիոներների և դպրոցականների համամիութենական մրցություն՝ սանիտարապաշտպանական գիտելիքների գծով։ Այդ մրցությանը Հայաստանից մասնակցում են 20 շրջանային կոմիտե, 465 կոմանդա և 1860 պիոներ-դպրոցական։

Ռեսպուբլիկական մրցություններին մասնակցում են շրջանային 22 կոմանդա։ Նույն թվականին պիոներ-ճամբարներում պատրաստվում են ԵՊՍՊ-ի 504 կրծքանշանակիր, ՊՍՊ-ի 1-ին աստիճանի 378 կրծքանշանակիր, կազմակերպվում են 11 շաբաթօրյակ, 20 սանիտարական պոստ, 11 էքսկուրսիա, զրույցներ, դասախոսություններ և այլն։

1940 թ. պիոներ-ճամբարներում պատրաստվում են ՊՍՊ-ի 1-ին աստիճանի 335 կրծքանշանակիր, ԵՊՍՊ-ի 1444 կրծքանշանակիր, կազմակերպվում են ռազմասանիտարական խաղեր 3 անգամ, շաբաթօրյակներ 7 անգամ, էքսկուրսիաներ 5 անգամ, ցուցադրվում են կինոնկարներ և այլն։

1937 թվին Երևանի շրջակայքում տեղի ունեցած երկրաշարժերի հետևանքով տուժում են մի շարք գյուղեր։ Կարմիր Խաչի կենտրոնական կոմիտեն անհապաղ կազմակերպում է բժշկական և սննդային կետեր 7 տուժած գյուղերում։ Բժշկական կետերը սպասարկվում են միջին բժշկական անձնակազմով և բուժօգնություն ցույց տալու համապատասխան միջոցներով։ 8 գյուղերում բացվում են նաև սննդամթերային կետեր, որոնք բնակչությանը ցույց էին տալիս պարենային օգնություն։

Կարմիր Խաչի բժշկական գործունեությունը, բազմաթիվ բժշկական հիմնարկություններ Առողջապահության ժողովրդական

Կոմիսարիատին անցնելուց հետո, փոքր ինչ կրճատվում է։ Կարմիր Խաչի տնօրինության տակ մնացած և նրա կողմից նոր բացված հիմնարկությունները գործում են տնտես-հաշվառքային հիմքի վրա։

Կարմիր Խաչի բժշկական հիմնարկությունների ցանցը այդ ժամանակաշրջանում ներկայացնում է հետևյալ տեսքը.

1935 թ.

1. Մանկաբարձա-գինեկոլոգիական հիվանդանոց, 40 մահճակալով, Երևանում (վերափոխարկված Երևանի ծննդատան)։
2. Ծննդատուն, 25 մահճակալով, Լենինականում։
3. Գինեկոլոգիական կլինիկատացիոնար Երևանում։
4. Ատամնաբուժական կաբինետ, 3 բազկաթոռով, Երևանում։
5. Ատամնապրոտեզային արհեստանոց Երևանում։
6. Օրթոպեդիկ արհեստանոց Երևանում։
7. Դեղատուն Սիսավան գյուղում (Զանգեզուր)։

1936 թ.

1. Մանկաբարձա-գինեկոլոգիական հիվանդանոց Երևանում.
2. Ծննդատուն Լենինականում։
3. Պոլիկլինիկա Երևանում, 7 կաբինետով, բացված հունիսի 1-ին 1936 թ.
4. Գինեկոլոգիական կլինիկատացիոնար Երևանում, փակված 1 հուլ. 1936 թ.
5. Ատամնաբուժական կաբինետ Երևանում, 4 բազկաթոռով։
6. Ատամնաբուժական կաբինետ Լենինականում, 2 բազկաթոռով։
7. Օրթոպեդիկ արհեստանոց Երևանում։
8. Ատամնապրոտեզային արհեստանոց Երևանում։

1937 թ.

1. Մանկաբարձա-գինեկոլոգիական հիվանդանոց Երևանում։
2. Պոլիկլինիկա, 10 կաբինետով, Երևանում։
3. Ատամնաբուժական կաբինետ Երևանում։

4. Ատամնապրոտեզային արհեստանոց Երևանում.
5. Օրթոպեդիկ արհեստանոց Երևանում.

1938 թ.

1. Մանկաբարձա-գինեկոլոգիական հիվանդանոց Երևանում։
2. Պոլիկլինիկա, 12 կաբինետով, Երևանում։
3. Ատամնաբուժական կաբինետ։
4. Ատամնապրոտեզային արհեստանոց։

Սանիտարա-հիգիենիկ և անտեսա-կենցաղային հիմնարկների քանակը արտացոլում են հետևյալ ցուցանիշները.

1935 թ.

1. Ստերիլիզացիոն բյուրո Երևանում, 1 հատ.
2. Լվացքատուն Երևանում, 1 հատ։
3. Վարսավիրանոցներ Երևանում, 51, 110 բազկաթոռով։
4. Սանիտարա-հիգիենիկ խանութ Երևանում, 1 հատ։
5. Դեզինֆեկցիոն բյուրո Երևանում, 1 հատ։

1936 թ.

1. Դեզինֆեկցիոն բյուրո Երևանում, 1 հատ։
2. Լվացքատուն, 2 հատ։
3. Ստերիլիզացիոն բյուրո, 1 հատ։
4. Վարսավիրանոցներ, 4279 բազկաթոռով։

1937 թ.

1. Դեզինֆեկցիոն բյուրո, 1 հատ։
2. Լվացքատուն, 1 հատ։
3. Ստերիլիզացիոն բյուրո, 2 հատ։
4. Վարսավիրանոցներ, 42176 բազկաթոռով։

1938 թ.

1. Դեզինֆեկցիոն բյուրո . . . . . 3 հատ։
2. Լվացքատուն . . . . . 2 հատ։
3. Ստերիլիզացիոն բյուրո . . . . . 2 հատ։

4. Վարչամիրանոցներ . . . 46218 բազկաթոռով։
5. Բաղնիք . . . . . 1 հատ։

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1938 թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ, բժշկական բոլոր հիմնարկությունները, սանիտարա-հիգիենիկ և տնտեսա-կենցաղային հաստատությունները փոխանցվում են Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի և կոմունալ տնտեսության տնօրինությանը։ Կարմիր Խաչի ընկերությունը 1939 թ. սկսած զբաղվում է բացառապես սանիտարա-պաշտպանական աշխատանքով։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1941 թ. հունիսի 22-ին մինչև ատամները զինված հիտլերյան Գերմանիան, խախտելով չհարձակվելու գոյություն ունեցող պակտը, ուխտադրժորեն հարձակվեց ՍՍՌՄ վրա։ Գերմանիայի բոլոր հիմնական ուժերը նետվեցին մեր ռազմաճակատը, որ ձգվում էր Հյուսիսային և Բալթիկ ծովերից մինչև Սև ծովը։ Ամբողջ աշխարհը, շունչը պահած, հետևում էր այն վիթխարի դոտեմարտին, որ մղվում էր աշխարհի խավարամոլների, ի դեմս ֆաշիստական Գերմանիայի ու նրա համախոհների և Սովետական երկրի միջև, ի դեմս Հոկտեմբերյան Մեծ ռևոլուցիայի պտուղները ճաշակած սովետական բազմազգ ժողովրդի։

Իր պատմական ռադիո-ելույթում (1941 թ. 3 հուլիսի) ընկ. Ստալինը ասաց.

«Մենք պետք է անհապաղ մեր ամբողջ աշխատանքը վերակառուցենք ռազմական ձևով, ամեն ինչ ենթարկելով ռազմաճակատի շահերին և թշնամու շախշախումը կազմակերպելու խնդիրներին։

Մենք պետք է կազմակերպենք բազմակողմանի օգնություն Կարմիր Բանակին, ապահովենք նրա շարքերի ուժեղացրած համալրումը, ապահովենք մատակարարումը անհրաժեշտ ամեն բանով, կազմակերպենք զորքերը և ռազմական բեռներ փոխադրող տրանսպորտների արագ երթևեկությունը, լայն օգնությունը վիրավորներին։ Մենք պետք է ամրապնդենք Կարմիր Բանակի թիկունքը՝ այդ գործի շահերին ենթարկելով մեր ամբողջ աշխատանքը»։

Հայկական ՍՍՌ Կարմիր Խաչի Ընկերությունը պատերազմի նախօրեին ուներ 1967 սկզբնական կազմակերպություն, որոնց մեջ ընդգրկված էր 80744 անդամ։

Ընկերությունը ներկայացնում էր մի իսկական մասսայական կազմակերպություն, կազմված հիմնարկ-ձեռնարկություններում, գործարաններում, արդյունաբերական օբեկտներում, կոլխոզներում, սովխոզներում և այլուրեք աշխատող աշխատավորությունից։ Ընկերության համար վրա հասավ մի ծանր ու եռուն ժամանակաշրջան՝ երկրի սանիտարական պաշտպանության սրբազան պարտականությունը կատարելու գործում նրա ռեալ պատրաստականության ստուգման ժամանակաշրջանը։ Ինչպես ռեսպուբլիկայի սովետական ողջ հասարակությունը, այնպես էլ Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերությունը Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանում ակտիվորեն ներգրավվեց երկրի պաշտպանունակությունը բարձրացնելու և առաջին հերթին մեր Հայրենիքի հերոս պաշտպաններին՝ վիրավոր ու հիվանդ մարտիկներին ռազմաճակատում ու թիկունքում հնարավոր ամեն օգնություն ցույց տալու գործում, կատարելու համար պարտիայի և կառավարության լոզունգը.

«Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար»։ Հայաստանի Կարմիր Խաչի ակտիվիստները, քույրերը, դրուժինիկուհիները, ընկերության անդամները, ինչպես և Սովետական Հայրենիքի մնացած աշխատավորները Հայրենական Մեծ պատերազմի օրերին ցույց տվին ժողովրդին ծառայելու, պատերազմի հերոսներին, ռամզաճակատներում ու հոսպիտալներում գտնվող վիրավորներին ու հիվանդներին, հաշմանդամներին ու նրանց ընտանիքներին խնամելու, ֆաշիստական ագրեսորների կողմից ժամանակավորապես օկուպացված մարզերից էվակուացվածներին, որբացած երեխաների նկատմամբ խնամք տանելու անձնուրացության օրինակներ։

Պատերազմի հենց առաջին օրերին ընկերության հարյուրավոր և հազարավոր անդամներ ներկայանում էին Կարմիր Խաչի Կենտրոնական Կոմիտե, խնդրելով միջնորդել ռազմական կոմիսարիատների առաջ՝ նրանց Կարմիր Բանակի շարքերը ընդունելու, ռազմաճակատ ուղարկելու համար, կամ խնդրելով՝ ուսուցանել նրանց անհրաժեշտ գիտելիքներ և ուղարկել այնտեղ, որտեղ կարիք կա վիրավոր ու հիվանդ զինվորներին ու հրամանատարներին օգնություն ցույց տալու։

Զանգվածային բազմակողմանի էր այդ շրջանում ընկերության

գործունեությունը, ըստ որում աշխատանքի բոլոր ձևերը ունեին մի որոշակի նպատակասլացք. բոլոր միջոցներով և ուժերով օգնել Կարմիր Բանակին՝ նրան բժշկա-սանիտարական սպասարկում տալու գործում, կանխել վարակիչ հիվանդությունների համաճարակի զարգացման հնարավորությունը թիկունքում, ցույց տալ ամեն կարգի օգնություն առողջապահության օրգաններին՝ Սովետական թիկունքը սանիտարական տեսակետից ամուր պահպանելու ուղղությամբ:

Հիշյալ նպատակին հասնելու համար Ընկերությունը վերակառուցում է իր բոլոր աշխատանքները սանիտարա-պաշտպանական առօրյա խնդիրների լուծման ուղղությամբ, որպիսիք ընկերության համար պատերազմի ամբողջ ընթացքում հանդիսացել են.

1. Բժշկա-սանիտարական կադրերի-քույրերի, դրուժինիկուհիների, դեղինֆեկտորների, սանիտարների և սանիտարուհիների հնարավորին չափով մեծ քանակության պատրաստում՝ ռազմաճակատային բուժ-սանիտարական հիմնարկությունների, թիկունքային հոսպիտալների և առողջապահության բաղաքացիական օրգանների համար:

2. Բժշկական առաջին օգնություն ցուցաբերելու ուսուցում բնակչության լայն խավերին:

3. Աշխատավորության նշանակալից մասի ուսուցում ըստ ՊՍՊ-ի նորմաների:

4. Օգնության ցուցաբերում առողջապահության օրգաններին՝ էվակուհոսպիտալների կազմակերպման, տարբավորման և աշխատանքի գործում:

5. Էվակուացված բնակչությանը ամեն կարգի օգնության ցուցաբերում:

6. Օգնության ցուցաբերում որբացած և ծնողազուրկ դարձած երեխաներին:

7. Հակաօդային պաշտպանության բժշկա-սանիտարական ծառայության կադրերի պատրաստում:

8. Սանիտարա-պրոֆիլակտիկ և հակահամաճարակային միջոցառումների կիրառում գործարաններում, ֆաբրիկաներում, հիմնարկություններում, կոլխոզներում, սովխոզներում, բնակելի շենքերում:

9. Բժշկական քույրերի պատրաստում կոլխոզային բժշկական պունկտերի համար (1944 թվից)։

Վերոհիշյալ խնդիրների իրագործումը ապահովվեց սովետական ժողովրդի բարձր հայրենասիրության առկայությամբ և մասսայական-կազմակերպչական ու ագիտացիոն-մասսայական աշխատանքների ծավալմամբ։

Կարմիրխաչական կազմակերպությունների մի նշանակալի քանակություն ընդգրկված էր սոցիալիստական մրցության մեջ։ Միութենական սոցիալիստական մրցության մեջ էին մտել շրջանային կոմիտեների և սկզբնական կազմակերպությունների զգալի մասը, որը և տարեց-տարի ակտիվորեն պայքարում էր իր ստանձնած պարտականությունների կատարման համար։

Սոցիալիստական մրցության մեջ ընդգրկված կարմիրխաչական սկզբնական կազմակերպությունների և շրջանային կոմիտեների թիվը, ըստ տարիների

N	Կազմակերպության անվանումը	1941	1942	1943	1944	1945
1	Շրջանային կոմիտեներ	23	26	29	29	32
2	Սկզբնական կազմակերպություններ	164	248	455	567	928

1943 թ. վերջերից Կարմիր Խաչի Կենտրոնական Կոմիտեն, հատկապես մեկ անգամ, հայերեն լեզվով լույս է ընծայում բյուլետեն, որի էջերում հանրագումարի է բերվում սոցիալիստական մրցության ընթացքը՝ ըստ շրջկոմի ստանձնած պարտավորությունների կատարման, տվյալ եռամսյակում։ Բյուլետենը լուսաբանում է կարմիրխաչական կազմակերպությունների առաջ դրված հրատապ խնդիրները, արձանագրում ձեռք բերած նվաճումներն ու թերությունները, և նշում առանձին դժվարությունների վերացման ուղիները։ Բյուլետենի հրատարակումը հնարավորություն տվեց բոլոր շրջանային կոմիտեներին և սկզբնական կազմակերպություններին մշտապես իրազեկ լինել կարմիրխաչական կազմակերպությունների

կյանքին և հաջող ազդակ ծառայեց սանպաշտպանական աշխատանքներում սոցմրցության ծավալմանը։

Ագիտացիոն-մասսայական աշխատանք էր տարվում կենտրոնական և շրջանային մամուլի, հատուկ նպատակով լույս տեսնող պատի թերթերի, ռեսպուբլիկական և շրջանային ռադիոյի միջոցով. կազմակերպում են դասախոսություններ, զեկուցումներ, զրույցներ, սանիտարական անկյուններ, սանիտարական երեկոներ, կինո-ցուցադրումներից առաջ ելույթներ։

Պատերազմի առաջին իսկ տարում Կարմիր Խաչի Ընկերությունը ուներ 80000 անդամ։ Տարեց-տարի անդամների թիվը աճեց և պատերազմի վերջին մեծացավ ավելի քանի երկու անգամ։ Համապատասխանաբար աճեց և սկզբնական կազմակերպությունների թիվը, ինչպես ցույց է տրված ստորև.

1941 թ.

№ №		Արդյունաբերության մեջ	Կոլխոզներում	Դպրոցներում	Այլ կազմակերպություններում	Հանրագումար
1	Սկզբնական կազմակերպութ. քանակը	360	609	405	593	1967
2	Ընկ. անդամների քանակը	25775	15802	22256	16641	80474

1942 թ.

№ №		Արդյունաբեր. մեջ	Կոլխոզներում	Դպրոցներում	Այլ կազմակերպություններում	Հանրագումար
1	Սզբ. կազմակ. քանակը	366	332	254	925	1877
2	Ընկ. անդամների քանակը . . .	20480	12692	15416	6748	55336

1943 թ.

№ №		Արդյունաբեր. մեջ	Կոլեկտեն-բում	Դպրոցնե-բում	Այլ հիմ-նարկներում	Հանրագու-մար
1	Սկզբ. կազմ. քանակը	279	457	411	1045	219[illegible]
2	Ընկ. անդամների քանակը . . .	24439	19200	30112	31474	105225

1944 թ.

№ №		Արդյունաբերության մեջ	Կոլեկտեներում	Դպրոցներում	Այլ հիմնարկներում	Հանրագումար
1.	Սկզբ. կազմ. քանակը	350	513	507	1262	2632
2.	Ընկ. անդամների քանակը . .	30527	24182	38707	44485	137901

1945 թ.

№ №		Արդյունաբերության մեջ	Կոլեկտեներում	Դպրոցներում	Այլ հիմնարկներում	Հանրագումար
1.	Սկզբ. կազմ. քանակը . . .	460	903	574	1038	2975
2.	Ընկ. անդամների քանակը . .	25369	47375	51533	52983	177259

Կարմիր Խաչի կազմակերպությունների անդամներին Կարմիր Բանակ կանչելու հետևանքով, պատերազմի առաջին երկու տարում ընկերության սկզբնական կազմակերպությունների և անդամների թիվը նվազում է, սակայն հետագա տարիներում, ինչպես ասվեց վերևում, նրանց քանակը աճեց, որին նշանակալի չափով նպաստեց ագիտացիոն-մասսայական աշխատանքը, որի մասին տվյալներ բերվում է ստորև։

Հայկ. ՍՍՌ Կարմիր Խաչի ընկերության կատարած ռազմ-մասսայական աշխատանքը 1941–1945 թ. թ.

№ №	Աշխատանքի անվանումը	1941	1942	1943	1944	1945	Ամբողջը
1.	Զեկուցումներ, զրույցներ, դասախոսություններ .	684	1079	1220	544	780	4307
2.	Սանիտ. անկյուն. կազմակերպում	806	1002	1277	72	211	3368
3.	Ռազմ. բրիգադների կազմակերպում . . .	19	36	51	87	102	295
4.	Պատվ. թերթի լույս ընծայում	64	77	90	40	88	359

Կարմիր Խաչի Կենտրոնական Կոմիտեի և շրջանային կոմիտեների կողմից կենտրոնական և տեղական ռադիոյի միջոցով բազմիցս կազմակերպվում են ռադիո-հաղորդումներ, սանիտարապաշտպանական զրույցներ։

64 անուն լոզունգների և պլակատների հրատարակումը հայերեն և ռուսերեն լեզուներով տարածվում է մի քանի տասնյակ հազար օրինակներով։

Սովետական Հայաստանի աշխատավորության՝ Կարմիր Խաչի Ընկերության անդամների, կոլխոզնիկների, գործարանների, ֆաբրիկաների, հիմնարկների, բանվորների ու բանվորուհիների, մտավոր աշխատողների, տնային տնտեսուհիների հայրենասիրությունը առանձնապես ակնառու կերպով է արտահայտվում ամբողջ պատերազմի ընթացքում նրանց կատարած շեֆական աշխատանքի մեջ՝ մանկատների, հոսպիտալների, Հայրենական պատերազմի հաշմանդամների տների, ճակատայինների ընտանիքների նկատմամբ։

Առանձին սրտագին վերաբերմունք ցուցաբերեցին նրանք Կարմիր Բանակի վիրավոր ու հիվանդ հրամանատարներին և մարտիկներին խնամելու գործում։ Չխորշելով ոչ մի աշխատանքից, նրանք մաքրում-հավաքում էին պալատները, լվանում, կարկատում, արդուկում փոխնոցները, նվիրաբերում ծաղիկներ, ուղեգորգեր, վարագույրներ, հանգստակեցություն ստեղծում հոսպիտալների պալատներում, խնամում ծանր վիրավորներին ու հիվանդներին կերակրում, խմել տալիս նրանց, նամակներ գրում նրանց

համար, ակտիվ մասնակցություն ցուցաբերում հիվանդների ու վիրավորների կուլտուրական ժամանցը կազմակերպելու ու անցկացնելու գործին, ինչպես նաև հիվանդներին ու վիրավորներին նվիրաբերում զանազան ընծաներ։

Կարմիր Խաչի 54 կազմակերպություններ շեֆական աշխատանք էին կատարում 20 հոսպիտալներում, ստանձնելով 82 պալատի շեֆություն։ 264 ակտիվիստ կամավոր ձևով հանձն էին առել վիրավոր հրամանատարների և մարտիկների մշտական խնամքը և իրենց այդ պարտավորությունը կատարում էին բարեխղճորեն։

Կարմիր Խաչի կազմակերպությունների նախաձեռնությամբ ընկերության անդամներից հավաքվեց մեծ քանակությամբ քաղաքական ու գեղարվեստական գրականություն հոսպիտալների համար։ Կարմիր Խաչի կազմակերպած ինքնագործ խմբակների կողմից հոսպիտալներում կազմակերպվում է 510 գրական-գեղարվեստական երեկո, անց է կացվում 564 զրույց-դասախոսություն սանիտարա-պաշտպանական թեմաներով։ Կարմիրխաչական կազմակերպությունները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում հոսպիտալների կենցաղա-տնտեսական աշխատանքներին։ Կարմիրխաչական ակտիվիստների ուժերով մի շարք հոսպիտալների համար շինվում են կենդանի ցանկապատներ, մերձհոսպիտալային բակերում տնկվում են ծառեր և կատարվում զանազան այլ աշխատանքներ մի շարք հոսպիտալներ բարեկեցիկ դարձնելու համար, ինչպես օրինակ՝ բաղանիքների, խոհանոցների, շոգու կախիչների, ջրմուղի վերանորոգում, մի շարք դեպքերում՝ բանջարեղենի, այլ և այլ մթերքների, վառելիքի ձրի տեղափոխման կազմակերպում և այլն, 128229 ռուբլու արժողությամբ նվերներ են արվել վիրավորներին ու հիվանդներին։

Շրջաններում Կարմիր Խաչը կազմակերպում է շեֆություն ճակատային 1922 ընտանիքների նկատմամբ։ Նրանց ամրացվում են սկզբնական կազմակերպություններ և ակտիվիստներ, որոնք և հոգում են նրանց կարիքները, նյութական օգնություն ցույց տալիս, ընտանիքի անդամներին մատակարարում հագուստ, գրականություն, տնտեսական պիտույքներ և այլն, մասնակցում նրանց արհամարհ հողամասերի մշակմանը, վերանորոգում բնակարանները։ Ճակատայինների երեխաների համար հավաքում են դասագրքեր

ու գրականություն։ Ճակատայինների ընտանիքներին ցուցաբերվում է 216564 ռուբլու դրամական օգնություն, ճակատային-ների համար ռազմաճակատ են ուղարկվում 108220 ռուբլու արժողությամբ ծանրոցներ։ Պատերազմի տարիներին Կարմիր Խաչ հարկ եղած ուշադրություն է դարձնում մանկատների վրա։ Ռեսպուբլիկայի քաղաքներում և շրջանային կենտրոններում տեղավորված 23 մանկատներ ունեին 94 շեֆական կազմակերպություն, որոնք թափանցում էին հիշյալ մանկատների կյանքի բոլոր հարցերի մեջ, հսկում նրանց սանիտարական դրությունը, երեխաներին շրջապատում խնամքով ու զուրգուրանքով, մանկատներին ցույց տալիս ամեն կարգի օգնություն, այդ գործի մեջ ներգրավելով գանազան տնտեսական, բուժական և այլ կազմակերպություններ։ Շեֆական կազմակերպությունները մանկատների համար հայթայթում են անհրաժեշտ քանակությամբ գրքեր ու ժուռնալներ, կազմակերպվում են մանկական երեկոներ, զրույցներ, պարենամթերային օգնություն, երեխաներին սպասարկելու համար ամրացվում են վարսավիրանոցներ և այլն։

Կարմիր Խաչի ընկերության անդամների կողմից մանկատների համար կարվում են հագուստներ ու սպիտակեղեն, մատակարարվում ճաշարանային անհրաժեշտ պարագաներ։ Բոլոր ենթաշեֆային մանկատներում կազմակերպվում են սանիտարական պոստեր, որոնք բացի բժշկական առաջին օգնություն ցույց տալուց, սիստեմատիկաբար հետևում են մանկատների շենքերի, դիշերոթիկ դպրոցների, նրանց ճաշարանների, խոհանոցների և այլնի սանիտարական դրությանը։

Կարմիր Խաչի Կենտրոնական կոմիտեն վերցրել էր նաև գերմանական օկուպանտներից ազատագրված Վորոշիլովգրադի մարզի և Գոմել քաղաքի երկաթուղային շրջանի № 16 նոր կազմակերպված մանկատների շեֆությունը։ Հիշյալ մանկատներին օգնություն ցույց տալու համար կարմիրխաչական կազմակերպությունները կազմակերպում են միջոցների հանգանակություն. հավաքվում և նրանց է ուղարկվում 305520 ռուբլու դրամ։

Հոսպիտալների, մանկատների, հաշմանդամների տների և էվակուացվածների նկատմամբ շեֆական աշխատանքի մեջ առանձնապես աչքի են ընկնում Երևանի, Կիրովականի, Ղամարլուի, Դուզքանդի, Նոր-Բայազեդի, Ստեփանավանի, Ալավերդու և մի շարք

այլ շրջանների շրջանային կոմիտեները։ Նրանցից մի քանիսը Վորոշիլովգրադի մարզին ցուցաբերած նյութական օգնության համար արժանանում են ընկեր Ստալինի շնորհակալությանը։

Սանիտարական-պաշտպանական լավագույն աշխատանքի համար Կարմիր Խաչի առաջավոր շրջանային կոմիտեների և սկզբնական կազմակերպությունների աշխատողներից մինչև 1945 թ. ՍՍՌՄ ԿԽ և ԿԿԸՄ Գործադիր կոմիտեի կողմից պարգևատրվում են՝ Սանպաշտպանության գերազանցիկ» կրծքանշանով — 34 մարդ, Գործկոմի պատվոգրով — 106 մարդ, Հայկական ՍՍՌ Կարմիր Խաչի ԿԿ-ի պատվոգրով — 50 մարդ և դրամական մրցանակով — 39 մարդ։

Պատերազմի տարիներին առանձնակի նշանակություն ձեռք բերեց բժշկական կադրերի պատրաստումը։ Պատերազմի հենց սկզբից զգացվեց բժշկական կադրերի հսկայական կարիք։ Անհրաժեշտ էր արագ տեմպերով պատրաստել բժշկական միջին և կրտսեր կադրեր, ինչպես ռազմաճակատի, Կարմիր Բանակի համար, այնպես էլ թիկունքի համար՝ Առողջապահության հիմնարկները ռազմաճակատ մեկնածների փոխարեն բժշկական նոր կադրերով համալրելու նպատակով։

Բժշկական կադրերի պատրաստման բնագավառում հատկապես վառ գծագրվեց առողջապահության օրգանների և Կարմիր Խաչի կազմակերպությունների բարեկամական համատեղ աշխատանքը։

Պատերազմի տարիներին, բժշկական կադրերի պատրաստման եռուն պահին, առողջապահության օրգանների կողմից, իրրև բազա, տրամադրվում է բժշկական անհրաժեշտ ամբողջ ցանցը — հոսպիտալներ, հիվանդանոցներ (քաղաքային և շրջանային), պոլիկլինիկաներ, դիսպանսերներ, ինչպես և դասատու-բժիշկներ։

Տասնյակ բժիշկներ կամավոր ձևով ցանկություն են հայտնում առանց հատուցման դասավանդել Կարմիր Խաչի կազմակերպած քույրական, սանիտարական դրուժինիկուհիների, սանիտարական տեսուչների, սանիտարների դասընթացքներում, ինչպես նաև ՊՍՊ-ի և ՆՊՍՊ-ի խմբակներում։ Այդ բնագավառում իրենց երկարատև և բարեխիղճ աշխատանքի համար արժանի են հիշատակման բժիշկ թերապևտներ ու վիրաբույժներ ընկ. ընկ. Ս. Հովհաննիսյա-

նը, Գ. Հարությունյանը, Ս. Մկրտչյանը, Ա. Մելքոնյանը, Գ. Զաքամքարյանը և ուրիշներ։

Մեր հայրենիքի ծանր օրերին ռեսպուբլիկայի հայրենասերները, քաղաքական մոմենտի կարևորության խորին գիտակցությամբ, հարյուրներով հաճախում են դասընթացները և, չնայած դասընթացների կարճատևությանը, յուրացնում բազմա-սանիտարական և բժշկական անհրաժեշտ գիտելիքներ։ Այս վերջին հանգամանքը դյուրինանում էր նրանով, որ դասընթացներ հաճախողների և ավարտողների մեծամասնությունը օժտված էր բավականաչափ ընդհանուր պատրաստականությամբ, շատերը նրանցից ունեին լրիվ միջնակարգ և նույնիսկ բարձրագույն կրթություն։ Նրանց պատրաստման որակը դրված էր անհրաժեշտ բարձրության վրա։ Բազմաճակատում, հոսպիտալներում և թիկունքի քաղաքացիական այլ հիմնարկություններում, իրենց հետագա աշխատանքով, այդ կադրերը լիապես արդարացրին իրենց։

Պատերազմի տարիներին Կարմիր Խաչի Ընկերության կողմից պատրաստվել են մի քանի հազար քույր, մի հանգամանք, որ տեղի չի ունեցել Հայաստանի Կարմիր Խաչի նախընթաց ամբողջ պատմության մեջ։

Բժշկական քույրերի պատրաստման համար կազմակերպված էր 24 դասընթաց։ Դասընթացների ուսումնական մասը վարում էին առավել կամ նվազ փորձառու դասատու-բժիշկները, որով և ապահովվում էր քույրերի պատրաստման անհրաժեշտ որակը։ Շրջանավարտների պրակտիկ պարապմունքները անց էին կացվում հիվանդանոցներում։ Նկատելի դժվարություն էր հանդիսանում հայկական դասընթացների մասնակիցներին հայերեն դասագրքերով ապահովելը։ Կարմիր Խաչի կազմակերպած քույրական կուրսերը ավարտածների 17%-ը անցան Կարմիր Բանակի շարքերը և աշխատեցին Գործող բանակում, 20%-ը՝ Հայաստանի և եղբայրակից ռեսպուբլիկաների հոսպիտալներում, մնացածները՝ ռազմա-սանիտարական գնացքներում, Առողջապահության մինիստրության հիմնարկություններում, նոր կազմակերպված կոլխոզային բուժական պունկտերում և այլ կազմակերպություններում։

Քույրերի մեծագույն մասը պատրաստվեց պատերազմի առաջին տարում. հետագա յուրաքանչյուր տարում նրանց թիվը պակասեց, որովհետև պակասեց նաև զգացվող պահանջը։

Հիմնվելով եղբայրակից ռեսպուբլիկաների փորձի վրա, Պարտիայի և կառավարության որոշմամբ, 1941 թվից Կարմիր Խաչի Ընկերությունը ձեռնարկում է կոլխոզային բուժական պունկտերի համար բժշկական քույրեր պատրաստելու գործը։

Դասընթացները ընթանում են համապատասխան ծրագրով, 4 ամսվա ընթացքում։ Ծրագիրը կազմված էր հաշվի առնելով կոլխոզային աշխատանքների յուրահատկությունները։ Մեծագույն մասամբ կազմակերպվում են միջշրջանային դասընթացներ, որոնց կոնտինգենտը կազմում էին կոլխոզնիկուհիները, որոնք և դասընթացը ավարտելուց հետո վերադառնում էին հայրենի կոլխոզ, աշխատելու իբրև բժշկական քույր։ Քույրական կուրսերի կոնտինգենտի հավաքման այսպիսի եղանակը ուներ իր խելացի հիմքը, քանի որ կուրսերն ավարտած քույրը կոլխոզնիկուհին էր նույն այդ կոլխոզի, հիանալի ծանոթ տվյալ կոլխոզի և՝ աշխատանքներին, և՝ կենցաղին, և՝ ամբողջ սանիտարական դրությանն ու սանիտարական կարիքներին։ Բնական է, որ վերջինիս համար անհամեմատ դյուրին էր կիրառել բուժական և սանիտարա-պրոֆիլակտիկ միջոցառումներ, քան թե քաղաքից կամ նույնիսկ ուրիշ կոլխոզից եկածի համար։

Հայկական ՍՍՌ Ժողկոմխորհի 1945 թ. որոշումների հիման վրա, համապատասխան ՍՍՌՄ Առժողկոմատի 1945 թ. № 749 հրամանի, Հայաստանի Կարմիր Խաչը 1945 թ. երկրորդ եռամսյակից ձեռնարկում է կոլխոզային բուժպունկտերի ստեղծմանը և արդեն 1945 թ. վերջին հաշվում է գործող 174 կոլխոզային բուժպունկտ, որոնց վարում են քույրական դպրոցներն ավարտած նախկին կոլխոզնիկուհիները։

Պատերազմի տարիներին պատրաստվում են նաև հաղարավոր սանիտարական դրուժինիկուհիներ, որոնք մասնակցում են Հայրենական Մեծ պատերազմի պատմության մեջ «մարտական ընկերուհի» անվամբ։ Բնակչության լայն մասսաների պատրաստման այս ձևը իր նախադեպը չունի անցյալ պատերազմում՝ ոչ միայն մոտ, ոչ էլ արտասահմանյան երկրներում։ Դրուժինիկուհիները բժշկա-սանիտարական պատրաստություն էին ստանում երկուս ու կես ամսվա ընթացքում, 140 ժամյա ծրագրով, առանց արտադրությունից կտրվելու։

Այնքան մեծ էր երիտասարդության ձգտումը դեպի ռազմաճակատ, որ հաշվի առնելով սանդրուժիններին դասընթացների կարճա-

տեսությունը, նրանք ամբողջ խմբերով դիմում էին կարմիրխաչական կազմակերպություններին սանդրուժիններին դասընթացներում ընդունվելու համար, որպեսզի շուտ ավարտեն այն և ուղարկվեն ռազմաճակատ։

Մեր երիտասարդության բարձր հայրենասիրության համար օրինակ կարող է ծառայել հետևյալ դեպքը։ Պատերազմի սկզբին հայ աղջիկների մի խումբ, սեփական նախաձեռնությամբ, կազմակերպում է մի դրուժին, որը կոլեկտիվ ձևով դիմում է Երևանի Կարմիր Խաչի Կիրովյան շրջանային Կոմիտեին՝ խնդրելով իրենց համար կազմակերպել սանիտարական դրուժինիկուհիների դասընթաց և դասընթացն ավարտելուց հետո ուղարկել ռազմաճակատ։ Նրանց ցանկությունը ի կատար է ածվում։ Դրուժինիկուհիների դասընթացն ավարտելուց հետո, նրանք մեկնում են Գործող Բանակ, որտեղ դրսևորում են իրենց իբրև Սոցիալիստական հայրենիքի իսկական հայրենասերներ։ Սովետական ամբողջ ժողովրդին հայտնի է, որ բազմաթիվ սանիտարական դրուժինիկուհիներ հերոսության օրինակներ են ցույց տվել Հայրենական պատերազմի ռազմաճակատներում։ Ֆաշիստական կրակի տակ նրանք վիրակապում էին վիրավոր մարտիկներին ու հրամանատարներին, դուրս էին բերում նրանց կրակի տակից և ոչ մի քայլով հետ չէին մնում իրենց զորամասի մարտիկներից։ Զինայելով իրենց կյանքը, նրանք մահից փրկել են բազմաթիվ մարտիկների և հրամանատարների կյանքը։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերության Կենտրոնական Կոմիտեն կազմակերպում է հատուկ դասընթացներ, որոնք պատրաստում են սանիտարական դրուժինիկուհիներ։ Այդ դասընթացներն ավարտածները պատերազմի ամբողջ ընթացքում անձնվիրաբար աշխատում են զանազան բնագավառներում։ Նրանց մի մասը մեկնում է ռազմաճակատ և աշխատում Գործող Բանակում, մյուս մասը՝ էվակու-հոսպիտալներում ու ռազմական-սանիտարական գնացքներում, մնացածները՝ խոր թիկունքային աշխատանքի այլազան ասպարեզներում։

Սանիտարական դրուժինիկուհիների աշխատանքը խոր թիկունքում էլ նույնպես խիստ շահեկան էր և պատվավոր։ Երկու դրուժինների աշխատանքի նկարագիրը ընդհանուր գծերով, որ

տրվում է, ստորև, հատկանշական է թիկունքում գործող սանիտարական դրուժինների գործունեության համար առհասարակ։

Երևանի Ճարպայուղային գործարանի Կարմիր Խաչի սկզբնական կազմակերպության սանիտարական դրուժինը մեծագույն խանդավառությամբ ու նվիրվածությամբ կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ։

1) Նա ակտիվ մասնակցություն ցուցաբերեց ռազմա-սանիտարական գնացքների բեռնաթափմանը և վիրավոր մարտիկներին հոսպիտալներ տեղափոխելուն (49 անգամ)։

2) Գործարանի կոլեկտիվի հետ միասին նա ստանձնեց սպայական երկու և ծանր վիրավոր մարտիկների երկու պալատների շեֆությունը։ Նրանց կողմից կազմակերպվեց և սիստեմատիկաբար հերթապահություն անց կացվեց ծանր վիրավորների հիշյալ պալատներում։ Նրանք աջակցեցին հոսպիտալների ադմինիստրացիաներին՝ ենթաշեֆ պալատներում հարմարակեցություն ստեղծելու գործում։

3) Դրուժինը, գործարանի կարմիրխաչական ակտիվիստների հետ միասին, հոսպիտալի դրադարանի համար հավաքեց ավելի քան 6000 գիրք, հոսպիտալի համար կարեց 864 կտոր և վերանորոգեց 1645 կտոր սպիտակեղեն, հավաքեց և հանձնեց ճաշարանային 645 կտոր զանազան ամանեղեն, հոսպիտալի վիրավորներին կազմակերպեց նվերներ—քաղցրավենիք, շոր մրցեր ու խմիչքներ — 1200 ռուբլու արժողությամբ, գործարանի ուժերով ու միջոցներով վերանորոգեց հոսպիտալի խոհանոցը, վիրավորների համար կազմակերպեց ներկայացումներ՝ 36 անգամ, զրույցներ ու զեկուցումներ՝ 94 անգամ։

4) Սանիտարական դրուժինիկուհիները իրենց դրուժինի կազմով, առողջապահության իրենց շրջանային բաժնին սիստեմատիկաբար օգնություն ցույց տվին, այսինքն՝ բժիշկների զեկավարությամբ նրանք բազմիցս շրջագայություն կատարեցին բակերում, ստուգեցին 2845 բնակելի շենք ու բակ, ըստ որում դրուժինիկուհիների հայտնաբերած հիվանդները անհապաղ փոխադրվեցին հիվանդանոց, իսկ կացարաններում անց կացվեցին սանիտարա-պրոֆիլակտիկ միջոցառումներ։

Մեկ ուրիշ դրուժին, որ սպասարկում էր զինվորական հոս-

պիտալին, ռազմա-սանիտարական գնացքների բեռնաթափմանը մասնակցեց 245 անգամ, այդ դրուժինի անդամները խնամեցին վիրավոր 380 մարտիկի, պատերազմի ընթացքում հերթապահեցին հոսպիտալներում 1200 անգամ։ Դրուժինը վիրավոր ու հիվանդ մարտիկների համար կազմակերպեց 26 երեկո և համերգ։ Նա ակտիվ մասնակցություն ցուցաբերեց հակահամաճարակային միջոցառումներին։ Մեկ ու կես տարվա ընթացքում ստուգեց 6500 բնակարան և բժիշկների ղեկավարությամբ ու ցուցումներով, անհրաժեշտ դեպքերում մշակման ենթարկեց վարակի օջախները։

Ռազմասանիտարական գնացքները դիմավորելու ու բեռնաթափելու և վիրավորներին սանիտարական մշակման ենթարկելու ու նրանց խնամելու գործում մասնակցել են.

	Դրուժինիկուհիներ	Կարմիր խաչի ակտիվիստներ
1942 թ.	5780 մարդ	884 մարդ
1943 թ.	2254 « »	175 « »
1944 թ.	1307 « »	215 « »
1945 թ. առաջին կիսամյակում . . .	1773 « »	186 « »
Ընդամենը	11114	1460

Հայրենական պատերազմի տարիներին Կարմիր Խաչի ընկերության կողմից պատրաստվել են նաև 342 սանիտարական հրահանգիչ և 1028 սանիտար, որոնց մեծամասնությունը մոբիլիզացվեց և գտնվում էր Գործող Բանակի շարքերում։

Առողջապահության օրգանների հետ համատեղ, Կարմիր Խաչի ընկերությունը լայն ծավալ տվեց մասսայական կադրերի պատրաստմանը։

Հայրենական պատերազմի տարիներին պատրաստվել է ըստ ՊԱՊ-ի նորմաների

1941 թ.՝ 68908 մարդ, 1942 թ.՝ 118411 մարդ, 1943 թ.՝ 84492 մարդ, 1944 թ.՝ 104176 մարդ և 1945 թ. առաջին կիսամյակին՝ 56497 մարդ։

Պատրաստվել է ըստ ԵՊՍՊ-ի նորմաների.

1941 թ.՝ 24334 մարդ, 1942 թ.՝ 28110 մարդ, 1943 թ.՝ 40678 մարդ, 1944 թ.՝ 46714 մ. և 1945 թ. առաջին կիսամյակում՝ 25393 մարդ։

Այսպիսով, պատերազմի ընթացքում ռեսպուբլիկայի շափահաս բնակչության և դպրոցական երիտասարդության կեսից ավելին դարձել էին ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի կրծքանշանակիրներ։

Ընկերությունը ուներ կազմակերպված սանիտարական պոստեր. 1941 թ.՝ 1606, 1942 թ.՝ 1209, 1943 թ.՝ 1769, 1944 թ.՝ 2476, 1945 թ.՝ 2882, սանիտարական կաղրային դրուժիններ — 1941 թ.՝ 124, 1942 թ.՝ 126, 1943 թ.՝ 156, 1944 թ՝ 172 և 1945 թ.՝ առաջին կիսամյակին՝ 170։

Կարմիր Խաչի սանձևավորումների հիմնական պրակտիկ աշխատանքը հանդիսանում էր տեղական հակաօդային պաշտպանության օրգաններին օգնություն ցույց տալը՝ լուսաքողարկումը կազմակերպելու, կետերում ու օբեկտներում օր ու դիշեր հերթապահություն սահմանելու աշխատանքներում։

Առողջապահության օրգանների հետ համատեղ, հակահամաճարակային աշխատանքներին Կարմիր Խաչի սանձևավորումների անդամներից մասնակցել են 5924 մարդ, որոնք կատարել են շրջագայություն բակերում և ստուգել 164090 բնակարան, հայտնաբերել 2163 ջերմոդ հիվանդներ, աջակցություն ցույց տվել հիվանդներին հիվանդանոցներում տեղավորելուն, երկարատև ղնման ենթարկել հիվանդ ունեցող ընտանիքների մնացած անդամների առողջական դրությունը, սանիտարական մշակման ենթարկել վարակի օջախները և այլն։

Սովետական մարդասիրության գաղափարներով էին ոգորված ռեսպուբլիկայի դպրոցականները, որի մասին է վկայում Կարմիր Խաչի անդամների և սկզբնական կազմակերպությունների թիվը անվայրէջք աճը, ինչպես և կարմիրխաչական աշխատանքների զգալի ծավալումը դպրոցում, պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում։

Կարմիր Խաչի ընկերության անդամների և դպրոցական ընկերակցական կազմակերպությունների թիվը ցույց են տալիս հետևյալ տվյալները.

№ №	Տարին	Կարմիր խաչի դպրոցական ս. կազմակերպութ-յունների թիվը	Կարմիր խաչի ընկերութ-յան անդամների թիվը
1.	1941 թ.	405	22256
2.	1942 թ.	254	15416
3.	1943 թ.	411	30112
4.	1944 թ.	507	38707
5.	1945 թ.	574	51533

Կարմիր խաչի դպրոցական կազմակերպություններում խոշոր աշխատանք էր ծավալված երիտասարդ սերնդին ըստ ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի նորմաների պատրաստելու և դպրոցականներին կարմիր-խաչական, շեֆական, առողջական և սանիտարա-լուսավորական աշխատանքներում ներգրավելու ուղղությամբ։

Պատերազմի վերջին սանիտարական պոստերի քանակը պատերազմի առաջին տարվա համեմատությամբ մեծացել էր երկու անգամ։ Դպրոցական սանիտարական պոստերը հետևում էին դպրոցների սանիտարական դրությանը, հսկում դպրոցականների սանիտարական և անձնական հիգիենայի կանոնների կատարմանը։

Դպրոցականներից պատրաստվել են.

Տարին	Ըստ ՊՍՊ-ի նորմաների	Ըստ ԵՊՍՊ-ի նորմաների
1941 թ.	—	23695
1942 թ.	—	12607
1943 թ.	—	22793
1944 թ.	38013	47294
1945 թ.	21994	25393

Հետևյալ օրինակը բնութագրում է դպրոցականների աշխատանքն ու մասնակցությունը Կարմիր Խաչի բարձր-մարդասիրական աշխատանքի մեջ։

Ա. Ս. Պուշկինի անվան դպրոցի Կարմիր Խաչի սկզբնական կազմակերպությունը պատերազմի ժամանակաշրջանում իր շարքերն ընդգրկեց ուսուցչական պերսոնալի և չափահաս աշակերտության 99%-ը։ Դպրոցը լավ համախմբված սանիտարական դրուժին և գործունյա սանիտարական պոստեր ուներ բոլոր դասարաններում։ Սանիտարական դրուժինը մասնակցում է ռազմա-սանիտարական գնացքների բեռնաթափմանը 32 անգամ, դպրոցականները իրենց ենթաշեֆ հոսպիտալին են նվիրում 471 կտոր գեղարվեստական գրականություն և նվիրաբերում 10000 ռուբլու արժողությամբ զանազան ընծաներ։ Դպրոցի կարմիրխաչական ակտիվը մասնակցում է սանիտարական շրջագայություններին բակերում, համապատասխան օգնություն կազմակերպում ճակատային-ների 535 երեխաների, հավաքում և Վորոշիլովգրադի մարզի ու Գոմել քաղաքի ենթաշեֆ մանկատներին, օգնելու ֆոնդն է ներդնում 13221 ռուբլի։ Դպրոցի կազմակերպությունը կազմակերպում է զրույցներ, զեկուցումներ և երեկոներ վիրավորների ու դպրոցականների համար։

Հայրենական պատերազմի առաջին տարիներին Ընկերությունը ուժեղացնում է ագիտացիոն-մասսայական աշխատանքը՝ դոնորական կադրեր հավաքագրելու ուղղությամբ։ Ընկերության ավելի քան 1000 անդամ կամավոր ձևով ցուցակագրվում է պահեստային դոնորների շարքերը։ Ռեսպուբլիկական արյան փոխներարկման կայանը, Կարմիր Խաչի կազմակերպությունների օգնությամբ, դոնորության համար ընտրում և հաշվառման է առնում ընկերության 754 անդամի։ Արյան փոխներարկման ռեսպուբլիկական կայանի առաջին իսկ պահանջով նրանք անհապաղ ներկայանում են, կամավոր ձևով և առանց հատուցման պահանջի տալիս իրենց արյունը վիրավորներին ու հիվանդներին։ Նրանցից շատերը պատերազմի ընթացքում տալիս են մի քանի սասնյակ լիտր արյուն՝ վիրավոր մարտիկների ու սպաների և քաղաքացիական բուժական հիմնարկությունների հիվանդների առողջությունը վերականգնելու համար։

Երկրի սանիտարական բարեկարգության ապահովման գործում ոչ փոքր խնդիր էր ընկնում նաև Կարմիր Խաչի ընկերության պատրաստած մասսայական կադրերի վրա։ Առողջապահության օրգանները իրենց տրամադրության տակ ստանում են պատրաստի սանիտարական ակտիվը և նրանց օգնությամբ անց են կացնում սանիտարա-առողջացման լայն աշխատանք ռեսպուբլիկայի քաղաքներում ու գյուղերում։ Պատրաստված մասսայական կադրերի աշխատանքը կրում էր այլազան բնույթ, նայած աշխատանքի տեղին ու օբյեկտին։ Արդյունաբերական ձեռնարկություններում Կարմիր Խաչի սանձնավորումները հսկում էին ցեխերի, հանրակացարանների, ճաշարանների, ջրամատակարարման սանիտարական դրությանը. ցույց էին տալիս բժշկական առաջին օգնություն, օգնում էին բժիշկներին սանիտարա-պրոֆիլակտիկ միջոցների կիրառման մեջ։ Կոլխոզներում նրանք մեծ ուշադրություն էին դարձնում բնակչության ջրամատակարարման, հասարակական հիմնարկությունների և կոլխոզային ֆերմաների բակերի սանիտարական հսկմանը, առաջին օգնություն էին ցույց տալիս խեղումների դեպքում և օգնում բժշկական անձնակազմին համաճարակային հիվանդացումների կանխման միջոցառումները անց կացնելիս։

Քաղաքներում, բնակելի շենքերում նրանք հսկում էին բնակարանների և բակերի սանիտարական դրությունը, վարակիչ հիվանդություններով տառապողներին հայտնաբերելու համար կատարում էին շրջագայություններ բակերում, օգնում բժշկական անձնակազմին առողջական միջոցառումների կիրառման գործում և այլն։

Հայրենական Մեծ Պատերազմի ժամանակաշրջանում, երբ առողջապահական կադրերի դգալի մասը հիմնականում աշխատում էր ռազմաճակատում, մի հանգամանք, որ հասցրեց նրանց նկատելի կրճատմանը թիկունքում, առաջին օգնություն և ինքնօգնություն ցույց տալու մեջ պատրաստված բնակչության լայն մասսաները, ի դեմս ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի հազարավոր կրծքանշանակիրների և Կարմիր Խաչի ընկերության կողմից պատրաստված կադրերը, ի դեմս ընկերության անդամների, ակտիվիստների, սանիտարական պոստերի, սանիտարական հասարակական տեսուչների, սանիտարական դրուժինիկուհիների, կոլխոզային և այլ բժշկական

քույրերի, չափազանց օգտավետ դեր խաղացին, ինչպես Թիկունքի սանիտարական բարեկարգությունն ապահովելու գործում, այնպես էլ ռազմական և քաղաքացիական բժշկական հիմնարկություններին աջակցելու գործում։ Վիրավորների ու հիվանդների բժշկասանիտարական սպասարկման, Հայրենական Պատերազմի հաշմանդամներին, ռեսպուբլիկա էվակուացրած բնակչությանը, որբ Երեխաներին օգնություն կազմակերպելու մեջ նրանց կատարած դերը հիրավի նշանակալից է։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՌ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՀԻՍԵՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը Հայրենական Մեծ պատերազմից հետո, ունենալով պատերազմական ժամանակաշրջանի հարուստ փորձ, վերակառուցում է իր աշխատանքները համաձայն խաղաղ ժամանակաշրջանի պահանջների և ակտիվորեն ձեռնամուխ է լինում պատերազմի հետևանքների շուտափույթ վերացման գործին։

Հայաստանի Կարմիր Խաչի սանպաշտպանական աշխատանքների հիմնական ձևերը ետպատերազմյան տարիներին հանդիսանում են.

1) Կարմիր Խաչի սկզբնական կազմակերպությունների ամրապնդումը և նոր անդամների ներգրավումը ընկերության մեջ, 2) մասսայական սանիտարական կադրերի՝ ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի կրծքանշանակիրների պատրաստումը, 3) պատերազմական ժամանակաշրջանում կազմալուծված սանիտարական դրուժիններին փոխարեն՝ նոր դրուժինների կազմակերպում ու պատրաստումը, 4) սանիտարական նոր պոստերի կազմակերպումը հնարավորին չափ մեծ քանակության օբեկտներում։ 5) Սանիտարական պոստերի և դրուժինների ամրապնդումն ու կարգավորումը, 6) բժշկական քույրերի պատրաստումը, 7) կոլխոզային բուժական պունկտերի կազմակերպումը և բուժական-սանիտարական օգնության ուժեղացումը կոլխոզներում, 8) մանկապտների, Հայրենական պատերազմի հաշմանդամների, զոհված մարտիկների երեխաների ու ընտանիքների նկատմամբ շեֆական աշխատանքի ուժեղացումը։

Կարմիր Խաչի կազմակերպության ամրապնդմանը, ինչպես և ընկերության անդամների և սկզբնական կազմակերպությունների աճին զգալիորեն օգնեցին բոլոր սկզբնական կազմակերպությու-

ների հաշվետու ընտրական ժողովները և ընկերության անդամների վերահաշվառումը, որոնք կատարվեցին պատերազմի երկարատև ժամանակաշրջանից հետո, 1946 և 1947 թ.թ.։ Քննադատությունը և ինքնաքննադատությունը հաշվետու ընտրական ժողովներում ազդակ հանդիսացան աշխատանքները առավել բարձր աստիճանի հասցնելու, եռապատերազմյան ժամանակաշրջանի խնդիրները ըստ արժանվույն կատարելու, կազմակերպությունների ակտիվ անդամների թիվը շատացնելու և սանիտարա-պաշտպանական աշխատանքներին մեծ ծավալ հաղորդելու համար։

Զգալիորեն բարելավվում է նաև շրջանային կոմիտեների նախագահների կազմը։ Բազմաթիվ կազմակերպություններում ընտրվում են նոր, առավել գործունյա, փորձառու աշխատակիցներ, մեծ մասամբ Կարմիր Բանակից զորացրվածների շարքերից։

Ընկերության սկզբնական կազմակերպությունների և անդամների աճը ցույց են տալիս հետևյալ թվերը.

Տարիները	Սկզբնական կազմակերպութ. թիվը	Ընկերութ. անդամների թիվը
1945 թ. (հունվարի 1-ին)	2632	137901
1946 թ. »	2975	177259
1947 թ. »	3274	213823
1948 թ. »	3478	237722

Ընկերության կողմից կատարված կուլտուրական և սանիտարա-լուսավորական աշխատանքը, ամրապնդելով կազմակերպությունը, միաժամանակ հնչեցնում է նրա խնդիրների կատարումը։ Սանլուսավորական և սանիտարա-պաշտպանական զանազան թեմաներով Կարմիր Խաչը կազմակերպել է.

1945 թ. — 1447 դասախոսություն-զեկուցում,
1946 թ. — 3303 » »
1947 թ. — 5247 » »

Ամեն տարի կենտրոնական և տեղական ռադիոյի միջոցով կազմակերպվում են ռադիո-հաղորդումներ, խոշոր օբեկտներում հրատարակվում են պատի թերթեր, ցուցադրվում են կինոֆիլմեր, որոնք զուգակցվում են սանիտարա-լուսավորական թեմաներով

լուրջ Կարմիր Խաչի ակտիվ անդամների, մեծ մասամբ բժշկական աշխատողների ելույթներով, կազմակերպվում են սանիտարական անկյուններ և այլն։

1947 թ. Կարմիր Խաչի ընկերության կողմից կազմակերպվում է երկու ցուցահանդես, որոնցից մեկը շարժական, որ արտացոլում էր ընկերության գործունեությունը Հայրենական պատերազմի տարիներին ու հետպատերազմյան ժամանակաշրջանում և մյուսը՝ Պիոներ Պալատի համար, որը արտացոլում էր սանպաշտպանական աշխատանքը դպրոցում և մանկական տրավմատիզմի դեմ պայքարելու հարցերը։ Ընկերության կողմից 1947 թվի վերջին հրատարակվում և տարածվում է 6 լոզունգ (40000 օրինակով) քաղցկեղային հիվանդացումների և մանկական տրավմատիզմի դեմ պայքարելու շուրջ։

Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը հետպատերազմյան ժամանակաշրջանում անհրաժեշտ ուշադրություն է դարձնում Հայրենական պատերազմի հաշմանդամների, որբացած ընտանիքների, զոհված մարտիկների երեխաների և մանկատների նկատմամբ շեֆական օգնություն կազմակերպելու վրա։

Շեֆական օգնությունը դրսևորվում է՝ 1) որբացած ընտանիքներին ու պատերազմի հաշմանդամներին աշխատանքային օգնություն ցույց տալով՝ նրանց տնամերձ հողամասերի մշակման և բնակարանների վերանորոգման գործում, 2) հաշմանդամների առողջության ու աշխատունակության վերականգնմանը և նրանց աշխատանքի տեղավորվելուն աջակցելով, 3) արդյունաբերական ապրանքներով, հագուստով, կոշկեղենով, դրամական միջոցներով նյութական օգնության ցուցաբերմամբ, 4) զոհված մարտիկների և որբացած ընտանիքների երեխաների առողջությունը ամրապնդելու համար, սանատորիաներ ուղարկելով, 5) առողջապահական և լուսավորական օրգաններին համագործակցելով՝ մանկատներում սանիտարական միջոցառումներ անցկացնելու և Կարմիր Խաչի ենթաշեֆ քսաներկու մանկատների երեխաների դաստիարակման գործը կազմակերպելու մեջ։

1946 և 1947 թ. թ. Կարմիր Խաչի ընկերությունը իր ենթաշեֆ մանկատներին և հաշմանդամներին բաց է թողել 64351 ռուբլի արժողությամբ մթերքներ, հագուստեղեն և կոշկեղեն, որոնք հավաքել են սկզբնական կազմակերպությունները և շրջանային կո-

միտեները։ 1947 թ. սանատորական բուժման է ուղարկվել 15 երեխա, 1948 թ.՝ 25 երեխա և Հայրենական պատերազմի 15 հաշմանդամ, 35 հաշմանդամ, աշխատունակ դառնալու նպատակով, սովորել են հաշվապահական-հաշվային գործը։

1947 թ. Կարմիր Խաչի ընկերությունը ակտիվորեն ներգրավվում է հակաքաղցկեղային պայքարի մեջ։ Ըստ այն պլանի, որը կազմվել է Առողջապահության մինիստրության և Ռենտգենոլոգիայի ու օնկոլոգիայի ռեսպուբլիկական ինստիտուտի հետ համատեղ, ընկերության կազմակերպությունների մեծամասնությունը 1946, 1947 և 1948 թ. թ. մասնակցում է հակաքաղցկեղային միջոցառումների կիրառման գործին։ Կարմիր Խաչի շրջանային կոմիտեներին առընթեր կազմակերպվում են հակաքաղցկեղային հանձնաժողովներ, խոշոր սկզբնական կազմակերպություններին առընթեր՝ հակաքաղցկեղային խմբեր։ Հանձնաժողովների և խմբերի անդամների հետ անց են կացվում քաղցկեղի դեմ պայքարելու պարապմունքներ, 8-ժամյա ծրագրով։ Շրջանային կոմիտեների հակաքաղցկեղային հանձնաժողովները սկզբնական կազմակերպությունների, սանիտարական պոստերի, դրուժինիկուհիների և կոլխոզային քույրերի միջոցով բնակչության մեջ լայնորեն ծավալում են Առողջապահության մինիստրության և Կարմիր Խաչի հրատարակած հակաքաղցկեղային լոզունգները, պլակատները, բրոշյուրները։ 1947—1948 թ. թ. Կարմիր Խաչի կազմակերպությունները ակտիվորեն օգնում են Ռենտգենոլոգիայի և Օնկոլոգիայի ինստիտուտին՝ նախաքաղցկեղային հիվանդներ հայտնաբերելու նպատակով խոշոր օբեկտներում բնակչության կազմակերպված խմբերին պրոֆիլակտիկ-բժշկական ընդհանուր քննության ենթարկելու գործում։ Կոլխոզային բուժական պունկտերի քույրերը համապատասխան սանիտարա-լուսավորական աշխատանք են կատարում կոլխոզնիկների ու կոլխոզնիկուհիների մեջ և քաղցկեղային հիվանդությամբ կասկածելի թվացողներին անհապաղ ուղարկում են բժշկական տեղամաս կամ շրջանային հիվանդանոց։ Երևան քաղաքի Կարմիր Խաչի ռայոնական կոմիտեի նախաձեռնությամբ, հաճախակի, կինոսեանսներից առաջ, անց է կացվել զբույց՝ «Պայքար քաղցկեղային հիվանդացումների դեմ» թեմայով։

Բացի այդ, ռեսպուբլիկայի զանազան շրջաններում տեղի է ունեցել 1828 դասախոսություն, 72925 ունկնդիրների ընդգրկ-

մամբ և 1815 զրույց, 35180 ունկնդիրների ընդգրկմամբ։ Կազմակերպվել է 84 ռադիո-նյութ, ռեսպուբլիկական և տեղական մամուլում տպագրվել է 270 հոդված։ Սանիտարական պոստերի, դրուժինիկուհիների, կոլխոզային բուժքույրերի և Կարմիր Խաչի ակտիվիստների կողմից տարածվել է 4739 բրոշյուր, 13821 լոզունգ, 2006 հուշաթերթ, կազմակերպվել է հակաքաղցկեղային պայքարի 253 անկյուն։ 1947 թ. վերջին հրատարակվել է երեք հակաքաղցկեղային լոզունգ 20000 օրինակով։ Կարմիր Խաչի ակտիվիստները մասնակցել են նաև տներում գտնվող հիվանդների նկատմամբ խնամք տանելուն։

1946 թ. չորրորդ եռամսյակում Կարմիր Խաչի Կենտրոնական Կոմիտեին առընթեր կազմակերպվել է մանկական տրավմատիզմի դեմ պայքարող հանձնաժողով՝ ռեսպուբլիկական ավտոտնտեսության, առողջապահական և լուսավորական օրգանների ներկայացուցիչների մասնակցությամբ։ Այդ հանձնաժողովն է գլխավորում ու ղեկավարում մանկական տրավմատիզմի դեմ մղվող պայքարը ամբողջ ռեսպուբլիկայում։ Կարմիր Խաչի ակտիվի կողմից տարածվել է մանկական տրավմատիզմի դեմ պայքարելու շուրջ 50000 հանրամատչելի բրոշյուր ու թերթիկ։ Արդյունաբերական խոշոր օբեկտների սանիտարական լուսավորության տների հետ համատեղ, ցուցադրվել են մանկական տրավմատիզմի շուրջ կինոնկարներ 45 անգամ, կազմակերպվել է 202 դասախոսություն, 23000-անոց լսարանով։ 1947 թ. պատրաստվել է ՊՍՊ-ի 150 կրծքանշանակիր տրանսպորտային աշխատողներից—ավտոյի, ավտոբուսի, տրամվայի մեքենավարներից։

Կարմիր Խաչի ընկերության կողմից հրատարակվել և տարածվել է 3 թերթիկ, 20000 օրինակով, մանկական տրավմատիզմի դեմ պայքարելու շուրջը։

Խոշոր օգուտ բերեցին պատերազմից հետո կոլխոզներում Կարմիր Խաչի կազմակերպած կոլխոզային քույրական—բժշկական պունկտները, հատկապես կոլխոզների բուժական և սանիտարա-պրոֆիլակտիկ սպասարկման գործում։ Ռեսպուբլիկայի բոլոր կոլխոզների քառորդ մասում կազմակերպված են կարմիրխաչական կոլխոզային քույրական բուժպունկտեր։ Բուժպունկտների քույրերը բուժպունկտում, գյուղում, կոլխոզային ֆերմաներում և դաշտում վարած իրենց աշխատանքով ապահովեցին կոլխոզների աշխատ-

րի զգալի տնտեսում և նպաստեցին ռեսպուբլիկայի գյուղատնտեսության բարձրացման ընդհանուր գործին։

Կոլխոզային քույրական—բուժական պունկտերի աշխատանքը ցույց է տալիս հետևյալ աղյուսակը.

Աշխատանքի տեսակները	1945 թ.	1946 թ.	1947 թ.
Առաջին օգնություն է ցուցաբերված	22704 անգամ	47500 անգամ	60164 անգամ
Բժշկական ամբուլատորիա է ուղարկված	2803 հոգի	6674 հոգի	10964 հոգի
Բուժական կետեր է ուղարկված	5036 »	8566 »	14751 »
Հիվանդանոցներ է էվակուացված	783 »	3464 »	3446 »
Մանդատներ է էվակուացված	473 »	1543 »	1930 »
Հսկողության տակ է առնված՝ հղիներ և ծննդկաններ	880 »	2103 »	3330 »
Հսկողության տակ է առնված՝ երեխաներ	2309 »	8340 »	5647 »
Նայված են երեխաներ կոլխոզներում և մասուրներում . .	7812 »	11523 »	9188 »
Քննված են աչքեր, խրճիթներ, բակեր	12745 հատ	28438 հատ	23844 հատ
Քննված են ջրհորներ . .	716 »	5805 »	3093 »
Քննված են այլ օբյեկտներ . .	1107 »	2008 »	1692 »
Սանիտարական մշակում է կատարված	1198 անգամ	10734 անգամ	4853 անգամ
Կազմակերպված են զատախոսություններ և զրույցներ . .	888 »	2109 »	2983 »
Պատրաստված են ՊՍՊ-ի կրծքանշանակիրներ . . .	2422 հոգի	10829 հոգի	13740 հոգի
Պատրաստված են ԵՊՍՊ-ի կրծքանշանակիրներ . . .	1363 »	5019 »	7393 »

Աղյուսակում բերված տվյալներով չի սպառվում կոլխոզային բժշկական պունկտերի ամբողջ աշխատանքը։ Այն բուժպունկտերը, որոնք գտնվում են մալարիայով տառապելու տեսակետից բարենպաստ շրջաններում, տրոպիկական կայանի և տեղամասային բժիշկների ղեկավարությամբ, կատարել են հակամալարիկ աշխատանքների ամբողջ կոմպլեքսը։ Բուժ-պունկտերի քույրերը անհրաժեշտ դեպքերում կատարել են մասսայական պրոֆիլակտիկ պատվաստումներ ընդդեմ վարակիչ հիվանդու-

թյունների, ինչպես և ստեղծել են Կարմիր Խաչի սկզբնական կազմակերպություններ, այդ կազմակերպությունների մեջ են ներգրավել հնարավորին չափով մեծ քանակությամբ կոլխոզնիկներ, կատարել են կարմիրխաչական սանիտարա-պաշտպանական աշխատանք և բոլոր միջոցառումները՝ բնակելի կետերի սանիտարական կուլտուրան բարձրացնելու համար։ Կոլխոզային բժշկական պունկտերում աշխատող բոլոր բուժքույրերը անցել են վերապատրաստման դասընթացներով, որոնք կազմակերպվել են շրջաններում և Կարմիր Խաչի Կենտրոնական Կոմիտեի ուսումնական կոմբինատին առընթեր։ Կոլխոզային բուժկետերի բժշկական քույրերի, տեղամասերի բժիշկների և առողջապահության շրջանային բաժինների վարիչների 1946 և 1947 թ. թ. միջշրջանային և ռեսպուբլիկական հավաք-խորհրդակցություններում պարզվեց կոլխոզներում քույրերի կատարած սանպրոֆիլակտիկ, բուժական և սան-լուսավորական չափազանց գործունյա, օգտավետ և էֆեկտիվ աշխատանքը։ Բոլոր ելույթ ունեցող բժիշկները նշեցին կոլխոզային բուժական պունկտերի հմուտ, գործին տեղյակ ձևով կատարած աշխատանքը, որով նրանք իրավամբ հանդիսանում են գյուղում կատարվող բոլոր սանիտարա-առողջական միջոցառումների հենարանն ու իրագործողը։

1946 և 1947 թ. թ. Սովետական Հայաստան ներդաղթեցին աշխարհով մեկ սփռված մեծ քանակությամբ արտասահմանյան հայեր։ Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության աշխատանքը հանդիսացավ — աջակցել առողջապահության օրգաններին՝ ռեսպուբլիկա ժամանած և նրա տարբեր քաղաքներում ու շրջաններում տեղավորված արտասահմանյան հայության սանիտարա-պրոֆիլակտիկ և բժշկական սպասարկումը կազմակերպելու գործում։ Մասնավորապես 1946 թ. մի քանի շրջաններում առողջապահության օրգանները կարմիրխաչական կազմակերպությունների հետ համատեղ, անհրաժեշտությունից մղված բազմիցս սանիտարական մշակման ենթարկեցին ավելի քան 13500 մարդու։ 1947 և 1948 թ. թ. Կարմիր Խաչի ընկերությունը աշխատանք ծավալեց արտասահմանյան հայերին Կարմիր Խաչի կազմակերպությունների մեջ ներգրավելու և նրանց մեջ կարմիրխաչական, սանպաշտպանական աշխատանք կատարելու ուղղությամբ։ Արտասահմանյան կարիքավոր հայերին ընկերությունը ցույց տվեց նյու-

թական օգնություն և օգնեց նրանց աշխատանքի տեղավորելու գործին։

Նապատերազմյան ժամանակաշրջանում շարունակվեց աշխատանքը բժշկական քույրերի, սանիտարական դրուժինիկուհիների և բնակչության մասսայական սանիտարա-պաշտպանական կազմերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ։

Պատրաստվել է.	1945 թ.	1946 թ.	1947 թ.
Ընդհանուր բնակչություն՝ ըստ ՊՍՊ-ի նորմաների	50167	51618	31882
Դպրոցականներ՝ ըստ ՊՍՊ-ի նորմաների .	23867	25837	19104
Դպրոցականներ՝ ըստ ԵՊՍՊ-ի նորմաների .	34011	25157	16145
ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի տեսուչներ . . .	90	126	830
Մասնագիտացած ակտիվ . . .	—	—	140
Սանիտարական ակտիվ . . .	—	—	110
Հակաքաղցկեղային ակտիվ . . .	—	—	1353
Հասարակական սանտեսուչներ . .	—	690	1190
Շրջկոմների նախագահներ . . .	20	31	27
ՀՕՊ-ի աշխատողներ	—	53	27
Սկզբնական կազմակերպությունների նախագահներ	1033	1327	1492
Սանիտարական պոստերի պետեր . .	821	851	965

Բացի վերոհիշյալներից անց է կացվել նաև բժշկական քույրերի, սանիտարական դրուժինիկուհիների պլանային պատրաստում, սանիտարական պոստերի և կադրային ու դպրոցական սանդրուժինների վարժական ուսուցում և այլն։

Ստալինյան նոր հնգամյակի առաջադրած խնդիրները պարտավորեցնում են Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությանը ըստ դալիորեն լայնացնել և բարելավել իր գործունեությունը հետևյալ ուղղություններով։

1) Առողջապահական օրգանների հետ միասին, ակտիվ մասնակցություն ցուցաբերել վարակիչ հիվանդությունների նվազեցման և լիկվիդացման միջոցառումներին, առանձնապես մալարիայի դեմ

մղվող պայքարին, ձեռնարկություններում ու կոլխոզներում հիվանդացումների և տրավմատիզմի նվազեցման գործին, տուբերկուլյոզի, քաղցկեղի և մանկական տրավմատիզմի դեմ մղվող պայքարին։

2) Բժշկական քույրերի, սանիտարական դրուժինիկուհիների և մասսայական-պաշտպանական կադրերի պատրաստման որակի բարձրացում, չափահաս բնակչության ներգրավում ՊՍՊ-ի խմբակներում, դպրոցականներին՝ ԵՊՍՊ-ի խմբակներում։

3) Գյուղատնտեսության բարձրացմանն ու զարգացմանը նպաստող և կոլխոզներում աշխատանքի տնտեսմանը օժանդակող բժշկական կոլխոզային պունկտերի ամրապնդում ու նրանց գործունեության բարելավում։

4) Հայրենական Պատերազմի հաշմանդամների, Սովետական Բանակի զոհված մարտիկների որբացած երեխաներին ու ընտանիքներին հասարակական օգնություն կազմակերպելու հետագա ծավալում ու բարելավում։

5) Կարմիրխաչական աշխատանքների ուժեղացում դպրոցներում և ուսումնարաններում՝ երիտասարդ սերնդի մեջ սովետական հումանիզմ և սանիտարական-կուլտուրական հմտություններ սերմանելու նպատակով։

Ժողովրդատնտեսական և քաղաքական այն խնդիրները, որ Ստալինյան նոր հնգամյակում առաջադրվել են պարտիայի և կառավարության կողմից, ոգեշնչում են սովետական ամբողջ աշխատավորությանը՝ մեր Սոցիալիստական Հայրենիքի հզորության և հետագա զարգացման իրենց ռեալ հեռանկարներով։ Սովետական ժողովուրդը, Լենինի-Ստալինի պարտիայի գլխավորությամբ, աննախադեպ խանդավառությամբ ու հաջողությամբ կենսագործում են այդ խնդիրները կյանքում։

Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերությունը, որ համախմբում է ավելի քան 200 հազար անդամ, որ ունի բարձր մարդասիրական աշխատանքի տասնյակ տարիների փորձ, յուրացրած Սովետական Կարմիր Խաչի լավագույն տրադիցիաները, հարստացած Հայրենական Մեծ պատերազմի փորձով, անկասկած պատվով կկատարի Ստալինյան նոր հնգամյակի առաջադրած խնդիրները։

ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
23	4 ներքևից	152556	15256
36	5 վերևից	պլանչափ	պլանաչափ
38	21 „	նրաց	նրանց
53	9 „	ընտրությունների	Ընկերությունների
55	4 ներքևից	ֆունկցիների	ֆունկցիաների
62	7 „	104	1004
66	13 վերևից	51,110 բազկաթոռով	51, 110 բազկաթոռով
„	20 „	4279 „	42, 79 „
„	25 „	42176 „	42, 176 „
67	1 „	46218 „	46, 218 „
78	6 „	բաղմա-սանլիստալական	ուղղմա-սանլիստալական
82	4 ներքևից	ՊԱԳ-ի Նորմաների	ՊՍՊ-ի Նորմաների
85	16 վերևից	մանկատներին, օգնելու	մանկատներին օգնելու

ՎՖ 02779: Պատվեր 129: Տիրաժ 6000:
Հանձնված է արտադրության 12—V 1949 թ.
Ստորագրված է տպագրության 10—VII 1949 թ.
Տպագրական 6 մ. հեղինակային 5,5 մ.

Հայպետհրատարակչության վարչության Դրքի
Երևան, Տերյան 91, 1949 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220025024

ԳԻՆԸ 5 Ռ. 25 Կ.

534

A II 25024